


ԱԳԻՆ Ժ. ՏԱՐԻ 1971 ՅՈՒՆԻՍ ԹԻՒ 6

digitised by A.R.A.R.@

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն


Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ . . . . . . . . . Աշոտ Ողորմած

Ա. ԳԱՌՕՆԷ . . . . . . . . . . . . . Լէյլին ու Մէջնուն

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ . . . . . . . . . . . . Սէրը ցանկապատերի տակ

Բ. ԿՌԱՆԵԱՆ . . . . . . . . . . . . . Նկարիչը եւ արեւը

Յ. ՋՈՐԵՑԻ . . . . . . . . . . . . . Հայկական ուղեւորավէպ

* * * «Ի՛մ տառապած, ի՛մ փառապանծ»

Վ. ԹԵՔԵԱՆ . . . . . . . . . . . . . Գոյութենապաշտ փիլիսոփայութեան ընկերային ներկցորդութիւնը

Բ. ԵՂԻԱՅԵԱՆ . . . . . . . . . . . . Գրագէտը Խրիմեան Հայրիկի մէջ

Պ. ԱԼԱՀԱՅՏՈՅԵԱՆ . . . . . . . . Պեթհովէնի «3 ռն»երը

Կ. ՓՕԼԱՏԵԱՆ . . . . . . . . . . . . Զրոյց՝ Բ. Թաշեանի հետ

Մ. ԷՍԼԻ . . . . . . . . . . . . . . Էօժէն Իոնեսքօ — Թատրոն եւ հակաթատրոն


digitised by A.R.A.R.@

# Բագին

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ. ՏԱՐԻ, ԹԻՒ 6 ՅՈՒՆԻՍ 1971 ՊԷՅՐՈՒԹ



ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ


## ՀՐԱՇԱԼՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

— Ամէն մարդ կ'ուզէ քաղաքացի ըլլալ, ինչո՞ւ քաղաքացի մըն ալ չուզէ մարդ ըլլալ։

— Սխա՛լ, մեր տղայ։ Դուն քաղաքացի ես բոլոր մարդկանց մէջ, ու մարդ ես բոլոր քաղաքացւոց մէջ.

# ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ՝

## ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ ԱՐՔԱՅ

Սրտագին նուէր՝ մեծ բարեկամ՝

ՄՈՒՇԵՂ ՃԻՒՐՃԵԱՆԻՆ

*Տիպար արքայ Աշոտ Գ. Բագրատունի, մականուանեալն Ողորմած, թագաւորեց քսանըչորս տարի* (953–977)։

*Եղաւ նշանաւոր իբրեւ ռազմիկ, իբրեւ կառավարող, իբրեւ շինող, այլ մանաւանդ իբրեւ խաղաղասէր եւ ողորմած։*

*Իր հոգիին հսկայ մարդասիրութիւնն ու ազգասիրութիւնը՝ ընդհանուր ազգաց պատմութեանց մէջ իսկ կը մնան անհաւասարելի։*

*Եղաւ իրական ու պատուական թագաւոր, հայր բարերարի՝ բոլոր բորոտներուն, գոնջերուն, զարերուն, կոյրերուն, կաղերուն, կուզերուն, անկարներուն, տկարներուն, ցաւագարներուն։*


digitised by A.R.A.R.@

*
**

Աբաս ունէր երկու որդի — Աշոտ ու Մուշեղ։

Աբասի մահէն ետքը, Բագրատունիներու աշխարհը խուժեցին ասպատակներ, կողոպտելով քաղաքներն ու գիւղերը եւ ճնշելով ժողովուրդը, որ ապաստանեցաւ ամայի վայրերու մէջ, նաեւ լեռներու վրայ։

Աշոտ համախմբելով երկու հազար այրուձի, սկսաւ մաքրել Շիրակը աւազակներէ։ Երեք ամսուան ընթացքին, աջակցութեամբ քանի մը նախարարներու, ջարդեց կամ փախցուց այդ մեկնաղէնները, հանդէս բերելով քաջութեան դրուագներ։ Իր յաջողութիւնը պատճառ եղաւ, որ զանազան կողմերէ հայեր խմբուին իր բոլորտիքը, ստեղծելով բանակ մը, որ հասաւ յիսուներեք հազարի։ Աշոտ սպարապետութիւնը յանձնեց Մարզպետունիի որդւոյն, որ եռանդով լծուեցաւ գործի, ու բարձրացուց բանակին թիւը ութսուն հազարի։

Հայ աւագները տեսնելով Աշոտին իննամեայ պայազատութիւնը, եւ գնահատելով անոր ռազմական, ինչպէս նաեւ կառավարական կարողութիւնները, գլխաւորութեամբ եւ հաճութիւնով Անանիա Կաթողիկոսին, որոշեցին զինքը պսակել թագաւոր։ Հրաւիրեցին աղուաններու Յովհաննէս հայրապետը ու անոնց հայկազուն արքայ Փիլիպոսը։ Եւ Անի քաղաքին մէջ, ի ներկայութեան Շիրակէն ժամանած քառասուն եպիսկոպոսներու, նաեւ բազմահոյլ նախարարներու, օծեցին գահաժառանգը թագաւոր՝ Աշոտ Երրորդ անունով։

Բագրատունեաց նոր մայրաքաղաք ընտրուեցաւ Անի։

*
**

Մոլտի Բիլլահի ամիրապետին նախկին սպարապետը, Համտուն, որ բռնագրաւելով Աղձնիքը՝ ինքզինքը անկախ հռչակած էր, լսելով Աշոտի թագաւորանալը, առաքեց պատգամաւորներ, պահանջելով ծանր հարկ։ Աշոտի մերժումին պատճառով, Համտուն արշաւանք մը կազմակերպեց իր ամբողջ զօրութիւնով։ Բագրատունի արքան եւ իր սպարապետը անցան հայ բանակին գլուխը եւ հարուածեցին թշնամին։ Կառազի կռուին մէջ, Աշոտ յաջողեցաւ որսալ եւ սպաննել Համտունը, ցիրուցան ընելով մնացորդները անոր բանակին։

Ամիրապետը լսելով Աշոտ Գ.ի քաջագործութիւնը, իր հակառակորդին մահուամբ պատժուիլը, մնաց մեծապէս գոհ, եւ առաքեց հայ արքային՝ մեծամեծ ընծաներ, ու թագով մը կրկին թագադրեց զայն, «Շահի Արմէն» (Թագաւոր Հայոց) տիտղոսով։

Աշոտի եղբայրը, Մուշեղ, Կարսի մէջ կը պսակուի թագաւոր, իր կուսակիցներուն կողմէ, ունենալով Վանանդը, իբրեւ աշխարհ։ Աշոտ Գ. ո՛չ միայն չընդդիմացաւ, այլեւ՝ ընդհակառակն, իր եղբայրը շնորհաւորեց, տալով իր հաւանութիւնը այդ մանրանկար թագաւորութեան։ Նախընտրեց փոքր թագաւորութեանց ստեղծումը, յանուն խաղաղութեան, փրկելու համար երկիրը նախարարներու խռովութիւններէն։ Այսպէս, ստեղծուեցաւ Կարուց թագաւորութիւնը (962), որ տեւեց հարիւրերեք տարի։

Այդ շրջանին Հայաստանի մէջ, Աշոտ Գ.ի ու Մուշեղի արքայութիւններէն զատ, գոյութիւն ունեցան այլ արքայութիւններ ալ։

digitised by A.R.A.R.@

Համազասպ Արծրունիի մահէն ետք (968), իր տէրութիւնը բաժնուեցաւ երեք զաւակներուն միջեւ: Աշոտ Սահակ Արծրունի թագաւորեց մեծագոյն մասին Վասպուրականի: Գուրգէն Խաչիկ թագաւոր եղաւ Անձեւացեաց, իսկ Յովհաննէս Սենեքերիմ՝ Ռշտունեաց:

Կը ստեղծուի նաեւ Սիւնեաց Թագաւորութիւնը, 970ին. առաջին գահակալը կ'ըլլայ Սմբատ Սիւնի, որ բարեպաշտ էր ու քաջարի: Այս թագաւորութիւնը կը կոչուի նաեւ այլ անուններով — Սիսական, Բաղաց եւ Կապանի (Թագաւորանիստ ոստաններուն անուններով), Փառիսոսի (համանուն գաւառին անունով) Թագաւորութիւն:

Հայաստանի մէջ գոյութիւն կ'ունենան երեք Բագրատունի, երեք Արծրունի եւ մէկ Սիւնի արքաներ: Անկախ կ'ըլլայ նաեւ Լոռին 982ին, ուր կ'իշխեն երրորդ ճիւղի Բագրատունիները, այսինքն՝ Կորեկեանները: Այս եօթը հայ թագաւորներուն վրայ եթէ աւելցնենք Աղուանից Փիլիպոս հայկազուն արքան եւ նոյն ժամանակամիջոցի Բիւզանդիոնի գահուն վրայ գտնուող Յովհաննէս Զմշկիկ հայկազուն կայսրը, հայ գահակալներուն թիւը կը բարձրանայ իննի: Կը տեսնուի, որ թագաւորելը, այն օրերուն, եղած էր... հայկական մասնագիտութիւն, մենաշնորհ:

Հայաստանի մէջ ստեղծուած այդ բազմաթիւ անկախութեանց պատճառով է որ, ի վերջոյ, Շիրակի տէր ու Անիին մայրաքաղաք ունեցող Բագրատունի թագաւորները կը կոչուին «շահն շահ» (արքայից արքայ): Բագրատունիները գոհացան այդ պատուանունով, եւ նուիրուեցան աշխարհաշինութեան: Անոնք ամէն բանէ առաջ, կերտեցին ու պահպանեցին, որքան կարելի էր, ներքին եւ արտաքին խաղաղութիւնները, իրենց բոլոր բարիքներով:

Աշոտ Գ., մեկնազէններու եւ Համտունի դէմ մղած խաղմերէն զատ, միացաւ Յովհաննէս Զմշկիկ հայկազուն կայսրին, երեսուն հազարնոց բանակով, ահարեկելով Համարացիները, Տիգրիսի շրջանին մէջ ու գնաց մինչեւ Երուսաղէմ ու զայն պաշարեց:

(Երուսաղէմը ոչ—քրիստոնեաներէ ազատագրելու ձեռնարկը, որ ծանօթ է Խաչակիրներու անունով, մեծ սխալով մը կը կարծուի, թէ ծնունդ առած է Ֆրանսայի մէջ, 1096ին Գուլոնի Կոտֆրուա եւ Գուլոնիէի Պօտուանի եղբայրներուն կողմէ, իբրեւ առաջին խաչակրութիւն: Մինչդեռ առաջին խաչակրութիւնը, յանուն ազատագրութեան Երուսաղէմի, ծնունդ առած է Բիւզանդիոնի հայազգի կայսեր Հերակլէսի կողմէ, աւելի քան վեց դար առաջ, առաջին խաչակրութիւն կոչուածէն:

Երկրորդ խաչակրութիւնը կատարուած է 975ին, դարձեալ հայազգի Յովհաննէս Զմշկիկ կայսեր կողմէ Բիւզանդիոնի, որուն մասնակցեցաւ Աշոտ Ողորմած, իր զատ հայկական բանակով, ու պաշարեց Երուսաղէմը. սակայն, տեղեկանալով՝ որ խռովութիւն սկսած է Անիի մէջ, ստիպուեցաւ հրաժարիլ պաշարումէն, փութալով մայրաստան:

Ուրեմն իբրեւ առաջին ճանչցուած 1096ի Ֆրանսական խաչակրութիւնը՝ իրականին մէջ երրորդն էր):

Այս որբահոգի, այս իմաստուն թագակիրը նուիրուեցաւ բարեգործութեան ու բարեբարութեան, խիստ մնալով սակայն, ապստամբ նախարարներուն հանդէպ:

Երկրին անդորրութիւնը պահ մը խանգարուեցաւ Անանիա Կաթողիկոսին մահով (965): Վախճանեալ հայրապետին յաջորդեց Վահանիկ, ուստր Բաղայ Ջիւանշիր իշխանին, որ Հայոց անսիրելի եղաւ իր քաղկեդոնականու-

digitised by A.R.A.R.@

թեամբ։ Ստիպուեցաւ փախչիլ, ապաստանեցաւ մօտը Աբուսահլ-Համազասպ Արծրունի արքային Վասպուրականի (969)։

Աշոտ Գ. հայրապետական աթոռին վրայ բարձրացուց Ստեփաննոս Եպիսկոպոսը, վանահայր Սեւանի։ Երկու քահանայապետները սկսան զիրար նզովել, բանադրել իրենց հակառակորդները։ Կրօնական բանավէճ մը ծայր առաւ, անախորժութիւններով անխուսափելի. Ստեփաննոս Գ. Կաթողիկոսը, դարմանելու համար վէրքերը վէճերուն, ուղեւորուեցաւ Վասպուրական։ Համազասպ եւ Վահանիկ մերժեցին տեսնուիլ Ստեփաննոսի հետ, եւ զայն բանտարկել տուին Աղթամար կղզիին մէջ։ Մօտաւորապէս երկու տարի անցնելէ ետք, այդ թշուառական թշնամութիւնը վերջացաւ, երբ Ստեփաննոս եւ Վահանիկ կաթողիկոսները կաթուածահար մեռան, միեւնոյն տարին (971)։

Եօթը վեհապետ ունեցող երկրի մը համար, երկու վեհափառ ունենալը... շատ չէր։

***

Աշոտ Գ. ամրացուց իր քաղաքները, մասնաւորապէս Անին, շինել տալով հրաշարուեստ ներքին պարիսպները, մարտկոցներով ու փառաւոր բուրգերով։

Կանգնեց բազմաթիւ տաճարներ, թէ՛ Անի մայրաքաղաքին, թէ Շիրակի մէջ։ Նորոգել տուաւ հին եկեղեցիները եւ պերճացուց անշուք աղօթատեղիները։ Շինել տուաւ վանքեր։ Հաստատեց աղքատանոցներ ու անկելանոցներ, եւ յաճախ կ՚այցելէր պատսպարեալներուն, զանոնք մխիթարելով, ինչպէս նաեւ ուրախացնելով։

Առկէ զատ, իր պալատին մէջ կը հիւրասիրէր անժառանգները ու սեղանակից կ՚ըլլար գարերուն ու զոնջերուն, կոյրերուն ու կաղերուն, ցաւագարներուն եւ ցաւատանջներուն հետ, ինքն անձամբ սպասարկելով անոնց։ Իր զբաղումն ու զբօսանքն էր բարձակից ըլլալ թշուառներուն եւ դժբախտներուն։ Զանոնք կը կերակրէր, կը դարմանէր, ունեցածը բաշխելով առատաձեռնութեամբ։ Ոսկերածակով գինի կը մատուցանէր, զանոնք անուանելով նախարար, կուրապաղատ, իշխան եւ իշխան իշխանաց։ Երբ անարծաթ ըլլար, կու տար որմերուն վրայ գտնուող գեղօրներն ու զանազան զարդերը, կամ հիւրաբար իր մօտ գտնուող ազատներուն եւ ազատուհիներուն զոհարեղէնները։

Գրեթէ նոյնքան աղքատասէր էր Խոսրովանոյշ թագուհին, որ կը հոգար հիւանդները։ Նէ կանգնել տուաւ Անիի մէջ, հոյակերտ եկեղեցի։ Կառուցանել տուաւ Սանահինի եւ Հաղբատի հաստատակառոյց ու ահեղակերտ վանքերը, կարգելով Սանահինի վանահայր՝ Յովհաննէս Գիտնականը, իսկ Հաղբատի վանահայր նշանակեց Սիմէոն Ճգնազգեացը։ Եղաւ մայրիկ Հայոց։ Թագաւոր ու թագուհի իրարու հետ մրցատօնի մէջ էին, յանուն բարեգործութեան։

Աշոտ Գ.ի եւ Խոսրովանոյշի շրջանին, փայլեցան վանքերը, ու անոնց մէջ հասունցան իմաստուն վանականներ — Խոսրով Անձեւացի, Յովհաննէս Խաչակիր, Կիրակոս եւ Յովհաննէս Գիտնականները, Սիմէոն Ճգնազգեաց, Ղեւոնդ Փիլիսոփայ, Մեսրոպ Երէց, եւայլն։

Ամէն անգամ, երբ հանդէս եկած է հոգեծղի բարերար մը, ընդունակ մեծ թռիչներու, ծլած են ու ծաղկած մտաւորականներ։ Մեր յիշած յուսա-

digitised by A.R.A.R.@

պսակ գլուխները պիտի շըլլային, առանց Աշոտ-Խոսրովանոյշ վեհապետ վեհոգի ամոլին։

Հարստութիւնը թշուառութիւն մըն է եւ ունայնութիւն, առանց պարտականութիւններու կատարեալ գիտակցութեան եւ գործադրութեան։ Ազնիւ հոգի մը միայն կրնայ դրուագել այդ ունայնութիւնը, մեծաթափ բարութեամբ։ Հարստութիւնը հարկ է համերաշխի հանճարին հետ, որպէսզի երկուստեք առատանան պարգեւներն ու պտուղները։

***

Աշոտ Ողորմած միջահասակ էր, կլոր գլուխով, եւ մարմնով՝ գիրուկ։ Սրամիտ էր ու կատակասէր։ Հեգնական անշառ ժպիտներ կը լուսաւորէին խորութիւնը դէմքին։ Իր բնաւորութեան բարութիւնը տկարութիւն մը չէր, այլ՝ հաւատք ու հզօր հաստատութիւն։ Համակ հոգի էր, այսինքն՝ լոյս։

Աշոտ Ողորմածին երջանկութիւնն էր տեսնել դժբախտներուն եւ թշուառներուն դէմքերուն վրայ գերագոյն լուսափառութիւնները, — ժպիտները, որոնք աստղերն են հոգիին, յաճախ ինկած անդունդը։ Ըսինք որ լոյս էր, լոյս՝ զի լոյսն է զուարթ, զի լոյսն է բարի, զի խոնարհ է լոյսն որ կ'իջնէ զէնիթէն մինչեւ նադիր։ Վայրէջքներ կան մերթ, որոնք աւելի կ'արժեն վերելքներէն։ Եւ արդէն ինչ որ աստուածային է՝ չունի վայրէջ ու վերելք, զի անհունը չունի կողմեր։

Աշոտ Ողորմածին քաջողջ հոգին բարութեամբ կը հեշտանար։ Ան գիտած էր բարձրագոյն երջանկութիւնը— սփոփել վէրքեր, լռեցնել ցաւեր, տարափել մխիթարութեան մանանան հոգիներու մէջ, եւ ոչ ոք չդարձնել ձեռնունայն։ Սակաւաթիւ քրիստոնեաներ միայն յաջողած են մերձենալ այս ազնուութեան, այս հոգեկան առողջութեան, այս ներքին կատարելութեան, որ կը մնայ գերագոյն նպատակակէտը կրօններուն, իմաստասիրութեանց եւ Աստուածութեան։

***

977։

Արեւափառ Կիրակի։

Տօն Հրաշափառ յարութեան Յիսուս Քրիստոսի։

Անի ոստանը զգեցած էր զատկական զգեստ, արեգակին ծիրանին։

Փարիկներու կողմէ հիւսուած պալատին ճաշասրահին մէջ, զատիկը կ'ուտէին մայրաքաղաքի ու շրջակայքի բոլոր անժառանգները, մօտաւորապէս քառասուն հոգի։ Հսկայ սեղանին շուրջը բոլորուած էին ժողովուրդի այդ երկսեռ զաւակները ու կը ճաշէին արբենալով։ Անոնք իրենց երեւոյթով կը նմանէին տապաստակներու, խուժած ապարանքէ մը ներս, ու նստած խրախի։ Կային դէմքեր անճոռնի, այլանդակ, տգեղ, վիրոտ, թարախոտ, տանըւազն անխնամ։ Կային դէմքեր, որոնց մէջ իմացականութիւնն էր բացակայ։ Կային նաեւ չարաճճիներ, գլուխներ վհուկի, ակնարկներ սատանայի, պարապ նայուածքներ, հսկայ Անիի ոստիկաններուն կամ բախտակիցներուն իսկ կնքահայրութեամբ, հետեւեալ անուններով․—

digitised by A.R.A.R.@

Գեւ Թաղօ, Աղուէս Ցարօ, Ծուռ Մինաս, Պապուկ Արօ, Ոզնի Սահակ, Գող Գիգոր, Մուկ Մանուկ, Կոյս Կիրակոս, Խեւ Խաչիկ, Աղջիկ Մարտօ, Ծուռ Գլուխ Սուր, Վախկոտ Վարազ, Ծակաչք Աւօ, Կորդուկ Մելքոն, Ծակ Գեւօ, Անձու Ցուսիկ, Սեւ Շուշան, Ծամքաղ Աննա, Ծաղիկ Ցղի Հոփի, Մարած Արփի, Կախարդ Գայեան, Կաշի Ովսան, Փուշ Վարդուկ, Քիթ Եղիս, Ջղջիկ Նեւա, Անթուզ Մարօ, Որկոր Ցամմիկ, Տունմնայ Ծաղիկ։

Արշալուսանէն մնացած խումբ մը կը կարծուէին անոնք։

Կը սպասարկէին բազմաթիւ սպասեակներ, կ'երթեւեկէին աղախիններ ու մատռուակներ։ Ծառաներու կողմէ կը բերուէին սկուտեղիններ, զանազան երէններ, խորովածներ եւ այլ մսեղէններ։ Տակառէն ընդեղէններ, հաւկիթներ, բուսեղէններ ու միրգեր, մա՛նաւանդ կոյժերով գինի։

Բազմազբաղ էին կոչնականները ուտելով ու ըմպելով, սակայն, կը խօսակցէին ալ, կը կատակէին հեգնելով զիրար եւ պատասխանելով զիրենք հիւրասիրողին, որ յաճախ կ'օգնէր ծառայողներուն, իր ձեռքով մատուցանելով ուտելիք ու խմելիք՝ հրաւիրեալներուն։

Գուսանները կը նուագէին ու կ'երգէին վերնատան օթեակէն։

Ճառագայթ մը կը խաղար Թագաւորին դէմքին վրայ։ Ամէն տեղ էր ան, ամէնուն քով, զուարթացնելով, հարցնելով ողջութիւնը իր բարեկամներուն, տեղեկանալով անոնց փափաքներուն եւ իսկոյն գործադրելով։ Իր աչքը այդ անժառանգներուն ուսին վրայ էր կամ գլխուն, միշտ քաջալերական, միշտ զգուշական։ Կ'առաջարկէր կենացներ, կը հրահանգէր գուսանները, կը խրախուսէր բոլորը, ոգեւորութիւնը ղեկավարելով։

Երբ վերջացաւ առաջին մասը ճաշկերոյթին, սկսաւ կոչունք մը, որ կերուխում մըն էր գինիներով ու բազմազան միրգերով։ Սեղանակիցներէն շատեր, ջերմացուցած իրենց գլուխները, սկսան ձայնակցիլ գուսաններուն։ Ոմանք երկսեռ՝ կ'ելլէին ու կը պարէին այնքան շնորհալի, որ իրենց արտառոց կերպարանքը կը ձեւաւորուէր։

Սրահը կ'որոտար ուրախ փոթորիկի մէջ։ Պարողները կը ցոփէին ու կը թեւէին, ոտնաւոր թափեր տալով նուագողներուն։

Դրացի դահլիճին մէջ, Խօսրովանոյշ Թագուհին ճաշի էր, խումբ մը ազատներու եւ ազատուհիներու հետ, որոնք Հայաստանի հեռաւոր գաւառներէն եկած էին Անի, ու հիւրաբար կը բնակէին պալատը։

Այդ ազնուականները երբ ելան սեղանէն, Թագուհիին հրաւէրով մտան մեծ ճաշասրահը, ուր կը գտնուէր Թագաւորը, ժողովուրդի զաւակներուն հետ։

Անոնք տեսնելով արքային մտերմութիւնը այդ ցաւագարներու բազմութեան հետ, չկրցան զսպել իրենց զարմանքն ու ապշութիւնը, նաեւ խորշանքը։

Աշոտ Ողորմած իսկոյն դադրեցուց նուագը, եւ նստեցուց հիւրերը սեղանին ծայրամասը։

Ու Թագաւորը իր խօսքը ուղղելով ազատներուն, ըսաւ.

— Ձեր զարմանքը ի տես այս պատկերին այնքան շատ էր, որ կարդացի ձեր մտքերը, ձեր դէմքերուն վրայ։ Զարմացէ՛ք, երբ Թագաւոր մը չէ ինծ նման։ Այնքան Թագաւորներ ժողովուրդը Թողած են սոված, Թո՛ղ Թագաւոր մըն ալ զայն կշտացնէ։ Բազմաթիւ Թագաւորներ Թշնամիներ ունեցած են, կռուելու համար։ Իմ Թշնամիներս են անօթութիւնն ու հիւանդութիւնը։ Անոնց դէմ կը պատերազմիմ։ Ահա՛ միակ կռիւը, որ կը ծառայէ մի

digitised by A.R.A.R.@

բանի։ Սուրբ է միայն կոյսը ինքնապաշտպանութեան։ Ապա թէ ոչ, կոյս անելը շնորհ չէ։ Անասնոց ամէնօրեայ գործն է նա։ Անասնոց մէջ աւելի են խաղաղասէրք, քան մարդոց։ Խաղաղութիւն անեծք է շնորհը, բարիքը աւելի քան։ Հարկ է հիւանդները սիրել։ Եւ քանզի բոլոր մարդիկ մոլի լինելու պատճառաւ հիւանդ են, պարտինք սիրել մեր նմանները։ Կան որոնք հիւանդ են մարմնով, կան հիւանդներ մտքով կամ հոգւով։ Երանեալ են տակաւին անոնք, որոնց հիւանդութիւնն է միատեսակ։ Բազմատեսակ հիւանդաց համար, մարդոց ողորմութենէն զատ, հարկ է գթութիւնն Աստուծոյ։ Քանի որ քրիստոնէական է սիրել հիւանդները, հարկ է սիրել ծոյլերն ալ, զի նոքա եւս հիւանդներ են։ Առողջ մարդը հարկ է հարկատու լինի հիւանդաց եւ աղքատաց։ Հարուստ մարդիկը եթէ մեծապատիւ են, աղքատ մարդիկը բարձրապատիւ են անտարակոյս։

«Աղքատութիւնը հրեշտակային է, իսկ հարստութիւնը, երբ մա՛նաւանդ ժլատ է, սատանայական է։ Անմիտ է նա, որ չի փոխանակեր գժոխքը արքայութեամբ։

«Կայ մէկ միջոց՝ ծաղկազարդելու համար Ունայնութիւնը. յորդեցնել հոգիները, մտքերն ու մարմինները հուրով, հաւատով եւ հացով։ Լաւ բան է շէնք կանգնեցնել հողու վրայ. լաւագոյն է շէնք կառուցանել հոգիի մէջ։ Եղէ՛ք ուսանող՝ տալու գիտութեան։ Մի՛ վախնաք տալէ. եղէ՛ք վստահ, որ կը գրուի մի տեղ ձեր տուածը, ինչպէս նաեւ ձեր չտուածը։ Աստուած ամէն օր կու տայ տալու դասը։ Գերագոյն դասը տուաւ՝ տալով իր Որդին մարդոց։ Կոյրը թէեւ ոչինչ կը տեսնէ, սակայն, շատ լաւ կը նշմարէ մարդոց անողորմութիւնը։ Ձեր գոհարները փոխանակ ունենալու ձեր մարմնոյն վրայ, եթէ կ'ուզէք ունենալ ձեր հոգւոյն մէջ՝ պարգեւեցէք զանոնք չքաւորաց։ Ահա իմ խօսքերն ու խրատները խառնիխուռն։ Մի՛ զարմանաք. իբրեւ Թագաւոր ծառայակամ եմ, իսկ իբրեւ ծառայ՝ Թագաւորական։ Ամէն մարդ կ'ուզէ Թագաւոր ըլլալ, ինչո՞ւ Թագաւոր մըն ալ չուզէ մարդ ըլլալ»։

Թագաւորը երբ վերջացուց իր խօսքը, նշան ըրաւ, որ վերսկսի խրախճանքը։

Կոչնականները ու գուսանները, ինչպէս նաեւ ծառայողները աղաղակեցին, սրտագին զեղումով.

— Կեա՛ց, մեր արքայ։

Խեւ մը տենորեան ձայնով գոչաց.

— Կեա՛ց, մեր մեծ արքայ։ Դու Թագաւոր ես բոլոր մարդկանց մէջ, ու մարդ ես բոլոր Թագաւորաց մէջ։

Սրահը որոտաց խանդավառութեան հրթիռներով։

Աղաներն ու ազատուհիները մնացին ամօթահար, սակայն, փոխանակ խռովելու եւ քէն պահելու, պարգեւեցին ափսէ մը ոսկի, զրկելոց համար, եւ իրենք եւս սրտանց եղան մասնակից ուրախութեան։

Երեկոյեան, երբ վերջալոյսը կը ցուցադրէր իր ծիրանի հրանկարները, քանի մը ցաւագարներ լուսամուտի մը մէջ տեսան Յիսուսը, որ նման էր սպիտակ լոյսի ու կը ժպտէր։

Կէսօրին սկսած խնճոյքը շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր։

Աշոտ Ողորմած, կէս գիշերին, բերել տուաւ երկու սկուտեղ, չորս հազար սպիտակով լի, եւ իւրաքանչիւր հրաւիրեալի առջեւ դնել տուաւ, պղինձէ պնակով, հարիւրական արծաթ, որպէսզի այդ Թշուառները, հետեւ-

digitised by A.R.A.R.@

եալ օր, անմիջապէս չիյնան չքաւորութեան վիրապը, որպէսզի խրախին խինդը ըլլայ շարունակելի։

***

Երբ մեռաւ Ողորմածը, իր գանձատան մէջ արծաթ չէր մնացած։ Սակայն, աշխարհի բոլոր ոսկիներէն ու գոհարեղէններէն աւելի փայլուն էր իր յիշատակը եւ շքեղաշուք աւելի։

Արքայական մեռելակառքին հետեւեցան ծովածաւալ բազմութիւններ, մա՛նաւանդ կոյրերը, կաղերը, կուղերը, հէքերը, հիւանդները, տալու իրենց սիրալիր յարգանքին արտասուքի տուրքը, իրենց բացառիկ բարեկամին։

Հոռոմոսի վանքին հողին մէջ, մերձ Ախուրեանի, իջեցուցին ծանրածանր դագաղը, որուն մէջ մեծ ու ոսկի Սիրտ մը կար, նաեւ Ողորմածին Ուղեղը, նոյնպէս համակ ոսկի։

Բակը, ուր խռնուած էին յուղարկաւորները, յանկարծ, ընդհանուր յուզումին ու հեծկլտուքներուն մէջ, լսուեցաւ ձայն մը, որ կու գար խորէն ու կը բարբառէր․

— Լոյս տո՛ւր, Տէր, աչաց իմոց, զի մի երբեք ննջեցից ի մահ։

Ներկաները սարսռացին։

Հիւանդ մը աղաղակեց․

— Նա մեռեալ չէ, անմա՛հ է նա։

Ու բոլոր ցաւագարները գրեթէ միաբերան բացագանչեցին․

— Մեռնողը մե՛նք ենք։

Եւ շողշողենի լոյս մը ողողեց բակը, ու նրբենի եւ սրբազան բոյրի ծուէն մը ծաւալեցաւ մթնոլորտին մէջ։ Կարծէք բացուած էր դուռն Արքայութեան պարտէզին։

— Լո՛յս, — գոչեցին զարմանահար, բոլոր յուղարկաւորները։

— Լո՛յս տուր, Տէ՛ր, մեր աչաց, — պաղատեցաւ կոյր մը ծերունի։

Բոլոր կոյրերը ձայնակցեցան․

— Լո՛յս տուր, Տէ՛ր...

Ու ալեկոծուեցաւ կոյրերու բազմութիւնը, եւ աղաղակեց խելայեղօրէն․

— Կը տեսնե՛մ, կը տեսնե՛մ... կը տեսնե՛նք, կը տեսնե՛նք...

Լոյսը խենթեցուցած էր զիրենք, քանզի կը տեսնէին, լոյսը երջանկացուցած էր զիրենք, քանզի կը տեսնէին։ Լոյսէն յուզուած, լոյսով արբեցած, լոյսով վերածնած կուլային, կ'աղաղակէին, զիրար կ'ողջագուրէին, կը տեսանապրէին, իրենց ժպիտները կը փայլէին արցունքով ու իրենց արցունքները՝ ժպիտով, ինչպէս ծաղիկները կը գոհարազարդուին ցօղերով եւ գոհարները՝ ծաղիկներով։ Կը փայփայէին լոյսը, կ'ըմպէին ու կ'արբենային։ Կոյրերը լեցուեցան, շլացան եւ կարծէք խեղդուեցան լոյսով։

Կը տեսնէին արքայութիւն մը, իր ամբողջ գունագեղութեամբ։ Կը տեսնէին ձեւերուն մոգական հանդէսը։ Կը տեսնէին, տարբեր կերպով անշուշտ, իրենց երեւակայութեան ու երազանքին մէջ ծլարձակեալ հեքիաթները։

Կը տեսնէին շքեղ եկեղեցիներ, պերճ աւագներ, գեղանի կիներ, աստուածանկար դէմքեր, սեւրու մէջ ցայտուն՝ սպիտակ մորթեր, եւ աչեր՝ մեղքով ու մեղրով առլի։

digitised by A.R.A.R.@

Կոյրերէն ոմանք բարձրացան զարիթափէն, տեսնելու աշխարհը, համայնապատկերը, իր երկինքով, իր լայնարձակ հորիզոնին շրջանակով, իր կենաց կաթսայ հրաշէկ արեգակով եւ իր ծառերով ու թռչուններով:

Ծով-ծով կապոյտը եւ տարածուն կանաչութիւնները:

Եւ անոնք տեսան Աստուածութիւնը բնութեան մէջ՝ անհուն ներդաշնակութեամբ եւ թրթռացումով:

Անոնք տակաւին տեսան անտեսանելի այլ բաներ — Մարդոց հոգիները:

Երբ բազմութեան խորքին հոգեշարժը հանդարտեցաւ՝ ծերունի նախկին կոյրը մրմնջեց, մենախօսութեան մը նման.

— Եթէ բոլոր տիրողները Ողորմածներ ըլլային, բովանդակ աշխարհը կ'ըլլար անզան արքութեան, իսկ մարդիկ եղբայրաբար հաղորդուած, կ'ըմպէին եւ կը ճաշակէին, վայելելով ամէն ինչ, որ նուագ է ու ներդաշնակութիւն:

Եթէ բոլոր տիրողները Ողորմածներ ըլլային, լոյսը կը մտնէր մարդկային էութեան ծոցը եւ ամէն հոգիի մէջ կը բացուէր հանդէսը հուրին, հաւատին ու հացին:

Եթէ բոլոր տիրողները Ողորմածներ ըլլային, պիտի կատարուէր հրաշքը… «Եւ երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն…»:

⁂

Աշոտ Ողորմած մին է այն լուսափիւռ անուշահոտութիւններէն, որոնք յաւերժօրէն կը ծփան մեր մռայլ պատմութեան պարանքներուն մէջ:

Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ

# ԼԷՅԼԻՆ ՈՒ ՄԷՋՆՈՒՆԸ

1

Եայլաներում հովն էր պարում,
Ծիծաղում էր ամէն քար,
Զմրուխտ, կանաչ ծովարտերում
Լորն էր կըլթում անդադար:

Սիւքը սարից դաշտ էր իջնում,
Հոտը քաշւում սարն ի վեր,
Ղօղանջում էր կեանքը սարում,
Ամէն սրտում երգ ու սէր:

Հուր-հեր արփին համբուրում էր
Ծաղկանց աչերն արցունքոտ,
Երկինքն վերից բուրվառում էր
Ե՛ւ սէր, ե՛ւ տենչ, ե՛ւ կարօտ:

Իսկ գիշերը, աստղածորան,
Երբ փռւում էր սարերին,
Երբ մթնում էր ձոր ու կածան՝
Խոր քուն բերում սարւորին՝

Ամէն աստղիկ բախտ էր տանում
Բինաներին իր շողով,
Սէր ու մուրազ էր բաժանում
Մի հմայիչ երազով:

Լուսնի արծաթ վարսերի տակ՝
Աղբիւրն էր մեղմ կարկաչում,
Կոյս սրտերի մէջ անյատակ,
Սէրն էր մեղմիւ հառաչում:

2

Սուրբ երազով, ասում են թէ,
Ակն-աղբիւրի ժայռի մօտ,
Լէյլին, Մէջնունն իրար գտան
Բախտի մի սուրբ առաւօտ:

Իրար գտան, ճանաչեցին,
Ու փարւեցին սիրով ջերմ,
Հալուեց համբոյրն իրենց շրթին,
Հովն էլ գգուեց նրանց մեղմ:

Բայց հանդիպումն ջրի ճամբին
Կարճ է լինում ու թերի,
Այն առաւօտ սիրուն Լէյլին
Ջուրն էր իջել՝ պաղ ջրի:

Մէջնունն նայեց լի սափորին՝
— Մի շտապիր, ի՛մ Լէյլի···
Լէյլին առաւ սափորն ուսին՝
— Ես կը դառնամ սիրելիս·

Ու վեր ելաւ էն սարն ի վեր
Լէյլին՝ սափորն իր ուսին,
Ասես՝ դաշտի շուշան լինէր,
Կամ թէ՝ պայծառ մի լուսին:

Նայեց Մէջնունն իր ետեւից,
Սրտում կարօտ ու մուրազ,
Լէյլու համբոյրն բուրեց նորից
Երջանկութիւն ու երազ:

digitised by A.R.A.R.@

Երազն հաւատ դարձաւ սրտում,
Սիրոյ ճամբին նա նստեց,
Ու հայեացքն իր յառած հեռուն՝
Լէյլու դարձին սպասեց…

3

Գնաց Լէյլին սէրը սրտում,
Դէմքը շիկնած ու վառման,
Թաքուն սիրոյ տուած խոստումն
Իր կոյս սրտին թեւ տուաւ:

Գնաց Լէյլին… բայց ի՞նչ տեսնի…
Իւրտ ու բինայ հաւաքած,
Թաղիք, պղինձ ու անկողին՝
Ուղտ ու գրաստ բեռ–բարձած:

Հայրն էլ կանգնած քոչի առաջ՝
Սպասում էր աղջկան…
Օ՜, խեղճ Լէյլի. մնաց սառած…
Ու վեր ելաւ քաջափան…

Քոչը շարժուեց, ուղտը փնչաց,
Բոժոժները զնգացին,
Ու Լէյլիի սիրտը մնաց
Ակն–աղբիւրի եզերքին…

4

Աշնան քամին փչեց, անցաւ,
Ծաղիկ ու խոտ չորացան:
Ձմեռ եկաւ, քար սառցի տակ
Աղբրի երգերն խլացան:

Իսկ Մէջնունը, աչքը ճամբին,
Սպասում էր, սպասում.
Լոյսին, մութին աչք էր անում,
Ոչ քնած էր, ոչ արթուն:

Սրտի բոցը շրթին հասել
Վառւում էր յար ու այրում,
Լէյլին անուշ երազ դարձել՝
Երազում էր ու հալւում:

Հիւծուել էր նա, մաշուել ի սպառ,
Դարձել կմախք ու ոսկոր,
Աչքերն միայն արթուն ու վառ
Մնում էին կարօտով:

Ու երազում, սիրուն Լէյլին
Իրեն այցի էր գալիս,
Կանչում, ջրի սափորն ուսին,
«Ետ կը դառնամ, սիրելիս»:

5

Եկաւ գարուն, ծաղկան սարեր,
Արտ ու տրօտ բոյր առան,
Դուրս թափուեցին հաւք ու թիթեռ,
Հօտ ու քոչւոր սար ելան:

Ամէն ճամբուն երգ ու ծիծաղ՝
Զուլալած կեանքի աղմուկին,
Ամէն ծերպում մի թուխ հօտաղ՝
Ձեռքը դրած ճակատին:

Ծուխն էր ելնում բինաներից,
Հասնում ամպին ու փարւում,
Ասես, ծարաւ սիրոյ հուրից,
Ամպի կուրծքն էր համբուրում:

Ջուրն էր իջնում Լէյլին տրտում,
Ջրի սափորն իր ուսին,
Ջուրն էր իջնում՝ մտքում, սրտում
Մէջնունի հետ միասին.

— Ասիր կը գամ, բայց չդարձար,
Ինձ մոռացար դու Լէյլի…
— Քոչը մեկնում էր… չիմացա՞ր…
Ներիր ինձ, ի՛մ սիրելի…

— Ինձ խաբեցիր, դէ՛ տես, հիմա
Ուրիշին եմ ես սիրում.
Սէրն ի՞նչ է որ, ջահել սրտին
Հազար ծաղիկ է բուրում… —

Այսպէս տալիս էր եւ առնում
Մտքում–սրտում խեղճ Լէյլին…
Ուսկի՞ց գիտնար, որ դեռ ձորում
Սպասում էր սիրելին…

digitised by A.R.A.R.@

6

Մինչ խորհում էր այսպէս Լէյլին՝
Ձորից թռաւ մի ագռաւ,
Պտոյտ գործեց նրա գլխին,
Ու մի քարի կանգ առաւ:

Յետոյ թեւերը հաւաքեց,
Վիզը ճկեց դէպի ձոր,
Ու մարդկային լեզուով խօսեց,
Այս խօսքերով ահաւոր·

— Լէյլի՛, Լէյլի՛, շո՛ւտ շտապիր,
Ակն–աղբիւրի ժայռի տակ,
Մի կմախք կայ, բայց աչքերն իր
Դեռ թարթում է շարունակ:

Լէյլի՛, Լէյլի՛, ես ցած իջայ
Այն աչքերը փորելու,
Բայց աչքերում կարօտ տեսայ
Սպասելու, սիրելու...

Մարմանդ հովն էր եկել խաղում
Այդ ոսկրեղէն վանդակում,
Լէյլի՛, այդ խեղճ կմախքն, ասես,
Սիրոյ երգ էր նուագում:

— Այս աչքերը, — հարցրի նրան, —
Էլ ինչի՞դ են պէտք գալու, —
Եւ նա տուեց ինձ պատասխան՝
«Լէյլուն մէկ էլ տեսնելու...»:

7

Թռա՛ւ Լէյլին, ձորն իջաւ,
Հասաւ աղբիւրին, ժայռի տակ.
Ու սարսափից նա կանգ առաւ,
Սիրտը ճչաց կրծքում փակ:

Հենց նոյն տեղում, դիրքով հենց նոյն՝
Որ թողել էր Մէջնունին,
Անցած տարուայ օրուայ ժամին՝
Գտաւ մաւրազ – սիրելին:

Լէյլու շունչն երբ իրեն հասաւ,
Մէջնունն աչքերն լայն բացեց,
Ասես, նոր շունչ, կեանք ստացաւ,
Նուաղ ձայնով նա խօսեց·

— Եկա՞ր, հոգիս, ոտքիդ փոշին
Թարթիչներովս թող սրբեմ,
Յոգնութիւնդ գայ իմ սրտին...
Քիչ ուշացար... չգիտեմ...

Գուցէ ճամբին քարեր տուիր,
Բարեւ առար ծանօթից...
Գուցէ ճամբադ ես դու թեքել
Թաքուն սիրոյ ամօթից...

Բայց վազել ես, իմ սիրեկան...
Դէմքդ ինչո՞ւ դալկացաւ... —
Նայեց աղջիկն զարմացական,
Ասես, տեղում քարացաւ...

Ի՞նչ է, Աստուած, վերադարձած
Այս կմախքը դամբանեց,
Որ սիրտ չունի, որ շունչ չունի,
Բայց սիրում է դեռ նորից:

— Իմ խեղճ Մէջնուն, ամբողջ տարի՛,
Մի տարի է անցկացել,
Իսկ դու, ի՛մ սէր, ինձնով հարբած,
Սպասել ե՛ս... սպասել...

— Հաւատն սիրոյ ծառ է, Լէյլի՛,
Ծաղկուն ծառ, որ մահ չունի...
Սիրոյ խոստումն սէ՛ր է, Լէյլի,
Սիրտը ելքի դուռ չունի... —

Ասաց, լռեց:Հառաչ մի խոր՝
Վերջին շունչն էր... ու փչեց .
Եւ տապալուեց կմախքն անզօր
Լէյլու առջեւ, փշրուեց:

— Ո՛վ Տէր Աստուած, ահա՛ սէրը,
Ե՛ւ ճշմարիտ, ե՛ւ մաքուր,
Նման սիրոյ հնոցի մէջ,
Արժէ՛ վառուել, դառնալ հուր:

digitised by A.R.A.R.@

Տէ՛ր, խնայիր, տուր իմ սէրը,
Իմ Մէջնունին ինձ ետ տուր,
Կամ ինձ էլ գա՛րկ... սրտիս բեռը
Ծանր է, ծանր եւ տխուր... —

Կանչեց Լէյլին, վարսերն քանդեց,
Եւ դողահար փլեց վար.
Ընկաւ, ինչպէս գարնան սեմին
Մատղաշ տերեւն հողմահար:

Յետոյ, ցաւից, աղբրին կախուած
Ժայռը պոկուեց, վայր ընկաւ՝
Ծածկեց նրանց: Ու սարսափած
Սահեց արեւն ու հանգաւ...

8

Առաւօտեան երբ ձորն իջան
Աղջիկները պաղ ջրի,
Ժայռին երկու տատրակ տեսան՝
Կտուց-կտցի, թեւ-թեւի:

Կարկաչում էր աղբիւրն ուրախ,
Ծիլ ու կանաչ սըւսըւում,
Ջեփիւռն շրթին առած մի տաղ՝
Ծաղկանց բուրմունքն էր ցրում:

Համբուրում էր հուր-հեր արփին
Սիրով արբած հաւքերին,
Նրանք Լէյլի-Մէջնունն էին՝
Կտուց-կտցի, թեւ-թեւի:

Ու մի աղմուկ յանկարծ ձորում՝
Տատրակները ճախրեցին,
Ծիծղուն, կապոյտ ջինջ եթերում
Մուրազ առած գնացին...

Եայլաներում հովն էր պարում,
Ծիծաղում էր ամէն քար,
Զմրուխտ, կանաչ ծով արտերում
Լորն էր կըլթում անդադար:

ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ

digitised by A.R.A.R.@

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

# ՍԷՐԸ

# ՑԱՆԿԱՊԱՏԵՐԻ ՏԱԿ

## ԺԳ.

*Նա տուն գնաց խորտակուած տրամադրութեամբ:*

*Նա սիրահարուած էր շատ խիստ, բայց սիրահարուած էր սխալ մի կնոջ վրայ: Գեղեցիկ մի կին, որը նրա սիրուհին էր եղել երեք ամիս եւ խոստանում էր լինել մինչեւ ուսումնական տարուայ վերջը եւ դրանից յետոյ վերջ, որովհետեւ նա պիտի գնար:*

*— Իսկ իմ սէ՞րը, — հարցրեց նա:*

*— Կը մոռանաս, — պատասխանեց նրա սիրուհին:*

*— Մի՞թէ սէրը մոռացւում է, — մտածում էր նա եւ պատասխան չէր գտնում:*

*Ընթրիքից յետոյ, երբ նրա հօրեղբօր կինը դուրս գնաց, հօրեղբայրը նայեց նրան եւ ժպտաց.*

*— Արամ, այդ իմ գործը չէ, բայց ես տեսնում եմ, որ քո օտար գեղեցկուհին տառապեցնում է քեզ...:*

*— Օ՜, մի՞թէ այդ նկատելի է, — հարցրեց նա:*

*— Անշուշտ: Երեք ամիս դու գիշերները տուն չէկար, իսկ վերջին շաբաթում էլ հիւանդացար: Գժուե՞լ ես...:*

*— Այո...:*

*— Ինչո՞ւ: Նա աւելի շա՞տ սէր է պահանջում..., — հարցրեց հօրեղբայրը:*

*— Ո՛չ: Ես եմ պահանջում, իսկ նա մերժում է:*

*— Հրաշալի է: Ուրեմն ժամանակն է, որ դու մոռանաս նրան, — շատ լուրջ ասաց հօրեղբայրը:*

digitised by A.R.A.R.@

— Այո՞ ։

— Այո՛ ։

— Մտածում եմ այդ մասին, — ասաց նա եւ թողեց դուրս եկաւ պատշգամբը։

Երեկոն գնալով ծանրանում էր։ Իջնում էր հայկական գարնանային տաք գիշերը։ Խաւարն այնքան թանձր էր, որ թւում էր, թէ այն լոյսի պակասի հետեւանք չէր, այլ՝ նիւթական մութ մի խառնուրդ էր։ Այդ խաւարը ներծծուած էր տան պարտէզի եւ ամբողջ քաղաքի պարտէզների ծաղկած ծառերի, ծաղիկների ուշացած եղրեւանիների մեղկ ու սիրագրգիռ հոտով։ Խաւարը տենչ էր ստեղծում եւ սիրելու ու սիրուելու ցանկութիւն։ Գգուանք։ Կաթոգին գուրգուրանք։ Սիրային երազ։ Թւում էր, թէ խաւարի միջով սիրոյ մանրէներ էին թռչում, որոնք շնչառութեան հետ մտնում էին շնչողի թոքերն, այնտեղից էլ արեան մէջ եւ վարակում, ինչպէս որ վատորակ մանրէները վարակում են անիմաստ հիւանդութիւններով։ Խաւարը, տաք ու հաճելի օդը, երբեմն-երբեմն եկող ու շոյելով անցնող հովը, ծաղիկների ու հայկական կանաչի բարկ հոտը ամենաբուժիչ դեղի պէս ամոքում էին կոշտութիւնները կեանքի եւ այն դարձնում թեթեւ ու ցանկալի։

Սակայն բնութեան այդ գեղեցկութիւնը չէր թեթեւացնում նրա հոգեկան ծանր տառապանքն, այլ՝ աւելի էր խորացնում այն։

Եթէ չլինէր նրանց այսօրուայ վէճը, նա իր սրտի անհուն ցանկութեամբ իր սիրուհու մօտ պիտի գնար քիչ յետոյ։ Բայց նա ասաց. «Ես գիտեմ, որ պիտի գաս... Սակայն, խնդրում եմ, առանց մշտատեւ սիրոյ եւ ամուսնութեան պայմանների»։

— Պարզ է, — մտածում էր նա, — Լիզան ուզում է, որ մենք շարունակենք մեր սէրն առանց պայմանի եւ յետոյ մոռանանք միմեանց, ինչպէս որ մոռանում ենք երէկուայ գեղեցիկ օրը։

Նա մտածեց մի քիչ եւ ապա հարցրեց ինքն իրեն.

«Արդեօք կարո՞ղ եմ մոռանալ։ Եւ եթէ ոչ, եթէ չեմ կարող, ապա լաւ է հենց հիմակուանից սկսեմ մոռանալ նրան»։

Նա ուզեց յետ գնալ սենեակ, նստել եւ ընթերցանութեամբ զբաղուել, բայց տեսաւ, որ չի կարող։

Այնտեղ, քաղաքի միւս ծայրում, այժմ մի ինչքան գեղեցիկ, այնքան բարեկիրթ ու զարգացած կին էր նրան սպասում։ Մի կին, որի համակրական մի ժպիտը կարող էր խելքահան անել ամէնից խստաբարոյ մի տղամարդի, եւ որն ամբողջովին նրան էր պատկանում։

Նա յիշեց անցեալի իրենց սիրային խելայեղ գիշերները։ Նա յիշեց իր սիրուհու նրա նկատմամբ ցուցաբերած սիրային խանդաղատանքը, գորովը, գգուանքը եւ այն անձնատուութիւնը, որ նա ցուցաբերում էր նրա նկատմամբ անկողնում։

— Անկողնում, դու իմ տէրն ես, Արա՛մ..., — մի գիշեր նրա սիրուհին ասաց նրան։

Նա բողոքեց սրտանց, որովհետեւ ատում էր տէր եւ ենթակայ դերւածքները։

— Դու գիտես, Արա՛մ, որ ես կարող եմ բաց աչքով հարիւր հազար տղամարդ տեսնել, բայց ոչ մէկին չտեսնել..., — մի այլ անգամ ասաց նա։

— Ի՞նչ ես ուզում ասել, Լիզա՛, — հարցրեց նա։

— Այն՝ որ միլիոնների միջից քեզ եմ ընտրել...։

digitised by A.R.A.R.@

Նա նորից բողոքեց, որովհետև չէր սիրում, որ իրեն փառաբանում էին։ Բայց և այնպէս ասաց.

— Սակայն, Լիզա՛, մինչև այսօր դու դեռ չես ասել, որ սիրում ես ինձ։ Ինչո՞ւ։

Ելիզաւետա Մարկովնան մտածեց մի քիչ և ապա ասաց.

— Ես միայն մէկ անգամ եմ սիրել բառը գործածել և յետոյ չարաչար զղջացել....։

«Բայց այսօր ես զգացի, որ սիրում է ինձ, — մտածեց նա, — սիրում է, սակայն չի ուզում, որ մենք ամուսնանանք։ Ինչո՞ւ»։

«Որովհետու նա սարսափում է ամուսնութիւնից։ Որովհետև այդ Վալտէր Ֆոն Բլաուբէրգէրը երևի մի հրէշ է եղել», — միրուհուն արդարացրեց նա։

Այդ առաջին անգամ էր, որ նա իր սիրուհուն արդարացնում էր իր մտքում, ամուսնութեան հարցում։ Եւ երբ այդպէս արեց, թեթևութիւն զգաց։

«Ամէն մի անհատի անձնական իրաւունքն է իր կեանքը վարելու այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում, — մտածեց նա, — փորձել համոզել այլ կերպ վարելու, այդ նշանակում է մէկին համոզել հաւատափոխ լինել, որը միսիոներական սառնութիւն է, և զզուելի»։

Նա շարժուեց դէպի աստիճանները վար իջնելու համար։ Զգնալ, չէր կարող։

— Արամ, գնո՞ւմ ես...., — հարցրեց նրա հօրեղբայրը, որը կանգնել էր միջանցքի շեմքին և նրան էր դիտում մթան մէջ։

— Այո՛։

— Գնում ես հաշտուելո՞ւ։

— Այո...

— Ինչումն է ձեր վէճը, կարո՞ղ եմ գիտնալ։

— Ես նրանից ամուսնութիւն եմ խնդրում, իսկ նա մերժում է....։

— Հիմա գնում ես ի՞նչ անելու, Արա՛մ։

— Գնում եմ ասելու, որ հրաժարւում եմ ամուսնութեան իմ առաջարկից։

— Յետոյ ի՞նչ տեղի կ'ունենայ քո այդ հրաժարումից, Արա՛մ։

— Մենք կը շարունակենք մեր սէրը։

— Ինչո՞ւ է նա մերժում, ամուսնութեան քո առաջարկը։

— Նա ատում է ամուսնութիւնը։

— Հաւատացա՞ծ ես, որ այդպէս է։

— Այո՛։

— Ինչո՞ւ ես հաւատացած։

— Որովհետև սիրում եմ նրան։

— Ի՞նչ է սէրն, Արա՛մ։

— Այն, որ հիմա զգում եմ։

— Այսինքն ա՞յն, որ չես կարող չգնալ։

— Այո, այն, որ չեմ կարող չգնալ։

— Հաստա՞տ։

— Հաստատ։

— Բարի գիշեր, Արա՛մ։

— Բարի գիշեր, հօրեղբայր։

digitised by A.R.A.R.@

Դեռ բակի դռնից, փոքրիկ պարտէզի ծառերի արանքից, նա տեսաւ, որ իր սիրուհու առաջին սենեակում լոյս կայ։

«Նա ինձ է սպասում», — մտածեց նա եւ բոցավառուեց։

Սակայն երկու քայլ չարած, նա մտածեց.

«Նա ինձ է սպասում, պայմանով, որ ես իմ պարտութիւնը յայտնեմ»։

Եթէ լոյսը չլինէր, նա յետ պիտի դառնար, բայց այդ լոյսը կախարդական զօրութեամբ դէպի իրեն էր քաշում նրան։

«Պարտութի՞ւն։ Ի՞նչ պարտութիւն, — լոյսին նայելով հարցրեց նա ինքն իրեն եւ անմիջապէս պատասխանեց, — փոխադարձ սիրոյ մէջ պարտուած եւ յաղթական կողմեր չկան»։

Նա անչափ ուրախացաւ, երբ միջանցքի դուռը բաց գտաւ։ Առանց առաջին սենեակի դուռը թակելու՝ նա ներս մտաւ։

Ննջարանի դրան մօտ, իր ամբողջ սլացիկ հասակով կանգնել էր նրա սիրուհին, ձախ ձեռքը տարել էր դէպի մազերը, իսկ աջ ձեռքի դաստակով ծածկել էր աչքերը, կարծես փորձում էր պաշտպանուել մի անտեսանելի հարուածից։ Նա նրա ներս մտնելը չտեսաւ։

Արամը կանգնեց դրան մօտ եւ սկսեց հիացումով իր սիրուհուն դիտել։ Նա այդ գիշեր հագել էր ձիւնափայլ ու քողազգործ մի երկար գիշերանոց, որի տակից, էլեկտրական լոյսի տակ, նա տեսաւ սիրուհու վարդագոյն մորթը եւ զգլխիչ մարմնամասերը, իրեն մօտիկից այնքան ծանօթ եւ այնքան մատչելի։

«Ահա, թէ ինչու եկայ, — մտածեց նա, — երբեք չի կարելի ընդդիմանալ սիրուած կնոջ հմայքին։ Նոր եմ հասկանում, որ ես կարող էի առաջարկել, բայց նա էր, որ պէտք էր վճռէր, եւ ես համաձայնէի»։

— Լիզա՛..., — կանչեց նա։

Նրա սիրուհին ցնցուեց, թողեց ձեռքերը եւ նրան նայեց ուրախացած։

— Ես քեզ էի սպասում, Արա՛մ, — ասաց նա եւ ընդառաջ գնաց նրան։

Նա մօտեցաւ եւ գրկեց սիրուհու թրթռուն մարմինը.

— Դու սպասո՞ւմ էիր, երբ ես կարող էի չգալ։

— Չէիր կարող չգալ, Արա՛մ։

— Ինչո՞ւ ոչ։ Ես իմ սիրային սկզբունքներն ունեմ, եւ իմ կամքը։

— Չունես, Արա՛մ։

— Ունեմ, Լիզա՛։

— Քաղաքակրթութեան բնականոն զարգացում ունեցող ժողովուրդների մօտ, սիրային սկզբունքները կինն է ճշդում, եւ թելադրում իր կամքը, Արա՛մ։

— Իսկ տղամա՞րդը։

— Սիրային հարցերում տղամարդը ձայն չունի, Արա՛մ։ Դուք միշտ էլ մեզ էք ենթարկւում։

— Չեմ կարծում, Լիզի՛կ։

Գեղեցկուհին դուրս եկաւ նրա գրկից, մէկ քայլ հեռացաւ նրանից, ապա աղջնակի պէս բռնելով իր թափանցիկ գիշերանոցի երկու կողմերից, դարձաւ իր շուրջը.

— Հաւանո՞ւմ ես։

Ի տես նրա մարմնական կառոյցին, նա գլխապտոյտ ունեցաւ։

— Ինչպէս միշտ, դու կատարեալ ես, Լիզի՛կ...

digitised by A.R.A.R.@

Գեղեցկուհին կարմրեց.

— Խօսքը գիշերանոցիս մասին է, Dumkopt: Դու այդ չես տեսել: Առաջին անգամ եմ հագել, քեզ աւելի սիրահարեցնելու վրաս....:

— Գիշերանոցո՞վ:

— Ես կին եմ, Արա՛մ: Ասա՛, հաւանո՞ւմ ես:

— Elegante, Lizchen, elegantisimo:

Ելիզաւետա Մարկովնան ծիծաղեց տաք ու սրտանց:

Նա անչափ սիրում էր, երբ իր սիրեկանն իրենց գերմաներէն խօսակցութիւնների մէջ, երբեմն-երբեմն, մտցնում էր հայերէն, ռուսերէն կամ էլ եւրոպական մի այլ լեզուից նրա կողմից գիտցուած կամ լսուած մի որեւէ բառ կամ նախադասութիւն: Դրանք զուարթութիւն էին առաջացնում, գոյն ու երանգ էին տալիս կոշտ գերմաներէնին: Պատկեր ստեղծում: Այդ բանում, նա իր սիրեկանին անզուգական էր համարում: Բայց ո՛չ միայն այդ բանում, այլեւ՝ բոլոր կողմերով: Նա շատ լաւ գիտէր, որ այդ հայ տղան առողջ է մտքով, հոգիով եւ մարմնով: Նա գիտէր, որ իր սիրեկանը, ազնիւ է, անկեղծ, բարեկիրթ, շիտակ ու ջերմ հայրենասէր:

Իմացական կին լինելով, նա անհատի մարդկային արժանապատուութիւնը հենց այդ հայրենասիրութեամբ էլ բնորոշում էր, թէկուզ մի ուրիշի հայրենասիրութիւնը հակասում էր իր անհատական շահերին:

«Հայրենասիրութիւն՝ նշանակում է անձնազոհութիւն, — մտածում էր Ելիզաւետա Մարկովնան, — եւ որովհետեւ անձնազոհութիւնն անկաշառութիւն է, ապա հայրենասէր մարդը կատարեալ մարդն է»:

Մի գիշեր, հենց այդ հողի վրայ, երբ նա փորձում էր իր սիրեկանին, նրա սիրեկանն ասաց.

— Ես կարծում եմ, որ մենք, մարդիկս անասուններից տարբերւում ենք մեր իմացականութեամբ, որը նորութիւն չէ, որ ես ասում եմ: Սակայն, եթէ մեր իմացականութիւնը միա՛յն նիւթն է հետապնդում եւ զուրկ է հայրենասիրական գիտակցութիւնից, մենք նորից նոյն անասուններն ենք: Անասունն է, որ հայրենիք չունի, որովհետեւ զուրկ է այդ գիտակցութիւնից:

Ելիզաւետա Մարկովնան սիրահարուած էր իր սիրեկանի վրայ, ո՛չ միայն նրա արտակարգ գրաւչութեան համար, այլեւ՝ նրա հոգեկան այդ եւ այլ յատկութիւնների համար: Նա միշտ էլ այդպիսի մէկին էր փնտռել նրա հետ իր կեանքը միասին ապրելու համար:

Բայց նա սոսկում էր հայկական «օտար» բառից, որ գիտէր եւ հասկանում էր իմաստը: Նա, համարեա՛ ամէն օր էր լսում այդ բառը: Երբ նա Արամենց տանն էր, նրա հօրեղբօր կինը նայեց նրան, նայեց եւ դարձաւ Արամին ասաց հայերէն

— Քո այդ ուսուցչուհին շատ գեղեցիկ է, որ լաւ է, բայց մի մոռացիր, որ նա օտար է....:

Նա հասկացաւ, որ Արամի հօրեղբօր կինն իր զարմիկին զգուշացրեց նրա նկատմամբ, որովհետեւ օտար բառն այնպիսի շեշտով գործեց, որ թուաց, թէ օտար մի բանակի ներկայութեան մասին խօսեց:

Իր հօր յուշագրքից եւ իր գիտողութիւններից ելնելով՝ նա եկել էր այն եզրակացութեան, որ հայ ժողովուրդն անկեղծօրէն սիրում ու յարգում է օտարին: Բայց օտարի նկատմամբ այդքան միայն: Նա գիտէր, որ հայ ընտանիքն ազգայնօրէն փակ ընտանիք է եւ խորշում է օտարի հետ խնամի-

digitised by A.R.A.R.@

կան կապերի մէջ մտնելուց։ Ընդհանուր գծերով ծանօթ լինելով հայոց պատմութեանը, նա գիտէր, որ այդ մաքրակրօն ժողովուրդը դարեր-դարեր շարունակ, աշխատել է պատնէշ ստեղծել եւ կղզիանալ այն բոլորից, ինչ օտար է։ Նա գիտէր, որ այդ ժողովուրդն իր ազգային ինքնուրոյնութիւնը պահելու համար, ստեղծել է իր ազգային լեզուն, իր ազգային այբուբենը, իր ազգային եկեղեցին, իր ազգային կենցաղը, իր ազգային մշակոյթը, իր ազգային ճարտարապետութիւնը եւ նոյնիսկ իր ազգային քայլելու ձեւը։

Ճիշդ է, նա ատում էր ամուսնութիւնը, բայց իր սիրեկանի վրայ խստօրէն սիրահարուած լինելու պատճառով, եթէ առիպուած լինէր նրան մարդու գնալ, նա գիտէր, որ օտար հարս պիտի լինէր այդ խրովլի ժողովրդի աչքին։

Հենց այդ պատճառով էլ, նա անսահմանօրէն ուրախ էր, որ իր սիրեկանը լքելով իր սկզբունքները յետ էր եկել։ Եթէ յետ չգար, միւս օրը, թերեւս, նա ինքը ցատկէր իր սկզբունքների վրայով եւ տեղի տար նրա պահանջին։

Այդ մասին նա խոստովանեց իր սիրեկանին, երբ նրանք արդէն անկողնում էին եւ այլեւս ուշ էր։ Մինչ այդ, նա հրճուանքով լեցուն իր սիրեկանի վերադարձի համար, եւ ծիծաղելով նրա «էլէկտանտէ» բառի վրայ, ընդհուպ մօտեցաւ նրան եւ «այստեղ տաք է, Արամ» ասելով, իր բարակ ու նրկար մատներով ու գուրգուրանքով, սկսեց արձակել նրա փողկապն ու վերնաշապիկի օձիքը։

Նա, որ սիրուհուն տեսնելու վայրկեանից, նորից գործօն հրաբուխ էր վերածուել, այժմ նրա բոցի պէս այրող մօտիկութիւնից, նրա մատների դիպչումից իր վզին ու կրծքին, սկսեց տենդից բռնուածի պէս դողալ-դողդողալ, մինչեւ որ գրկեց նրա բարակ ու դիւրաթեք մէջքը եւ գլխով ցոյցտալով երկրորդ սենեակը, շշնջաց.

— Գնանք, Լիզխէ՛ն...»։

Գեղեցկուհին, որ լաւ ծանօթ էր նրա մարմնական սրսըթոցին, իր մէջքի նրա խրովլի գրկումին, հագիւ-հազ սպառած նրա «գնանքին», որ գիտէր, թէ նա ուր է ուզում տանել իրեն եւ ինչ է սպասում իրեն, բայց եւ այնպէս հարցրեց պչրանքով.

— Warum, Aram...?:

— Ա՛հ, դու գիտես, Լիզխէ՛ն..., — բարկացաւ նա եւ տեղից շարժեց նրան։

Գեղեցկուհին, որ հալչում էր նրա սրսթացող գրկում, որ պատրաստ էր նրա հետ ո՛չ միայն մինչեւ երկրորդ սենեակը գնալ եւ մինչեւ լոյս նրա հետ անցկացնել, այլեւ՝ աշխարհի ծայրը գնալ եւ ամբողջ կեանքը նրա հետ անցկացնել, բայց եւ այնպէս անհուն բաւականութիւն էր զգում, երբ տառապեցնում էր ու բարկացնում էր։ Երբ խաղում էր նրա հետ։ Երբ տառապեցնում էր ու բարկացնում էր։ Երբ խաղում էր նրա հետ։ Երբ ինչպէս կացնում նրան, ինչպէս որ անում են, բոլոր իրական կանայք։ Ինչպէս, կացնում նրան, ինչպէս որ անում էր ինքը միշտ։ Նա շարունակում էր հրճուել նրա սիրային անհամբերութեամբ, երբ բռնելով երկրորդ սենեակի դրան շրջանակը, կանգնեց եւ ասաց շատ լուրջ.

— Ես ուզում եմ քեզ թէյով հիւրասիրել, Արա՛մ։

— Այդ վաղը, վաղ առաւօտեան, Լիզխէ՛ն,— ասաց նա, եւ փորձեց նրա ձեռքը հեռացնել դրան շրջանակից։

— Ինչո՞ւ ոչ հիմա, Արա՛մ։

digitised by A.R.A.R.@

Ներքին բոցերի խորովումից մռայլ, նա անձկութեամբ նայեց այնքան ցանկալի անկողնակալի կողմը, եւ յանկարծ ծիծաղեց մեղանչական.

— Որովհետեւ, Լիզխէ՛ն, հիմա մենք պիտի զբաղուենք հայ-գերման բարեկամութեան հաստատման շարունակութեամբ, որը մէկ շաբաթ է ինչ ընդհատուել է...:

Գեղեցկուհին ծիծաղեց զրնգուն, թողեց դրան շրջանակը, բռնեց նրա մազերից եւ նրա գլուխը շարժեց այս ու այն կողմը.

— Du list ein Schwein Aram! Sage, litte, du list ein Sehwein, Aram...!:

Չնայած մազերի ձգումից գանկի վրայ առաջացած ցաւին, նա ծիծաղեց երջանիկ, որովհետեւ փորձից գիտէր, որ երբ իր սիրուհին մարմնական ցաւ է պատճառում եւ կամ էլ վիրաւորում է անմեղ մի ածականով, այդ նշանակում է, որ նա պատրաստ է անվերջ ու անդադրում ենթարկուելու նրան: Տրամադիր է՝ ո՛չ միայն առանց գանգատի, այլեւ՝ սիրով կրելու վայրագօրէն նրա անվերջանալի յարձակումները: Եւ անհամբերութիւնից խելքը թռցրած, նա շտապեց, որ սիրուհին քայլի մինչեւ անկողինը, այլ յափշտակեց նրան ու տարաւ, ինչպէս երիտասարդ առիւծը յափշտակում ու ծառի ստուերն է տանում թրթռուն ու նրբահիւս մարմնով եղնիկին, այնտեղ յօշոտելու եւ լափել-լափլփելու համար նրան:

Եղիզաւետա Մարկովնան պինդ-պինդ գրկեց նրա վիզը եւ ամաչելով շուտով անխուսափելիօրէն սկսուելիք սիրապատկերներից, սկսեց ծիծաղել արհեստական:

## ԺԴ.

Յունիսի վերջերին վերջացաւ ուսումնական տարին եւ Արամը լրացրեց միջնակարգ դպրոցը:

Աւարտականների բաշխման հանդէսից նա տուն չգնաց, այլ իր սիրուհու հետ գնաց նրա բնակարանը եւ սկսեց ամէնքի համար յայտնի կերպով կենակցել նրա հետ:

Շատերը նախանձում էին նրան, շատերն էլ դատապարտում, նրա արարքը, հայկական բարոյական հասկացողութիւններին դէմ բան համարելով: Նրա հօրեղբօր կինը չէր խօսում նրա հետ, իսկ հօրեղբայրը ցոյց էր տալիս, որ ոչինչ չի տեսնում: Իր սիրուհու հետ միասին, գիշեր թէ ցերեկ, նրանք փակուած էին բնակարանում եւ ամէնքը ցանկանում էին գիտնալ, թէ նրանք ինչով են զբաղուած օրը քսան չորս ժամ շարունակ:

Մի օր էլ նրանց բնակարանի դուռը խփեցին: Թղթատարն էր: Նա ստացաւ հեռագիրը եւ պարզեց սիրուհուն:

— Կարդա՛, — ասաց Եղիզաւետա Մարկովնան:

Նա կարդաց, գունատուեց, եւ թուղթը նետեց յատակին: Նրա սիրուհուն յետ էին կանչում:

— Մի գնա՛..., — խնդրեց նա այնպէս, որ թուաց, թէ աղօթեց:

Սակայն նրա սիրուհին նրան նայելով մեղանչական, գլուխն օրօրեց հաստատապէս բացասական:

Միւս օրը, երբ նա սիրուհու հետ կայարան էր գնացել նրան ճանապարհ դնելու, ճակատամարտը կորցրած զօրավարի նման մռայլ էր:

digitised by A.R.A.R.@

Ելիզավետա Մարկովնան գիտենալով, թե ինչ է ապրում նա, անվերջ խոսում էր՝ նրան զբաղեցնելու համար։

— Զարմանալի է..., — միրուհուն ընդհատեց նա, որի խոսակցությունը չէր լսում։

— Ի՞նչն է զարմանալի, Արա՛մ, — պատրաստ նրա վզովն ընկնելու, հարցրեց երիտասարդ կինը։

Նա գիտեր, որ ապարդյուն են իր ջանքերը՝ սարհամոզելու այդ կնոջը, բայց և այնպես ասաց.

— Քո վերաբերմունքը...։

Երիտասարդ կինը ժպտաց նրան.

— Արամ, քեզ զարմանալի չէր թվայ իմ վերաբերմունքը, եթե անմախրոնիստի քո այդ պինդ գլխում չգետեղվեր, թե «սեր» կոչվող հիվանդոտ զգացում գոյություն ունի...։

Նա նոր էր ոտք դրել երիտասարդության շեմին և չէր ճանաչում կնոջը։ Նա չգիտեր, որ ավելի դյուրին է գետի հոսանքը յետ դարձնել, քան մի կնոջ գլխից հանել ամենաթեթև հասկացողությունն անգամ, որին նա հավատում է։

— Բայց մոտ յոթ ամիս մենք միմյանց սիրեցինք ամենաջերմ սիրով... Իսկ ես դեռ շարունակում եմ սիրել քեզ, — ասաց նա։

— Ո՛չ, Արամ, յոթ ամիս մենք միմյանց կապվեցինք ամենաջերմ համակրանքով։

— Լավ։ Ինչո՞ւ չշարունակել այդ համակրանքը։

Գեղուհին կարմրեց, երբ նորից գովաբանեց նրան։

— Գիտե՞ս, Արամ, այդ յոթն ամիսների ընթացքում ես այնքան եմ ստացել քեզանից, որ էլ տեղ չկայ...։

— Սիրը կերակուր չէ, որից կշտանան, տիկի՛ն, — չարությամբ ասաց նա։

— Սէր չկայ, Արա՛մ, դու էլ գիտես այդ։

— Ես նման բան չեմ ասել։

— Չես ասել, որովհետև ուզեցել ես ծածկել, Արա՛մ։

Եթե կատամաստայցում հավաքված և գնացքին սպասող բազմությունը չլինէր, նա թերևս հարուածէր այդ գեղեցիկ կնոջը, որին նա հարիւրավոր ժամեր իր գրկումն էր ունեցել։ Սակայն, նա կիրթ էր և բազմությունն էլ նրանց էր նայում։ Բազմությունը ցանկանում էր նրանց միջև օտար լեզուով տեղի ունեցող խոսակցությունից մի բան հասկանալ։ Վիճող զոյգը գեղեցիկ էր, իսկ գեղեցիկ զոյգը միշտ էլ հետաքրքրություն է առաջ բերում։

— Ես շատ պիտի ուզենայի, որ մենք երբեք հանդիպած չլինէինք, Լիզա՛։ Երբեք, — ասաց նա և լռեց։

Գեղեցկուհին նայեց նրան և ժպտաց սիրալիր։ Ցետոյ երկարեց իր կիրթ ձեռքը և շոյեց նրա դէմքը.

— Ա՛հ, Արա՛մ, շատ մի տառապիր, շուտով դո՛ւ ինձ կը մոռանաս, երբ մի ուրիշի հետ կապուես։

— Ինչպե՞ս կարող եմ մի ուրիշի հետ կապուել, երբ քեզ եմ սիրում...։

— Բայց դու կապուեցիր ինձ հետ, երբ նախապէս Գոհարիկ Աւագեանն էր սիրում քեզ։ Վերադարձիր նրան։

digitised by A.R.A.R.@

Նա նորից ուզեց համբուրել նրան, բայց ասաց.

— Գոհարիկը գիտէ մեր մասին: Եւ հիմա, երբ դու ինձ առաջարկում ես վերադառնալ նրան, վիրաւորում ես ե՛ւ Գոհարիկին, ե՛ւ ինձ:

— Ինչո՞ւ:

— Հայ կինը քեզ պէս չէ, Լիզա՛...:

Գեղեցկուհին կարմրեց, բայց ուզեց ցոյց տալ, որ չվիրաւորուեց:

— Ամէն ազգի դուստրը նոյնն է, Արա՛մ:

— Այդ ցանկից հանիր հայ ժողովրդի դուստրը, Լիզա՛:

— Բայց, դու այդ ժողովրդի զաւակն ես ու կապուել ես ինձ, օտարուհու հետ, Արա՛մ:

— Այդ իմ ամենամեծ սխալն է եղել, Լիզա՛:

— Հաստա՞տ..., — հարցրեց օտարուհին ծաղրանքով:

Նա չպատասխանեց:

Երիտասարդ կինը նորից ծիծաղեց ծաղրանքով: Սակայն, նա անկեղծ էր, երբ ասաց.

— Արամ, դու փորձում ես վիրաւորել ինձ, բայց այդ ոչինչ, որովհետեւ հասկանում եմ քո հոգեվիճակը: Սակայն, մինչեւ իմ մեկնումը նորից եմ ուզում ասել այն, որը մի քանի անգամ եմ ասել: Ուրախ եղիր, որ ես մեկնում եմ, եւ դու ազատւում ես ինձնից: Գլխիցդ հանիր այդ հին «մի կին մի սէր» մտայնութիւնը: Դու անսահմանօրէն գրաւիչ ես: Եթէ իրապէս, քո բուն երկրում դու չես կարող օգտագործել քո այդ գրաւչութիւնը, գնա՛ Եւրոպա: Դու եւրոպացի կնոջ համար ես ստեղծուել: Այնտեղ, դու փայլ կը դառնաս, քանի որ գեղեցկուհիները շուրջդ պիտի դառնան, ինչպէս թիթեռնիկները լամպի շուրջը...:

— Լիզա՛, խնդրում եմ, որ չխօսես այդ մասին, որովհետեւ, իրապէս, դու վիրաւորում ես ինձ..., — ասաց նա:

— Ներիր ինձ, Արա՛մ, — նորից անկեղծօրէն ասաց երիտասարդ կինը, եւ լռեց:

Նա այժմ շատ էր ուզում, որ գնացքը շուտ շարժուէր եւ նա գնար: Բայց, երբ երրորդ զանգը խփեցին, նա վախեցաւ եւ շտապ հարցրեց.

— Ասա, Լիզխէ՛ն, մի՞թէ դու չես սիրում ինձ...:

— Ես վախենում եմ քո գրաւչութիւնից, Արա՛մ, — ասաց Ելիզաւետա Մարկովնան եւ ուզեց վերցնել պայուսակը:

— Մնա՛, Լիզխէ՛ն, մի՛ գնա, — աղերսեց նա:

Սակայն, Ելիզաւետա Մարկովնան իր չքնաղ թեւերով փաթաթուեց նրա վզով եւ սկսեց ջերմօրէն համբուրել նրան: Ցետոյ չչնջաց նրա ականջին.

— Միշտ պիտի յիշեմ քեզ: Եւ, երբ մի օր մի թագուհու սիրահարեցրնես վրադ, ես ինձ շատ հպարտ պիտի զգամ, որովհետեւ ես առաջինն եմ քո սիրուհիների ցանկում...:

— Թագուհիները սիրուելիք բաներ չեն, — սարկաստիկ ծիծաղեց նա, չար ու մռայլ:

— Բայց եւ այնպէս թագուհի են: Ցտեսութիւն, Արա՛մ...:

Նա այնքան էր ապուշացել, որ, նոյնիսկ, չպատասխանեց:

Երբ գնացքը շարժուեց, նա բարձրացրեց գլուխը, եւ նոր միայն տեսաւ, որ իր սիրուհին գլուխը դուրս է հանել պատուհանից, եւ նրան է շարժում իր նուրբ ձեռքը:

Նա էլ ուզեց նոյնն անել, բայց առանց իրեն հաշիւ տալու փախեց մխո—

digitised by A.R.A.R.@

քը, եւ կառամատոյցի վրայով վազեց այլեւս սուրացող գնացքի յետեւից։ Վազեց այնքան, մինչեւ որ սայթաքեց եւ փռուեց աւազի վրայ։

— Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ..., — երեկոյեան հեռաւոր ու կապոյտ մշուշում սուլեց գնացքը սրտակեղէք, մելամաղձոտ։

Թէեւ նա գիտէր, որ գնացքները միշտ այդպէս են սուլում, երբ հեռանում են կայարանից, բայց եւ այնպէս ասաց ինքն իրեն.

— Այժմ մեր բաժանումը կատարեալ եղաւ։

Լսելով իր տխուր ձայնը, ուզեց ժպտալ, ուզեց ծաղրել իր զգացականութիւնը, բայց չկարողացաւ։ Նա վախեցաւ։ Հասկացաւ, որ եթէ տեղն ու տեղն իր մէջ չյաղթահարի իր սիրուհու պակասի պահանջը, ապա երկար-երկար ժամանակ պէտք է տառապի։

— Չեմ կարծում կնոջական մարմնի պակասը, նոյնիսկ կնոջական գեղեցիկ մարմնի, ինչպիսինն էր Լիզայինը, կարող է ինձ համար մտահոգութեան պատճառ դառնալ, — ցինիկաբար խրատեց նա ինքն իրեն։ Բայց անմիջապէս զգաց, որ մեղանչում է իր դէմ, Ելիզաւետա Մարկովնայի դէմ, ճշմարտութեան դէմ։

Ճշմարտութիւնը սէրն էր։

Հառաչեց։ Ելաւ տեղից, ծնկերը սրբեց տուն դառնալու համար, եւ ակամայօրէն իր շուրջը նայեց։ Երբ այդպէս արեց զգաց, որ մի բան, մի շատ կարեւոր բան պակաս է ե՛ւ իր մէջ, ե՛ւ իր աշխարհում, եւ իրեն անտանելիօրէն մենակ զգաց։ Ա՛յնքան մենակ, ինչպէս կալանաւոր բանտի մենախցիկում։

Այդտեղ էր, որ նա հասկացաւ, թէ իր տխրութիւնը միայն իր սիրուհու գեղեցիկ մարմնի պակասից չէ, որ առաջացել է, այլ նրա ամբողջական պակասից։

Նա հասկացաւ, որ սիրուած կինը նոյնանում է կեանքի հետ եւ իմաստ է տալիս կեանքին։ Եւ, որովհետեւ կինն է մնում կեանքը, ապա կնոջ եւ կեանքի միջեւ տարբերութիւն չի լինում։ Կինը կեանքի նման դառնում է ե՛ւ ցանկալի, ե՛ւ կեանքի նման դժուարին։

Հրաշալի է դառնում, երբ կեանքի նման ժպտում է ու հնազանդւում։ Անտանելի է դառնում, երբ կեանքի պէս քմայքներ է ցուցադրում ու ծառանում։ Բայց երբ ձգում է ու հեռանում, անհուն տխրութիւն է ստեղծում, հոգեկան անսահման ամայութիւն ու մենակութիւն։

Կնոջն իշխանութիւն պէտք չէ։ Նա աշխարհի տէրն է, ի՛ր սէրով, ի՛ր գրաւչութեամբ, ի՛ր կանացիութեամբ, եւ հենց այն բանով, որ ինքը կին է։

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ

(Շար. 6 եւ վերջ)

digitised by A.R.A.R.@

# ՆԿԱՐԻՉԸ ԵՒ ԱՐԵՒԸ

Արեւը եւ մարդը:

Արբենալ արեւով, պաշտել, արեւին համար ապրիլ:

Ցնցոտիներ հագած, տկար մարմին, անօթի, հոգիին մէջ ճանանչներ:

Գոյները բռնած կը գալարուի դէպի ակը:

Ցորենի արտեր, արեւածաղիկ, ձիթենիներ, ծաղկած մրգաստան: Արե՜ւ, արե՜ւ: Խռնարհները: Երկրին աղը: Տառապիլ, անձկութիւն, մարմինը եւ պուտ մը սէր, եղբայրական ձեռքը: Աղօթք: Արեւին հասնելու համար:

Գո՜յն, գո՜յն: Լոյսի բեկումը երկրի վրայ: Տուները եւ կապոյտը, մարգերը, մարդ էակը տեղ մը·— արեւի արտայայտութիւններ իրեն համար: Առանց լոյսի, — ոչընչութիւն, ցուրտ, խաւար: Ոչ ծաւալ, ոչ ձեւ: Լոյսն ալ արեւին անդրադարձումը:

Ահա կը բարձրանայ լոյսի սանդուխներէն: Ամբողջ գիշերը կռուած է հրեշտակին հետ: Վե՜ր, վե՜ր, աւելի մօտ: Զգողականութիւնը շրջած: Երկիրը չքաշեր զինք: Իր տրամը՝ անհաւասար պայքարը երկրագունտի եւ արեւի ձգողականութեան:

Գիտէ, որ ժամանակը կը հատնի: Ճակատագրականօրէն կը զգայ: Սեւեռել պաստառին վրայ արեւը: Վախճանը կը տեսնէ ամէն պահ: Անցաւորին եւ տեւականին բախումը, ափսոսանքը անկարելիին: Մարդը երկրագունտին վրայ, արեւին շուրջ, տիեզերքին մէջ: Միայն կրնայ պահին կառչիլ: Արբենալ, անէանալ, մարմինը հրկիզել՝ հոգին ապրեցնելու համար: Գիտէ, կը զգայ, որ վախճանը մօտ է: Կը նկարէ ցերեկը, գիշերը· արեւը հոն է միշտ: Պիտի մնայ, երբ արեւը ինքը մարի: Դեռ դարեր պիտի մնայ, իր իսկ մոխրացումէն ետք: Հոս, այս պաստառներուն վրայ, ժամանակին եւ միջոցին մէջ:

Ու կը բարձրանայ դէպի ակը, վեր, աւելի մօտ: Գոյն եւ թրթռացում միայն: Թրծող ջերմութիւնը կը գրկէ զինք: Ցորենի արտերը, կապոյտ անսահմանը, կանաչ տարածութիւնները: Մնաք բարով: Սեւ ագռաւներ: Պայթիւն մը ուղեղին մէջ: Արեւուն մասնիկը միացած է ամբողջին: Պայքարը դադրեցաւ: Տիեզերական հոլովոյթը կը շարունակուի:

Վարը·— Գոյնին հրաշքը, հսկայական արեւը կտոր մը պաստառին վրայ:

Նոյնքան, թերեւս աւելի իրական եւ զգայուն...

*Լոս Անճելըս*

Բ. ԿՌԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Յ. ՋՈՐԵՑԻ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ

«Խենթ» Հայը հին բիւզանդական եւ հայկական ճամբաներուն վրայ

Դ.

## ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

*Պոլսոյ թանգարաննե՛րը.—*

*Մուսթաֆա Քեմալ փաշայի կեանքին ու գործին վերաբերեալ նոր «Հնութիւններու» պալատ ԱԹԱԹԻՒՐՔ ՄԻՒԶԷՍԻ,*

*ՉԻՆԻԼԻ ՔԷՕՇՔ — իսլամական,*

*ԱՐՔԷՕԼՕԺԻ ԷՍԿԻ ՇԱՐՔ ՄԻՒԶԷՍԻ — անունը վրան,*

*ԱՅԱ ՍՈՖԻԱ ՄԻՒԶԷՍԻ — երբեմնի Ս. Սոֆիա հռչակաւոր եկեղեցին,*

*ԹՕՓ-ՔԱՓՈՒ ՍԱՐԱՅ Վէ ՀԱԶԻՆԷ — պատմական կամ օսմանեան:*

*Հնագիտական թանգարանը կրնայ հպարտանալ եւրոպական ամենաճոխ միւզէներուն դիմաց իսկ:*

*Ինչե՞ր տեսայ հոն.—*

*Մեծն Աղեքսանդրի տապանաքարը, ուրը.— թերեւս անո՛վ կորած է Գորդեան Հանգոյցը...*

*Սիտոնի մեծազօր արքային մոմիան՝ շքեղ դագաղի մը մէջ...*

*Հզօր Սելեւկիոսի անգին թագը, մականը,*

*Եւ դեռ՝*

*Հռոմէական կոթողներ, բիւզանդական մերկ արձանուհիներ, փայլը պատմութեան մէջ ձգած վահաններ, գեղարդներ, պոնտական խոյակներ, արձանագրութիւններ, ուրարտական աստուածներ, եւ...* անատոլեան *(իմա* հայկական) *հնութիւններ...,*

*Տեսայ զանազան ազգերու արուեստին քաղաքակրթութեան բարձր չափանիշը ճանչցնող ինչ-ի՛նչ թողօններ...*

digitised by A.R.A.R.@

Իսկ Թուրքէն… ոչի՛նչ։

Ունայնութիւն է Թուրքը․ անոր ունայն հնութիւններ այլ տեղ, Պատմագիտական Թանգարանին մէջ։

Թուեմ հոն տեսածներս ալ.—

Օսմանեան զահեր, սուլթաններու նկարներ, հարէմական զարդեր, սուլթան Սէլիմի օրէն մնացած ջահեր, ծաղկամաններ…

Աչքի կը զարնեն քաստուրաներն ու նարաղաները իրենց լայնքով եւ… չառուլթեա՛մբ…

Թուրքի՝ պատմութեան թանգարանն է ի վերջոյ, եաթաղանը հոն քիչ ըլլայ, ի՞նչը շատ ըլլայ… տեղ-տեղ արեւելեան սպանդանոցի չնմանի, ի՞նչի՞ նմանի…

Օսմանեան «անթիքա»ներուն շարքը չի վերջանար այսքանով․ պատմական ուրիշ «մեծարժէք» հնութիւններ ալ կան փեղկերու մէջ, ժանժան թաւիշներու վրայ՝ հնդկական զոհարներու պէս փայլուն։

Այսինչ կամ այնինչ սուլթանի ձիուն պայտերը, ոսկի սանձը, ակնազարդ սէմէրը, սապանդակները, որոնք ընակալներու ոտնամաններուն դըրած «նուիրական» իրեր են Թուրքին համար…

Աւելի «թանկագիններէն»՝ —

Մօրուքի սանտրեր, նարկիլէի գլուխներ, արծաթ մաշաներ, արքայական մէօհիւրներ, ֆէրէթէներ, փէսեր, փաթթոցներ, չքանչաններ…

Ուրիշ բաներ չէր կրնար շարել Թուրքը, Թանգարանին թաւշապատ փեղկերուն մէջ։

Ահա ասոնք էին Թուրքին ձգածները.— սանտր, նարկիլէ, ֆէրէթէ, մաշա, մէօհիւր, նարաղան եւ… չքանչա՛ն…

Ասոնց դիմաց, ես ինծի, պատկերացուցի օսմանեան պատմութիւնը, այսպէս.—

«Նորին վեհափառութիւն» սուլթանը առտու շատ կանուխ արթնցաւ։ Արշալոյսը դեռ չէր բացուած Վոսփորին վրայ…

Միապետը ելաւ անկողինէն։

Հոգիին չափազանց անհանգստութիւնը մոռցնել տուած էր իրեն Եէշէլի ներկայութիւնը չէրքէզ ճէյրանուհիին, որ սիրուն մերկութեամբ կը քնանար, թեւերն ու սրունքները անհամաչափ, բայց շնորհալի ձեւերով տարածած…

Ցորենագոյն կիւզէլը, կին ըլլալէ աւելի, կայսերական լայնկեկ մահճակալին սարդանման զարդն էր կարծես, փարթամ անկողինին մէկ մասին վրայ…

Դաժան սուլթանը, լռութեան մէջ, կանգնած մնաց մի քանի վայրկեան․ յետոյ, առանց հարճին նայելու (…կո՛ւշտ էր) մտաւ նախասենեակ ու ծափեց․

— Սապահ իւլ խէ՛յր, փատիշահըմ…

— Կիւնէշը ձեզի՝ համար թող ծագի…

— Օրը լա՛ւ ըլլայ…

Այսպիսի մաղթանքներով, պալատական ներքինիները ներս մտան, թէմէննահ ըրին մի քանի անգամ, ապա՝ սկսան հագցնելու արարողութեան…

Վոսփորը կը գունաւորուէր առաւօտեան շողերով…

Տոլմա-Պահչէի ճնճղուկներուն համերգը բաց պատուհանէն ներս կը հոսէր, գեղարուեստականացնելու համար զգեստաւորուիլը սուլթանին…

digitised by A.R.A.R.@

Հալանները փառաբանանքի փշրանքներ մլաւելով, միապետին գլխուն կապեցին փաթթոցը. մէկը գօտին կապեց, միւսը մօրուքը սանտրեց, ուրիշ մը վերարկուն կոճկեց։

Ծերուկ Ներքինի մըն ալ բերաւ արծաթեայ ֆէրէջէն, հագցուցին կայսեր... փոթինները։

Ի վերջոյ, բերին սուլթանական փիլոնը, նետեցին օսմանեան պետութեան թիւ 1 էֆէնտիին գրեթէ կուզ կռնակին...

Փոթին, փիլոն...

Սուլթանը հագած էր վերջնականապէս։

Ջայրոյթէն դողացող քայլերով, քթին տակէն բաներ մը մռլտալով ու յառաջացաւ դէպի սրահ, նստեցաւ գահուն։

Ան այնքան մռայլ տեսք չէր ունեցեր երբեւիցէ. ահաւոր բարկութիւնը աչքերէն կը ժայթքէր ուղղակի...

Սուլթան չօք տարըլմըշ...

Պատճա՞ռը.

Ատանայի մէջ հայ ֆոմիթաճիներ հրապարակ ելեր, փաթըրթի ըրեր են, օսմանեան տէօվլէթին դէմ դրեր են...

Ինչո՞ւ.

Թուրքերը, յաճախ, հայուն վնաս կը հասցնեն եղեր, հայու աղջիկ, սիրուն կնիկ կ'առեւանգեն եղեր, հայուն ցորենը կը կողոպտեն, մշակը մէկ փամփուշտի փայ կ'ընեն եղեր...

Թող առեւանգեն, թող կողոպտեն, թող մեռցնեն, նէ՞ օլուր, այդպիսի բաներու համար բողոք բարձրացնե՛լը ինչո՞ւ...

— Ձե՛նք դիմանար.

— Ձե՛նք հանդուրժեր, — կ'ըսեն եղեր. իրաւունք չունին. պէտք է դիմանան, պէտք է հանդուրժե՛ն. կեավուր ըլլալը խօլա՞յ է...

Իրենց ինչի՞ն վստահելով ինկիլիզէն ու ֆրանսըզէն բարեխօսութիւն կը խնդրեն, օսմանեան սուլթանութեան դէմ գլուխ կը բարձրացնեն...

Փէ՛ֆի. այդ գլուխները պէտք է գետին իյնան, որպէսզի լաւ հասկընան, թէ ի՞նչ կը նշանակէ եւրոպացիներուն հետ խնամիանալով գաւառներուն մէջ խելօք չմնալը...

Բանակային աչքերը ճիւաղային փայլ մը առան, կատաղութիւնը բազմապատկուեցաւ...

— Շէքի՛ր...

Պալատական քարտուղարը, անսահման խոնարհութիւններով, մօտեցաւ սուլթանին։

— Շէքիր, հիմա՛, ա՛յս վայրկեանիս, հեռագրէ Ատանայի կուսակալին, թող ջարդեն այդտեղի բոլոր հայերը...

Թանգարանի թաւշապատ փեղկերուն մէջ շարուած մէօհիւրներէն արդեօք ո՞ր մէկով կնքուեցաւ դաժան հեռագիրը...

Անշուշտ, սա անկիւնը շարուած եաթաղաններով գործադրուեցաւ մեծ ոճիրը...

Թանգարանային պատկերը ամբողջացնելու համար գոնէ մի քանի սակէրներ, պաշըպղըզուքներ ալ զմրուխտին եւ դնէին եաթաղաններուն քով, կարմիր պատուանդաններու վրայ։

digitised by A.R.A.R.@

*Կայսերական հրամանը կատարուած ըլլալուն լուրը երբ Պոլիս հասաւ, միապետը այլեւս հանդարտած, այլեւս գոհ, Ելտըզ Քէօշքի Վոսփորահայեաց սենեակներէն մէկուն մէջ, թերեւս այս զարդարուն* նարկիլէներէն *մին դիմացինը դրած,* թէմպէքի *վայելեց՝ անօրինակ երջանկութեամբ...*

*Իր քով յարգալից կեցող* լալան՝ *հարկաւ սա արծաթ* մաշան *գործածեց, անուշահոտ* թէմպէքիին *կրակը մերթ ընդ մերթ փոխելու ատեն։*

*Օսմանեան պատմութիւնը պատկերացնելու համար, «Թանգարանային» բազմաթիւ «հում նիւթեր» գործածեցի։*

*Մնաց չքանշանը միայն։*

*Այս մէկը, իր տեսակին մէջ ամէնէն փայլունը, իսկական բնորոշումով, Թրքական չէ արդէն.* մէյտ ին ճէրմանի *է. Ատանայի եւ հայկական այլ գաւառներու Ջարդերէն ետք, Գերմանիոյ կայսեր կամ Անգլիոյ Թագուհիին կողմէ կարմիր սուլթանին ղրկուած ըլլալուն՝ մաս կը կազմէ կիրթ Եւրոպայի քաղաքական անկրթութիւններու պատմութեան։*

Ե.

## ԵՐԲ «ԵԼՏԸԶ»ԻՆ ԱՍՏՂԸ ՄԱՐԻ

*Դիրքով ու տեսքով հոյակապ Ելտըզ Քէօշքը ինքնին թանգարան մըն է արդէն։ Կը գտնուի աշխարհի ամենագեղեցիկ մէկ դիրքին վրայ, Վոսփորի դիմաց։*

*Ապտիւլ Համիտի այս փարթամ որջը դիցաբանական հրաշակերտ ապարանքներու նախանձը կրնայ շարժել իր գեղեցկութեամբ եւ պատկառելի շինուածքով։*

*Մտնելէ առաջ՝ կ'արժէ պահ մը կենալ վիթխարի դրան առջեւ, եւ, նո՛յն պալատին մասին, անցեալին ու ներկային բաղդատականը ընել։*

*Ուրեմն.—*

*Սուլթան Սէլիմի շինել տուած այս* չինիլի քէօշքը, *օսմանեան կայսրութեան փառքի կամ... Համիտաշունչ օրերուն, մեզի պէս հասարակ մահկանացուներու համար, անկարելի էր մօտենալ կամ շրջիլ չորս բոլորը «*Ելտըզ*»ին, գոնէ արտաքինը տեսնելու սիրոյն։*

*Պարագան նոյնն էր* Տոլմա-Պախչէի *ապարանքին համար եւս. պարտէզին հեռաւոր մէկ անկիւնէն, խորհրդաւոր մէկ խուցէն, Թրքական* մարթինը, *անմիջապէս, պղինձէ բարակ եւ սրածայր* տոլմա *մը կը հասցնէր դիտողին ճակտին...*

Ելտըզէն *ներս մտնելու «պատիւը» միայն ներքինիներու եւ ներքին գործոց* վէզիրներու, սատրազամներու *վերապահուած էր...*

*Համիտին կեանքէն առնուած վէպէ մը կը յիշեմ, թէ շատեր, անկարելին կարելի դարձնելու համար՝ անման հարճերուն ծառայելու (փո՛ւճ) երջանկութեան ի խնդիր, կամաւորօրէն... ներքինիացած են...*

digitised by A.R.A.R.@

*Սա ժամանակ ըսուածին կարողութի՛ւնը սիրեմ. իր ուզած ձեւով կը կարգադրէ ամէն ինչ, իր փափաքած եղանակով հեշտ կը դարձնէ ամէն բան:*

Ժամանակը *հզօր հարթարարն է արգելքներու, դժուարութեանց:*

Ժամանակը *մեծագոյն յեղափոխականն է եւ անդերազանցելի յեղաշրջողը:*

Ժամանակը *կայսրութիւններ, թագաւորութիւններ կը կործանէ, անկարելին հեշտօրէն կ'ընէ կարելի, բոլորովին հասարակ:*

*Ժ.ին յաղթական ընթացքը հողին կերցուց, կամ Վոսփորի ջուրերուն մէջ տարրալուծեց ձկնագեղ մարմինները պալատական կանանոցի կիւրճիւ, չէրքէզ, չէչէն* հանըմներուն...

*Իսկ Սուլթան Համիտն ալ — «*Ըլտըզ*»ի* քոխմախճին, *— զրկեց պատմութեան չիրքէֆ վայրերը...*

*Օսմանեան կայսրութիւնը կործանեցաւ, «*Ըլտըզ*»ին աստղը մարեցաւ...*

*Հիմա ուրեմն՝*

Քէօշքէն *ներս մտնել ուզողը ներքինիանալու պարտաւորութիւն չունի երբեք:*

*Կորեկիքը...* փիշ *մըն է միայն...*

Զ.

## ԵԱ՛ՍՍՈՒ, ԵԱՍՍՕ՛ ԱՐՄԷՆԻՔՕ...

Փիշը *(անշուշտ ուրիշ ոչի՛նչ) կորած էինք արդէն, չնչին գումար մը վճարելով:*

*Մտանք ներս:*

*Պալատին բոլոր դահլիճները, վոսփորահայեաց սենեակները, բաղնիքներն ու միջանցքները պտտեցանք:*

*Հիմա օսմանեան կայսրութիւնը հաշուի առնողը ո՞վ:*

*Ես նոյնիսկ... մի քանի սիկարէթ ծխելով, ապրումներ ալ ունեցայ, ի վերջոյ հայութեամբս հպարտացայ...*

*«*Ըլտըզ*»ը վէպերու անցած է, յաճախ իրմո՛վ վէպ շինուած է՝ մարդակեր Ապտիւլ Համիտին կեանքին, արարքներուն եւ... աւելի քան երեք հարիւր կիներուն շնորհիւ:*

*«ԳԱԶԱՆԸ ԳԱՀԻՆ ՎՐԱՅ»,*

*«ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ՉԷՐՔԷԶՈՒՀԻՆ»,*

*«ՎՈՍՓՈՐԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ»,*

*«ՍԱԼԻՀԱ ՀԱՆԸՄ»,*

*«ԸԼԼՏԸԶԻ ԶԱՐ ՀՈԳԻՆ»,*

*«ՕՐՄԱՆԵԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ»,*

*«24 ԺԱՄ ԸԼԼՏԸԶԻ ՄԷՋ»,*

*«ԱԳՏԻՒԼ ՀԱՄԻՏ ԵՒ ՇԷՐԼՕՔ ՀՈԼՄՍ» գիրքերը եթէ կարդացած էք, եւ չհեռանալ ալ երթաք քարո՛վ, Զինեւի Քէօչքին մէջ, ներկայէն չէք կրնար չհեռանալ ու չկորսուիլ անցեալի Համիտ-Հարէմ-Հանըմ մթնոլորտին մէջ...*

*Արդէն հո՛ն է «Ըլտըզեան» ապրումներու հաճոյքը, հո՛ն է վիպային վերացումի գինովութիւնը, կարդացած ըլլալու մէ՛ջ:*

digitised by A.R.A.R.@

*Ես, պատանեկան օրերէս, նման վէպերու ընթերցող եղած ըլլալուս, կրցայ վայելել վերացումի գինովութիւնը։*

*Համիտի պալատին չքեղ առաստաղներուն տակ, պերճ կամարներուն ներքեւ, «ճամբորդեցի՛» դէպի... եւ, դէպի օսմանեան կայսերական կեանքը...*

*Քէօշքին մէջ, բանականութիւնս ա՛յնքան յանձնուեցաւ պատրանքին, որ յուսացի բաներ, պատկերային փնտրանքներ տեսնել ապարանքին խորհրդաւոր անցեալէն, տեսնել արարիկներ անհետացած պալատականներու առօրեայէն...*

*Կարծես՝*

*Կարմիր Սուլթանին, դաժան* սադրազամին *եւ* վէզիր*ներուն, այսպէս ըսուած՝ թանձրացեալ ներկայութիւնը ինծի հետ կը շրջէր չքեղ դահլիճներն ու սենեակները...*

*Կարծես խստօրէն կը հսկէր վրաս...* Յամիթաճի *չէի՞ արդեօք...* «Եըլտըզ»*ը օդը հանելու նպատա՞կ չունենայի... կամ՝ ահաբեկո՛ւմ մը չկատարէի... հայ եմ ի վերջոյ... ինծի վստահիլ չ՚ըլլար...*

*Թէ* «Եըլտըզ» *այցի եկած միւսները ի՞նչ հոգեվիճակ ունէին այդ պահուն, դժուար էր գիտնալ։*

*Ինչու որ՝*

*Անցեալէն ու վէպերէն հոգիիս վերադառնալը անկարելի կ՚ըլլար հետըզհետէ...*

*Երբ հարէմի բաժինին մօտեցանք; ինծի այնպէս թուեցաւ, թէ* սադրազամ*ին,* վէզիր*ներուն թանձրացեալ ներկայութիւնները* վազ *անցան մեզմէ,*

*Եւ,*

*Զիրենք փոխարինեցին... փափկացեալ* մէվճուտ*ութիւնները չէրքէզ, չէչէն գեղուհիներուն ու տարփակէզ* խանըմ*ներուն...*

*«Մեղքս» չպահեմ...*

*Սուլթան Համիտի կանանոցին մէջ ա՛յնպիսի դող մը անցաւ ներսէս, եւ ուղեղիս տուաւ անցեալ մեկնած ըլլալու ա՛յնպիսի անօրինակ համոզում մը, որ օսմանեան շրջանէն մնացած իրերը այլեւս մոռցայ դիտել ու չմնացած իրողութիւններով սկսայ հետաքրքրուիլ...*

*Ներքինիները ո՞ւր են...*

*Զիա էֆէնտին, Քէօսէ Հիւսնին, քարատաղցի Մոհսէնը, արնաւուտ Ծախրին, Այվազօղլու Սուլահին,* մուսահիպ լալա*ները ո՛ւր են... հիմա մեզ շրջապատած պէտք է ըլլային, խոժոռ նայուածքներով պէտք է սպառնային, որ անմիջապէս հեռանանք կայսերական կանանոցէն...*

*Ներքինիապետ սարսափելի Վէհիպ աղան ալ մէջտեղ չկայ...*

*Հա՛, գուշէ... սուլթանը հրամայած է իրենց, որ հաշիւը մաքրեն հարէմէն փախուստ տուած եւ ապա բռնուած չքնաղ հարճին...*

*Իրենք ալ, ներքինիներ եւ ներքինիապետ, տեղ մը խմբուած, թերեւս կը խորհրդակցին զայն խեղդելու, գեղեցիկ վզին քար կապելով, կէս գիշերին Վոսփոր նետելու մասին...*

*Կամ, թերեւս՝*

*Վրաստանէն, Տաղըստանէն, Ազրպէյճանէն Պոլիս հասած* տաղի *մարալ,* կիւրճիւ կիւզէլ*ները, սուլթանին նուէր ղրկուած պէյճանուհիները պալատ բերելու գացած են...*

*Թող գացած ըլլան...*

digitised by A.R.A.R.@

Այսպէս աւելի լաւ է… «փափկացեալ ներկայութիւններուն» հետ ազատ կ'ըլլամ գոնէ…

Ծրջեցանք հարէմին անհամար սենեակները, սալոնները եւ… բաղնիքները…

Միւս այցելուները առաստաղներուն գունաւոր զարդերը, նախշուած պահարանները, ջահերը, դուռներուն արեւելեան պերճութիւնը, հոս-հոն կախուած նկարներն ու մաճաւոր փեղկերու մէջ շարուած թանգարանային առարկաները կը դիտէին, կը բաղդատէին,

Մինչ ես՝ տարբեր բաղդատելիներով տարուած՝ ցանկութեան տրամադրութեամբ, երեւակայութեանս մէջ կը դարձնէի հարէմի ալպոմին թերթերը, տեսնելու համար, թէ այս սենեակներուն մէջ բնակած աղուորներէն ո՞ր մէկը աւելի աղուոր, աւելի հրապուրիչ էր, ո՞վ էր կանանոցի գեղեցկութեան սուլթանուհին…

Ցորենագոյն, «ցորենի հաց» Հայիմէ՞ն…

Տաղխատանցի, տաղի մարալ Նարիմա՞նը…

Շող արձակող, շլացնող Կիւնէ՞շը…

Վարդադեղ, նազը աչքի դեղ Կիւլինա՞զը…

Պիր նայուածքով, պիճ սիրտ այրող Սաֆինա՞զը, իր անունէն մարմնացած Ճէմիլէ՞ն, Խատիճէ՞ն, Զէյնէ՞պը…

Այո, ասոնք, բոլորն ալ, շատ գեղեցիկ էին. բայց ամէնէն սիրունը, ամէնէ՛ն ցանկալին չինար պոյով, շար աչքերով չէրքէզուհին էր անկասկած, հեքիաթէն փախած աննման Հուրիէ՛ն…

Ա՛ն էր հարէմի գեղեցկութեան սուլթանուհին, աղուորներուն աղուորը…

Բայց… կար իրմէ աղուորն ալ, իր… «սպասուհի՛ն»…

Կանանոցի խանըմները, լուսեղ տէտէները չիմանան, դաժան լալաները չդիտնան, Համիտը չլսէ՛ Հուրիէին «սպասուհիին» անունը, ինքնութիւնը.— Ֆաթուրաճի Տիգրա՛ն…

Ա՛խ, աս մեր ազգին Տիգրանները…

Հրաշալի, հոյակապ մարդեր են, կը գրուե՛ն, կը տիրանա՛ն, կը փայլե՛ն…

Օրինակ՝

Ֆիլիպպենոս (հելլէնասէր) Տիգրան Մեծը կայսրութիւն հիմնեց, պատիւներու մեծագոյնը գրաւեց։

Ֆաթուրաճի Տիգրանն ալ՝ հիմնուած կայսրութեան մը կանանոցին պարիկներուն գեղեցկագոյնը, Հուրիէ՛ն…

Հարէմի աս բաղնիքներէն, որոնց մարմարներուն ճաթած չըլլալը զարմանալի է վարուժանեան ըմբռնումով, արդեօք ո՞ր մէկուն մէջ կատարուեցաւ «գրաւումը»…

Հէ՛յ կիտի Ֆաթուրաճի Տիգրան…

Երջանի՛կ Տիգրան…

Այս գեղեցիկ կամարներուն տակ, չնաշխարհիկ Հուրիէ սուլթանուհիին հետ, իրաւկան ի՛նչ քաղցր երազներ վայելեց, քանի՛-քանի՛ մեղրալուսններ կատարեց…

Եա՛սաու

Եա՛սաօ՛ Արմէնիօ…

Հալա՛լ ըլլայ, Տիգօ՛…

Բայց յետոյ, արդեօք ո՞ր անյայտ դուռնէն փախուստ տուիր…

Ո՞ւր է խորհրդաւոր կոճակը Վոսփորի Գաղտնիքին…

digitised by A.R.A.R.@

## Է.

# ՀԸԴԱՀԻՒՆ ՈՒ ՀԱՄԲՈՅՐ

«Ելտըզ» ապարանքէն դուրս ելած էինք արդէն ու կ'ուղղուէինք դէպի կայսերական մզկիթ, որ հեռու չէր պալատէն։

Անդրադարձայ օրուան Ուրբաթ ըլլալուն.

Սէլամլըք կիւնի···

Ուրեմն, կ'երթայինք սէլամ տալու «Էլ Ելտըզ» ճամին։

Թրքական հին խօսք մը կ'ըսէ.

— «Հէր սէլամըն քէլամը վար»:

Ես սէլամ տալ կը սիրեմ, չա՛տ։

Բայց եկուր տես, որ քէլամները տարբեր են, հայերէն են, եւ այսպէս.

— «Կրօնական Աստուածը՝ գլխուս վրայ, չվշտանա՛յ···

Քրիստափորը աշխարհակա՛ն Աստուած է. սիվիլ Աստուած, Հա՛յաստուած:

Ա՛ն է տէրը ազգային հոգեկանութեանս, զգացումներուս, ըմբռնումի՛ս:

Զայն կը պաշտեմ ես հայօրէն, գաղափարականօրէն»:

Ահա թէ ինչո՛ւ՝

Սուլթանական մզկիթին մօտ, յուզումով լեցուեցաւ սիրտս. ես փոխուեցայ, տարբեր եղայ, չեմ գիտեր ինչպէ՛ս···

Շրջապատը ինծի համար ուխտավայրի մթնոլորտ առաւ կարծես···

Երկիւղածութիւն զգացի. աշխարհական երկիւղածութիւն···

Յետոյ,

Անօրինակ ջերմութեան մը անզսպելի, անյաղթ հաքը սկսաւ արեանս մէջ եւ իսկոյն ա՛յնքան աւելցաւ, որ՝

— Հըդահի՛ւն··· Եըդահի՛ւն··· — աղաղակեց «Զար» մը ներաշխարհէս···

Զարը «ձայնեց կանչով շառաչուն», ու կրկնեց, արձագանգեց՝ խելագարուած ամբոխների՝ արեւներին նոր տէմպ տուող նուիրական ահեղութեամբ, սրբազան կիրքո՛վ.

— Հըդահի՛ւն···

— Հըդահի՛ւն···

— Հըդահի՛ւն···

— ··· դահի՛ւն

— ··· հի՛ւն···

Ծօ, Թուրքիոյ մէջ ենք, Իսթանպուլի մէջ, «Ելտըզ»ի եւ մզկիթի միջե՛ւ···

Զարին ըրածը··· «չարութիւն» էր պարզապէս. բայց ինչ խօսք, որ անգի՛ն էր նոյն ատեն. տարինե՛ր առաջ, բուռն գոյամարտի այդ արիւնոտ օրերուն, սուլթանացած մեծ չարիքը չքացնելու համար, Հայ Յեղափոխութեան «փոթորիկ»ը անցած էր ասկէ···

Հիմա, նոյնիսկ··· ե՛ս ալ կ'ուզէի աղաղակել նոյնը···

Ինչպէ՛ս չուզէի···

Կեանքիս մէջ ա-ռա-ջին անգամն էր, որ կը գտնուէի տեղ մը, ուր յաճախ եղած էր «եւրոպացի մեծատուն» ՍԱՄՈՒԷԼ ՖԱՅՆ՝ գիտէ՛ք ինչու։

digitised by A.R.A.R.@

***

Մզկիթ այցելող միւսները գիտելիք շատ բան չունէին կայսերական աղօթավայրին մէջ կամ շուրջ։

Գեղեցիկ ապարանքին վայել՝ սիրուն մզկիթ մըն էր վերջին հաշուով։

Ես ալ գիտելիք չունէի։

Սակայն, հա՛յ ըլլալուս, մեր յեղափոխական անցեալէն ապրելի՛ք ունէի…

«Էլ Եըլտըզ»ի ցանկապատին մօտ, Մեծն Միքայէլեանը ճանչցող տարեց ծառի մը կոթնած՝ լո՛ւռ, սիկառէթիս ծուխին պէս ես ինքնիրմէս դուրս կ'ելլէի, սուլթանական հին չքերթներու խորհրդաւոր մօտիկութեան մէջ կարծելով զիս…

Իրա՛ւ.

Պատմութիւնը, մա՛նաւանդ՝ պատմութեան այդ մեծ դէպքը, հայ յեղափոխութեան արդար դատաղրութեան աշխարհածանօթ գործադրութիւնը որքա՜ն մերձ է այս տեղէն…

Ցանկապատին քով, ծառին կոթնած, սիկարէթը բերնիդ, երբ դուն քեզմէ ելած, վերացած ես արդէն, փոքր մը րրէ, ապրումներուդ որմին վըրայէն՝ երեւակայութեանդ ծառին վերերն ալ ելլր ու դիտէ Եըլտըզին բակը…

Ուրբաթ է, սէլամլըքի օր…

Պալատէն մինչեւ մզկիթ, ճամբուն երկու կողմերը, ժամեր առաջ, արդէն շարքի անցած են զարտարացի զաւազները, կայսերական պահակագունդի արճառուտ զինուորները, փայլփլուն կոճակներով, ոլորուն պեխերով եւ սիւնկիստա՛ր…

Անոնց ետեւ՝ օսմանեան սպաներու շարքեր կան… երկինքը առաղ չէ մնացեր… բոլորը ինկեր են զապիթներու ուսերուն…

Ու դեռ՝

Ոստիկաններ, լրտեսներ, ահաւոր դէմքեր, խուզարկու աչքեր…

Անդին, ճամբին դրան առջեւ՝ սոփթաներ, վէզիրներ, փաշաներ, պէյր. «ազնուակա՛ն» թուրքեր, օսմանցի «անձնաւորութիւններ», յայտնի էնճաֆներ, ազդեցիկ աղաներ, խոժոռադէմ լալաներ…

Եւ փէ՛ս, փէ՛ս, փէ՛ս…

Ամէն կողմ կարմիր՝ ի «պատի՛ւ» Կարմիր Սուլթանին, որ քիչ ետք, սէլամլըքի պիտի գայ…

Ի՛նչ, ի՛նչ երեսով…

Մա՛նաւանդ՝ խղճի ի՛նչ հանգարտութեամբ…

Հայկական նահանգներու մէջ հարիւր հազարաւոր անմեղներու արիւնը թափելէ, քաղաքներու եւ գիւղերու մո՛ւխը մարելէ, անհամար կոյսեր պղծելէ ու Վոսփոր նետել տալէ ետք, ելեր կը պատրաստուի մզկիթ գալու, Աստուծոյ, մարգարէին սէլա՛մ տալու…

Անոնք անշուշտ նկատի պիտի չունենան զինքը, պիտի չառնեն իր բարեւը։

Բայց ինք պիտի տայ, պիտի բարեւէ. բռնակալին երեսինը, ինչպէս պիտի ըսէր Համաստեղի գիւղացին՝ ճամուշի կաշի է…

Եկա՛ւ, տուա՛ւ։

Տալը մէկ կողմ. սակայն ինչպէ՞ս եկաւ…

Եկաւ աստուածավախ ծերուկի դեր խաղալով. համրիչը ձեռքին, յու-

digitised by A.R.A.R.@

չիկ-յուչիկ, երբ կ՚իջնէր կայսերական կառքէն, կ՚ըսէիր՝ այս մարդը տմարդ չէ եղած կեանքին մէջ, ջարդի հրամաններ չէ արձակած երբեք, կոյս չէ պղծած բնաւ, այլ միայն աղօթած է, մարդոց թշուառութեան համար տառապած է եւ բարենորոգած...

Հիմա ներսն է, խաղարկութիւնը «արուեստականութեան...» լերկ կատարին կը հասցնէ:

Երեւակայութեանդ ծառին վրայէն, դուն շարունակէ դիտել դո՛ւրսը...

Նայէ այն կողմ, ուր եւրոպական շքեղ կառքեր կան:

Ֆրանսացի, անգլիացի, գերմանացի եւ ամերիկացի երեւելի անձնաւորութիւններ, դեսպաններու կցորդներ, «կցորդուհիներ» ալ եկած են, սէլամլըք առիթով, սուլթանը տեսնելու...

Անոնց կառքերէն շատ աւելի շքեղ, Զուիցերիոյ մէջ պատրաստուած եայլը մըն ալ եկաւ ու կեցաւ օսմանեան պետութեան առաջին Էֆէնտիին թախտը արքայային քով...

Այս վերջինին խնչացու ըլլալը դո՛ւն գիտես, միայն դո՛ւն...

Զես անդրադառնար նաեւ, թէ նորեկ կառքին կառապանը եւրոպացիի արտաքին ունի թէեւ, եւրոպացի չէ՛ սակայն...

Գերազանցօրէն անվեհեր հայ յեղափոխական մըն է:

Անունը՝ ԶԱՐԵՀ...

Զոհուելու եկած է կամաւորօրէն, սիրո՛վ, սրբազան դաշնակցականութեա՛մբ: Ծանօթ ես պատմութեան:

Մեր ազգը անհամա՛ր նահատակներ ունի. բայց բոլորին մէջ, բոլորովի՛ն եզակի մարտիրոս մըն է այս «կառապան»ը, յատո՛ւկ զոհ մը՝ հայութեան սիրոյն, հայրենիքի ազատութեան ի խնդիր:

Ապրիլեան Եղեռնի ճամբաներուն, անապատին վրայ նահատակուածները՝ իրենք չէ՛, որ գացած են դէպի մահ, այլ տարուած կամ քշուած են թշնամիներու կողմէ:

Լինելութեան մարտերու մէջ զոհուած քաջերն ալ՝ դէպի գիտակից մահ գացած են, յաղթելու եւ ապրելու համար սակայն. իսկ անձնապէս պարտըւած են ու ճակատում ընկած... ակամայ անշուշտ:

Զարեհին պարագան վեհօրէն տարբեր է ասոնցմէ:

Աննման այս յեղափոխականը փոթորիկ կոչուող անօրինակ «պատերազմի» մը եկած է՝ ա՛նպայման մեռնելու համար...

Ինքնակա՛մ զոհ... սիրայօժա՛ր մարտիրոս...

Հայոց Պատմութի՛ւն մը կ՚արժէ իր հերոսութիւնը. անշուշտ չես հակառակիր այս արդար գնահատանքին:

Դիւցազնավէպի հաւասար է իր ֆետայութիւնը. համաձա՛յն ես:

Լաւ ուրեմն, ի՞նչ կը սպասես...

Կրակն ալ փիլթըրին հասաւ արդէն. նետէ սիկարէթը բերնէդ,

Դուն ալ՝

Երեւակայութեանդ ծառին վերերէն ցատկէ վար...

Ապրումներու ճամբով, «խենթանանք», խենթ հովի պէս վազենք դէպի զուիցերիական կառք, ըլլենք, յատուկ հերոս Զարեհի ճակտին համբոյրներ պայթեցնենք... լարուած Ըլտըզի պոմպային ալաքը անհարեկիչ կէտին հասնելէ առաջ...

Ց. ԶՈՐԵՑԻ

(Տար. 2)

digitised by A.R.A.R.@

## Իմացական Հարթում



# ԻՄ ՏԱՌԱՊԱԾ, ԻՄ ՓԱՌԱՊԱՆԾ...

*Իր խօսքերն են, ի՛նքն է, եւ իրեն հանդէպ մեր զգացումներուն խտացումը՝ ո՛վ տառապած, ի՛մ փառապանծս։*

*Պարոյր Սեւակ այսպէս կը բնութագրէր Հայաստանը եւ եղերական իր վախճանէն հա-տաղին իր մարմրող յիշատակին դիմաց նոյն բառերը կը հոլովուին մեր շրթներուն, կը հա-*

digitised by A.R.A.R.@

յօժարին ու կը հնչէն արդարութեամբ, իրաւութեամբ, որովհետեւ Հայաստանի ձայնէն, հողէն, առասպելներէն, Հայաստանի վէրքէն ու լոյսէն ըխած այս հարազատը ինք ևս դարձած էր Հայաստանի մէջ խորհրդանշանը, շնչող, զարթող, արարող ու արդաւանդ կտոր մը Հայաստան, տառապած ու փառապանծ:

Եւ արդէն ո՞վ կրցած է մնալ առանց լուծուելու իրմէ մեծ բանի մը մէջ, առանց կարենալ ընդգրկելու իրմէ մեծը, «հոգու այլակերպութեամբ» դառնալու երկրի մը խորհրդանշանը, ժողովուրդի մը հաւաքական ապրումին մէջ աղաղակը, կռոյթը, անցեալին կեանքը, ներկային ձայնը, լինելութեան լոյսը:

Փարոյր Սեւակ, այս բանաստեղծը, այս բախտաւորը, այս բախտաբե՛րը կրցաւ ընդգրկել ողջ հայոց պատմութիւնը, բացուիլ անոր խորհուրդին, ջերմանալ լոյսով, հասուննալ իմաստութեամբ, առասպելի վէրքով եւ արու շեշտ մը հաղորդելով այդ ամէնուն՝ ցցել այրական իր հասակը մեր նոր գրականութեան սակաւ ընտրեալներուն կողքին:

Այսպէս էր, որ մեր ժողովուրդը, հայրենի եզերքէն մինչեւ Սփիւռքի հեռաւոր ափերը, իր բոլոր խաւերով, կրօնական թէ գաղափարական բոլոր ճակատներուն վրայ, մէկ մարդու պէս ու անբաժանելի կսկիծով մը ողբաց Սեւակի եղերական մահը, որ ըսենք զարմանալ, թէ անձի մը մահը չէր, այլ ազգի մը արուած անդարմանելի հարուած մը:

Երկու երես ունէր Փարոյր Սեւակ, բանաստեղծ էր ու մտաւորական ու տիրական եղաւ իր ձայնը թէ՛ մէկ, թէ միւս մարզին մէջ: Առաջինը առանձնացնող արուեստ զօրեղ բարախումին ամբողջ յաճախ շռայլեց իր մտքին լոյսը ու մտքին արտադրութիւնները երբեք զուրկ չմնաց ճշդային գրութեան կենդանարար նպաստներէն: Բայց արուեստ այլեկծումները չէին իր գրչին անփոխարինելի յատկանիշները, ոչ ալ անհերքազանցելի էին մտքին թեւաբախումները: Փարոյր Սեւակի վաստակը «մխուածքով» օժտուեցաւ եւ «շլացքով» հարստացած ներկայացաւ հայ մարդուն առո՛ր համար մանաւանդ, որ ինք, բանաստեղծը արտէն ու մտքէն աւելի հաւատաց ու ծառայեց «այդ երկուքի ժամադրավայրին, որ կոչուած է հոգի կամ սիրտ»:

Հինին հետ էր Փարոյր Սեւակ ու հնամոլին դէմ, նորին հետ էր ու դէմ նորութեան անունով շարալահութիւններ ընող ներքնայէն աղբառ անձերուն, սովորամոլութեան միապաղաղ ջուրերուն մէջ լող եկող ձուլերուն թշնամի յայտարարած էր ինքզինք ու բարեկամ չէր ջուրերը պղտորելով հերոսութիւն խաղացող ձուկի հրոսակներուն: Ցաւերժաբարոխ մեր ժառանգութեան հանդէպ երկիւղած պաշտամունքը եւ մայր արմատին վրայ օրինական յաւելումներ բերելու եռուն անհանգստութիւնը կազմեցին իր տարերքը, իր վարքը, ոգին, բեղմնաւոր իր առասպանքին հրաշարար ակը, որմէ կը յառաջեց, նուաճեց բովանդակ ժողովուրդին սիրտը, դարձաւ անոր սիրելին, համարեա՛ պաշտամունքին առարկան, մանրանըկար Հայաստան մը մեծ Հայաստանին բախտով՝

«Ի՛մ տառապած, ի՛մ փառապանծ»:

Բանաստեղծ էր Փ. Սեւակ, «հոգեւոր տաճարներ» վարպետ, մտաւորական էր, մեծապայծառ որակ, բայց հայ գրականութեամբ եւ ազգային մեր բախտով շահագրգիռ հայ մարդուն համար կեդրոն էր նաեւ ձգողական ուրիշ ուժերու, մթնոլորտը լեցնող շունչ էր, առաքեալներու իմաստութեամբ լիացած խօսք, երիտասարդական խանդով բոցավառ խօսք, ներքին միութեան եւ հեռանկարներու նուաճման համար վստահելի ղօղանջ:

Թարմացնելու համար դրական թէ ազգային կալուածներու աւընկութեամբ յայտնըւած սեւակեան գաղափարները եւ ամրանալու համար անոնցմով՝ «Բագին»ի յաջորդ համարէն սկսեալ, յաճախաբար ընթերցողին պիտի ներկայացնենք այս տառապած ու փառապանծ սիրելիին յատկանշական գրութիւնները, որ կը կոչուին «Յանուն եւ ընդդէմ ռեալիզմի նախահիմքերի», «Քննադատութիւնն այլեւս յաւելուած չէ», «Ազգային սնապարծութիւն եւ ազգային արժանապատուութիւն», «Պահպանենք եւ հարստացնենք մայրենին», «Ինչը, ինչպէսը, որպէսը», «Դժուարը իրենից հասուն լինելն է», եւայլն:

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@



«Կապոյտ ապրիլ» բանաստեղծական հատորին հեղինակը, Վեհանոյշ Թեքեան, «Գոյապաշտական փիլիսոփայութեան ընկերային ներկցորդութիւնը» անուն տարբեր տրուած գրութեան հետ, խմբագրութեանս յանձնած է նոյնքան շահեկան չորս մը ուրիշ գրութիւններ, զորս յաջորդաբար պիտի ներկայացնենք մեր ընթերցողներուն, հետագայ կարգով.

1.— Գուստոն եւ իր վարդապետութիւնը,
2.— Մուհամմէտ եւ Մահմէտականութիւնը,
3.— Նիցչէ,
4.— Պերթրանտ Ռասըլ՝ ջերմեռանդ սկեպտիկը,
5.— Նախա-«Կոտոն» եւ «Կոտոն»:

Ընթերցողին եւ յատկապէս երիտասարդ տարրին ջերմապէս կը յանձնարարենք Թեքեանի պատրաստած այս գրութիւնները, որոնք կը շօշափեն նոր ժամանակներու մարդը շահագրգռող կենսական հարցեր:

# ԳՈՅՈՒԹԵՆԱՊԱՇՏ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՆԵՐԿՑՈՐԴՈՒԹԻՒՆԸ

⊙

*Մարդը յարմար ուսումնասիրութիւնն է գոյութենապաշտ փիլիսոփայութեան։ Մարդը՝ ոչ իբրեւ մեկուսացած անհատ, այլ՝ իբրեւ ընկերութեան մէկ մասնիկը։ Գոյութենապաշտութիւնը կը փորձէ ուսումնասիրել զայն, նախ՝ որպէսզի գտնէ ճշմարտութիւնը մարդուն մասին եւ ապա՝ մատնանշէ իր վիճակը ընկերութեան մէջ։*

*Այս վերլուծումներու արդիւնքը եղած է զանազան եւ հակասական։ Ոմանք, քրիստոնեայ գոյութենապաշտները, ինչպէս Կապրիէլ Մարսէլ եւ Լաւալ, գտած են էութիւն մը* (essence) *մարդուն մէջ, որ կը տեւէ մարմնին փճացումէն ետք. բայց իրենց հակառակորդները մեղադրած են զիրենք, թէ՝ կը զոհեն փիլիսոփայութիւն մը՝ կրօնքի մը վերադառնալու համար։ Ուրիշներ, ինչպէս անաստուածեան Սարթր, չեն կրցած վերլուծումներու ընթացքին ստուգել որեւէ անփոփոխելի ճշմարտութիւն, ինչպէս անձի* (self) *կամ հոգիի գոյութիւնը մարդուն մէջ, բայց յայտնած են այն կարծիքը, թէ ինչ որ կը պատահի մարդուն մէջ ա՛յդ անուանով, ճիգ մըն է մարդուն կողմէ, որ կ'ագուցէ բաներու բներեւութաբանութիւնները* (phenomenality), *եւ ապա կը զգայ անոնց գոյութիւնը՝ ձեւաւորելով զանոնք ի՛ր ուզածին պէս։ Այս մարդը, անոնք կ'ենթադրեն, ինքն իր մէջ կը ստեղծէ վիճակներ, որոնք ուրիշ բան*

digitised by A.R.A.R.@

չեն, եթէ ոչ երեւոյթներ (phenomena), որոնք երբ քանդուին, ամէն ինչ, ներառեալ այդ ճիղը, կ'ոչնչանան։

Ես կը շօշափեմ Ժան-Փօլ Սարթրի տեսակէտները միայն, որովհետեւ անոնք լաւագոյնս կ'արտայայտեն գոյութենապաշտ երակը։ Սարթր ո՛չ միայն ուրացաւ անձին (self) էութիւնը, այլեւ՝ էութիւնը բացարձակ գոյութեան մը — Աստուծոյ — որ կատարելութիւնն է բոլոր կատարելութիւններուն, ens realissiumը։ Կատարելութիւնը հաստատուն էութիւն մըն է․ իսկ գոյութենապաշտութիւնը չի ճանչնար յաւիտենական էութիւններ, որովհետեւ ճանչնալ այդպիսի բան մը՝ կը նշանակէ գծել մարդու գոյութեան նախորդող որոշ սահմաններ, որոնց պէտք է հետեւի մարդը եւ ջանայ տեսնել անոնց իրականացումը իր մէջ՝ որքան կարելի է․ այսպիսով էութիւնը նախապայմանը կը դառնայ գոյութեան, իսկ այս հակառակ դիրքն է գոյութենապաշտութեան հիմնական սկզբունքին։

Ուրանալէ ետք անձի էութիւնը — Տեքարթ յստակացուցած է այս իր մեթոտաբանական սկեպտիկութեան ընթացքին՝ ըսելով․ «Կը կասկածիմ, (խորհիլ կ'ենթադրէ), ուրեմն՝ կամ»։ Սարթր հասաւ կարեւոր ճշմարտութեան մը, զոր նկատեց իբրեւ յստակագիծ եւ բացադանչեց․ «Գոյութիւն ունիմ, հետեւաբար կը խորհիմ»։ Ի՞նչ եմ ես։ Ամէնէն առաջ գոյութիւն ունեցող արարած մը։ Գիտակից եմ գոյութեանս որպէսզի կարողանամ խորհիլ։ Գոյութիւնն է առաջին ճշմարտութիւնը եւ ո՛չ թէ Տեքարթի անձը (self)։ Որովհետեւ գոյութիւնը մտածումէն առաջ է, անիկա գերութեան կը մատնէ մտածումը եւ կերպով մը կը ստեղծէ զայն, քանի որ Սարթր գոյութի՛ւնը կ'առնէ իբրեւ մտածումի աղբիւր եւ ո՛չ թէ էութիւնը։ Պէտք չէ ըսել, թէ կատարելութեան եւ բացարձակի գաղափարը առաջ է որեւէ, նոյնիսկ գոյութեան, փորձառութենէ, — ինչպէս Տեքարթ կը խորհէր — եւ թէ՝ անձը պէտք է հնազանդի անոր հրահանգներուն, ապացուցանելով նախ Աստուծոյ էութիւնը, անկէ հետեւցնելով Անոր գոյութիւնը, եւ ապա՝ արտաքին աշխարհը՝ Աստուծոյ էութենէն։ Սարթր այս քարթէզեան մեթոտը շրջած է եւ յայտարարած, որ գոյութիւնը կ'որոշէ էութիւնը եւ, ուրեմն, անիկա ազատութիւն մըն է։ Այսպիսով Սարթր կը հաւատայ, թէ հասած է մարդուն ճշմարիտ էութեան գիտութեան, որ միայն ազատութիւն է։ Բայց այս գոյութիւնը աշխարհի – մէջ – գոյութիւն մըն է։ Միայն աշխարհի երեւոյթները հիւրընկալուած են, որպէսզի ազատօրէն իրացուին եւ որդեգրուին։ Անիկա տրամաբանօրէն կը զուգադիպի այն առաջին հաւատամքին, որ Սարթր դրաւ — այսինքն՝ գոյութիւնը առաջ է էութենէն եւ ազատութիւն մըն է։

Հոս կրնանք մատնանշել Էմմանուէլ Քանթի ազդեցութիւնը գոյութենապաշտ փիլիսոփայութեան վրայ։ Քանթ հաւատաց, որ գիտական պաշարը (knowledge) բաղկացած է այն նիւթէն, որ միջոցաժամանակաւոր աշխարհը կը յայտնէ ներհայեցողութեան (intuition) երկու զուտ ձեւերով, որոնք կը կոչուին Միջոց եւ Ժամանակ, նաեւ ձեւը (form) կամ մտապատկերը (concept), որ հայթայթուած է մեր հասկնալու զուտ ձեւերու 12 դասակարգներով (12 Categories of Pure Forms of our understanding), որոնք կը միացնեն ներհայեցութեան անհամար ծալքերը մտապատկերներու մէջ։ Գիտական պաշարը ունի ներհայեցութիւն եւ մտապատկեր՝ իբրեւ իր երկու կարեւոր նախապայմանները։ Այսպիսով Քանթ հարթեց ուղին երեւութաբանական (phenomenological) մեթոտի համար։ Հեկէլ եւ Ֆիխթէ պահպանեցին այն կարծիքը, թէ միայն երեւոյթներ (phenomena) գոյութիւն ունին։ Noumena-ներ կամ իրենք-իրենց-մէջ-բաներ անգիտանալի են (unknowable)։ Մարդուն ամբողջ հոգեբանական կեանքը համախմբուած մըն է երեւոյթի, որ երբ քանդուի, ամէն ինչ կը քանդուի իրեն հետ, որովհետեւ որոշ էութիւն մը չկայ։

Գոյութենապաշտ փիլիսոփայութիւնը հետեւցուցած է այս բոլորէն, թէ գո-

digitised by A.R.A.R.@

յութիւնը էութենէն առաջ է մարդուն մէջ, եւ էութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ ամբողջութիւն մը երեւոյթներու, առնըւած՝ աշխարհէն, եւ ձեւաւորուած մարդուն բացարձակ ազատութեամբ, որ էութիւնն է իր գոյութեան: Անիկա է, որ տուեալ մարդը կ'ընէ ա'յն, ինչ որ այդ մարդն է'. եւ պէտք է պահպանել ազատութիւնը, որովհետեւ անով կը պահպանուի մարդը եւ մարդկութիւնը:

Արդար ակնարկով՝ ա'յս է արմատը գոյութենապաշտ փիլիսոփայական գաղափարին: Կայ ընկերային նոր տուեալը, որուն գետինը պատրաստած է յետպատերազմեան ժամանակաշրջանը: Անիկա երեւոյթն է կեանքի ձեւի մը, որ յատկանշուած է մօտաւորապէս հաստատուն պատրաստութեամբ մը դիմաւորելու կեանքի բոլոր իրողութիւնները և ինչ որ անոնց մէջ կը պահուըտի կամ կը յաջորդէ անոնց: Երիտասարդութեան մեծ տոկոսը մտերիմ դաշինք չէ կնքած որեւէ ապարէզի հետ. ընկերային դասակարգ, կամ մասնաւոր ընտանիք, կամ ընտրութիւն, կամ ընկերային գիտակցութիւն անհեթեթ բաներ են: Կ'ապրին առանց որոշ նպատակի կամ մեկնակէտի: Կ'ապրին անոր համար միայն, որ պէտք է ապրին: Ուրեմն, մարդուն ճակատագիրը չէ տիրացուած կամ իրականացուած այնքան ատեն, որ ինք կ'ապրի, եւ կեանքը ամէն վայրկեան նոր կը սկսի: Իր Ազատութեան ուղիներ (Les Chemins de la Liberté) հատորին մէջ, Սարթր չի միտիր նկարելու ընկերային դասական տիպարներ, ինչպէս հպարտը, ատախօսը, սիրահարը, այլ՝ կը փորձէ ներկայացնել անձեր՝ կացութեան մը մէջ: Այս տիպարները կը զարգանան արագ կերպով եւ իրենց պատմութիւնը վերջ չի ճանչնար: Ահա թէ ինչ կը գրէ Սարթր վերոյիշեալ վէպին մէջ.

«Ես կ'ապրիմ ինքզինքս ճաշակելով: Կը զգամ հին համը արիւնի եւ ջուրի, եւ իմ համս ա'յն է, որ ես կը ճաշակեմ ինքզինքս: Ես կ'ապրիմ եւ կեանքը այս է.— ըմբոշխնել ինքզինքս եւ յագենալ առանց ծարաւի: Երեսունըչորս տարի, 23 տարի ճաշակած եմ ինքզինքս եւ աճած, աշխատած, սպասած եւ ստացած ի'նչ որ ուզած եմ — Մարսէյլ, Փարիզ, Անկախութիւն եւ ամէն ինչ կը վերջանայ անկէ ետք»:

Այս է ահա նոր մարդը իր կատարեալ անկախութեամբ, որովհետեւ ան ազատագրուած է բնական եւ ընկերային ազդեցութիւններէն, որոնք կը փորձէին որոշել զինք եւ որոնց ինք յաճախ ուզելով տեղի կու տար: Գոյութենապաշտութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ այս նոր մարդուն փիլիսոփայութիւնը. որովհետեւ այս դարը ունի իր ուրոյն մթնոլորտը եւ գոյութենապաշտութիւնը նոյն մթնոլորտին փիլիսոփայական արտայայտութիւնն է:

Նոր կեանքը քաղաքի կեանք է եւ գոյութենապաշտութիւնը նաեւ քաղաքներու փիլիսոփայութիւն մըն է:

Արուեստագէտներուն փայփայած բնութիւնը տեղ չունի գոյութենապաշտութեան մէջ: Չէ՞ որ ամբողջ կերպարանքը բնութեան, գիւղական շրջապատի, քաղաքակրթութեան եւ յառաջդիմութեան պատճառով ճարտարարուեստական շըրջան մը կը դառնայ: Մեր դարը ճարտարարուեստացած (manufactured) իրերու դար է եւ կասկած չկայ, որ մարքսիզմը ճիշդ էր, երբ կը տեսնէր մարդը իր գործածած գործիքներու լոյսին տակ, բայց սխալ էր հիմնելով բոլոր արժէքները այս նիւթական արտադրութիւններու շրջափակին մէջ:

Սարթր կ'ըսէ իր NAUSELEին մէջ, թէ՝ «իմ ուրիշներու հետ յարաբերութիւններս հոգեբանական բնոյթ չունին եւ գոյութիւններու յարադրութենէ (juxtaposition) աւելի չեն»:

Ուրեմն կը հաւատայ, որ հասած է մարդու էութեան գիտութեան, որ ազատութիւն է եւ կապը, որ կը միացնէ ընկերութեան մը անդամները, պարզապէս յարադրութիւն մըն է, ուր հոգեկան շըղթայ չկայ: Անիկա կը հարկադրէ պաշտպանել ինչ որ կենսական է մարդուն մէջ:

digitised by A.R.A.R.@

## ԻՆՉՊԷՍ ԳՈՅՈՒԹԵՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

*Այս կէտը կը յստականայ, երբ այս փիլիսոփայութիւնը կը հաստատէ գոյութեան նախադրութիւնը էութեան։ Երբ որ էութիւններ պարտադրուած են գոյութեան վրայ՝ իրենց նախընթացութեամբ, սահման մը գոյութիւն կ'ունենայ ազատութեան համար։*

*Սակայն ի՞նչ կը նշանակեն այս էութիւնները։*

*Գոյութենապաշտ եզրաբանութեան մէջ էութիւն է իւրաքանչիւր վեհ գաղափար, իւրաքանչիւր ընկերային կարգ, իւրաքանչիւր հաւատք, կրօնական թէ քաղաքական. իւրաքանչիւր վարդապետութիւն, իւրաքանչիւր օրէնք՝ դուրսէն պարտադրուած էութիւն մըն է մարդուն գոյութենէն առաջ, սահմանագծելով իր անկախութիւնը։ Եւ ազատութիւնը ամենակենսական բանն է մարդուն մէջ։*

*Այն առարկութեան, թէ այս շղթաները փճացնելով մենք կ'առաջնորդենք մարդը դէպի անիշխանութիւն, գոյութենապաշտը կը պատասխանէ, որ անիշխանութիւնը ուրիշներու ազատութիւնը չնկատել եւ չյարգել է եւ իրաւ ընկերային կարգ մը չի կրնար ինքզինք պահպանել, եթէ չյարգէ ուրիշներու ազատութիւնը, անոր ազատ գոյութիւնը։ Այս շղթաները, որ առարկան հանդիսացած են մարդկութեան հաւատքին, խարկանք են, որ եթէ չանհետին՝ պիտի յաջորդուին ազատութեան կաշկանդումով։*

*Սարթր կը փորձէ յստակացնել ասիկա իր* «Դռնփակ Նիստ» (HUIS CLOS) *թատերգութեան մէջ։*

*Կը ներկայացնէ խումբ մը մարդիկ, որոնք մահուընէ ետք դրկուած են դժոխք։ Բայց իրենց դժոխքը* inferno *կամ ֆիզիքական չարչարանք չէ։ Անոնցմէ իւրաքանչիւրը կու գայ հոս, ինչպէս պիտի երթար պանդոկ մը։ Այս չարչարանքը ֆիզիքական չէ, այլ՝ մտաւորական։ Անոնք կը զգան այս տառապանքը, երբ կը ներկայացուին իրարու եւ իւրաքանչիւրը կը վերյիշեցնէ նախ ինքզինքին ապա իր ընկերներուն, իր գործած սխալներն ու յանցանքները, որոնց համար ինք կը պատժուի։*

*Հետագային, ամէն մէկը կը զգայ, թէ պէտք է բարեկամանայ միւսին հետ. այս բարեկամութիւնը անխուսափելի է։ Կը տեսնէ եւ կը լսէ իր ընկերները, կը վիրաւորուի իր լսածներէն եւ անոնց նայուածքներէն։ Կ'ուզէ փախչիլ անոնցմէ, իր մէ՛ջ փախիլ, բայց կարողութիւն չունի։ Իր բոլոր արարքները եւ մեղքերը կը վերաքաղուին իր առջեւ, կը խօսի անոնց մասին. բայց ո՛չ ինք, ո՛չ ալ իր ընկերները կրնան տոկալ անոնց։ Եթէ լռէ, բայց ո՛չ ինք, ո՛չ ալ միւսները կրնան լուռ մնալ այլեւս, որովհետեւ իւրաքանչիւրը պէտք ունի անջատելու իր անձը ինքզինքէն։ Իւրաքանչիւրը կը կրէ իր դժոխքը ի՛ր անձին մէջ։ (Դժոխքը միւսներն են)։*

*Այս է մարդուն կացութիւնը ընկերութիւններու մէջ։ Օրէնքներ կան, հաւատքներ, կրօնքներ, զորս եթէ ինք ազատօրէն ջնջէ, պատիժը կը ներմուծուի իր մէջ եւ ինք անգիտակից է, թէ ինչո՛ւ կը պատժուի։ Ան կը տառապի այս անհանդուրժելի կացութենէն եւ չի գիտեր ինչո՛ւ, որովհետեւ այս կացութիւնը իր ծննդեան թուականէն առաջ էր։ Եթէ չհպատակի, պէտք է ընդունի բոլոր հետեւանքները ոչ-համակերպութեան։ Ուրեմն օրէնքները եւ հաւատքներն են, խարկանքներն են, որ բովանդակ իր կեանքի ընթացքին, մտահոգ կնճիռներ կը բարդեն իր ճակտին։*

*Ուրիշ թատերգութեան մը մէջ՝* «Վճիռը արձակուած է» (Les Jeux Sont Faits), *Սարթր կը ջանայ նկարագրել, թէ ինչպէս մարդը զոհն է՝ գրուած կանոններու եւ հաւատքի՝ պարտադրուած ընկերութեան անդամներուն, թէ ինչպէս ան ձանձրացած է այն ամէնէն, որ կը կաշկանդեն իր անկախութիւնը եւ չի կրնար ձերբազատուիլ անոնցմէ։*

*Թատերգութեան գլխաւոր տիպարներն են — Փիէռ Տիւմէն, աշխատաւոր*

digitised by A.R.A.R.@

մը, հիմնադիրը Ազատութեան Միութեան, որ կը դիմադրէ բռնապետին եւ որուն հետեւորդները կը պատրաստեն յեղափոխութիւն մը, եւ Իվ Շարլիէ, գեղեցիկ ու հարուստ կին մը, որ իր ամուսինին հետ կը վայելէ բաւական բարձր վարկ:

Երեք բաժին ունի թատերգութիւնը:

Առաջինը՝ երկու տիպարներուն մահէն առաջ է, ուր հեղինակը ցոյց կուտայ վայելչօրէն կահաւորուած ննջարանին մէջ Իվը, որ հիւանդ է եւ քնացած: Ամուսինը կը մտնէ սենեակ եւ իր ձեռքի սրուակէն քանի մը կաթիլ կը կաթեցնէ անկողինին մօտ գտնուող գաւաթ մը ջուրին մէջ, եւ կ'ուղղուի հիւրասրահ՝ հանդիպելու իր քենիին, իր քրոջ հիւանդութեամբ մտահոգ 18 տարեկան աղջկայ մը: Կը ջանայ զայն հանդարտեցնել, միաժամանակ համակրանք ցուցաբերելով անոր հանդէպ: Երբ Իվ կ'արթննայ եւ կուլ կու տայ գաւաթին պարունակութիւնը, կ'ելլէ անկողինէն, կուգայ հիւրասենեակ իր ամուսինին ողջերթ մաղթելու ու ետ դառնալու անկողին, նոյն ատեն խնդրելով իրմէ, որ չվընասէ իր քրոջ. եւ կը մեռնի:

Հիմա կը հանդիպինք Փիէռին, հին տան մը սենեակին մէջ, ուր աշխատաւորներու առաջնորդները հաւաքուած են իրենց գլխաւորին շուրջ եւ որոշած յաջորդ օրը սկսիլ յեղափոխութիւնը: Փիէռ հեծանիւով կը մեկնի քաղաքէն: Հոս, տղայ մը ոստիկանութիւնը տեղեակ պահած է խումբին գաղտնի ժողովին մասին եւ իրմէ ներողութիւն կը խնդրէ՝ իր արարքին համար: Փիէռ կ'անգիտանայ ու կը մերժէ ներում շնորհել ու կը շարունակէ իր ճամբան, երբ տղան ատրճանակով մը կը զարնէ Փիէռը: Աշխատաւորները եւ ոստիկանութիւնը կը հաւաքուին այս կէտին վրայ եւ կռիւ մը տեղի կ'ունենայ երկու կողմերուն միջեւ:

Առաջին մասը, որ կ'աւարտի երկու գլխաւոր տիպարներուն մահով, ցոյց կու տայ, թէ երբ աշխատաւորը զոհն էր տնտեսական դրութեան, կինը՝ իր ամուսինին դրամի ցանկութեան, որուն համար սպաննուեցաւ: Սարթր կ'ուզէ ցոյց տալ նաեւ, թէ այնքան ատեն, որ բռնատիրական, ընկերային, տնտեսական եւ քաղաքական կարգեր գոյութիւն ունին, մարդ միշտ անոնց զոհը պիտի ըլլայ: Ասոր համար է, որ իր երկու տիպարները վերցուցած է մահէն: Փիէռ կը բարձրանայ իր մահէն, կ'անցնի իր դիակին առջեւէն, որ նոյն տեղն է դեռ եւ կը թելադրէ բանուորներուն, որ արձակուին, բայց ոչ ոք կը լսէ կամ կը նայի իրեն. յուսահատ՝ կը թողու զանոնք եւ կ'ուղղուի իր ճամբէն: Նոյնը կ'ընէ Իվ, երբ կը մտնէ հիւրասենեակ եւ կը տեսնէ իր քոյրը, որ կը սիրաբանի իր ամուսինին հետ՝ ունկնդրելով անոր մխիթարական խօսքերը: Իվ կը խօսի, բայց անոնք չեն լսեր եւ ինք ալ կը շարունակէ իր ճամբան:

Երկու տիպարները կը հասնին նրբանցք մը, ուրկէ կը մտնեն եւ կ'անցնին տիկնոջ մը առջեւէն, որ կը պատմէ իւրաքանչիւրին, որ ինք սպաննուած է, կու տայ նաեւ իր անունը եւ ծննդեան թուականը: Կ'առաջնորդուին տեղ մը, որ շրջապատուած է պարտէզներով եւ մտերմօրէն կը ծանօթանան իրարու: Կը պարեն առանց զուարճանալու, որովհետեւ մեռելները ոչ մէկ բանէ հաճոյք կ'առնեն: Անդրադառնալէ ետք իրենց կեանքի սխալներուն եւ գիտնալէ ետք, որ իւրաքանչիւրը ստեղծուած է միւսին համար, կը վերադառնան տիկնոջ մօտ եւ կը հայցեն անոր արտօնութիւնը՝ կրկին կեանքի դառնալու, ըստ 140րդ յօդուածին, որ կը թոյլատրէ մեռելներուն կրկին կեանքի գալու, որպէսզի իրենց սխալները սրբագրուին: Թատերգութեան երկրորդ բաժինը կ'աւարտի եւ կը սկսի երրորդը:

Փիէռ կու գայ Իվի տունը, կը սքանչանայ հսկայ շէնքերուն վրայ եւ կը յիշեցնէ Իվին ինչ որ պատահեր էր իրենց մահուան շրջանին: Իվի ամուսինը կու գայ անծանօթի մը հետ, որ իր դաստ-

digitised by A.R.A.R.@

կարդէն ցած է, տեսնելու իր կինը. Իվ, սակայն, դուրս կ'ելլէ Փիէռին հետ եւ կը մնայ մտահոգ իր քրոջ ապրնչութեամբ։ Փիէռ եւ Իվ կ'երթան այցելելու վերջինին բարեկամներուն, որոնք կը խնդան Իվի վրայ՝ այս աշխատաւորը սիրելուն համար։ Բայց անոնք կը փնտռեն օրրոյ կեանք մը, եւ երբ կը պարեն, հաճոյք կ'առնեն այս անգամ։ Այս Փիէռ կը կռուի բարձր դասակարգի մարդու մը հետ եւ զինուոր մը կու գայ զինք բանտ տանելու։ Իվ տոմս մը ցոյց կու տայ զինուորին եւ Փիէռ առաջին անգամ ըլլալով կը զգայ, թէ Իվի ամուսինը բարձրաստիճան պաշտօնեայ մըն է բանակին մէջ, եւ ուրեմն կ'արհամարհէ Իվը։ Չէ՞ որ, իր ամբողջ կեանքի տեւողութեան, ոստիկանութեան դէմ պայքարած էր։

Ցետոյ ան կ'ըմբռնէ, որ ընկերային կարգը, քաղաքական կարգը, տնտեսական կարգը, ամէնքը կ'անջատէին զինք այն կնոջմէ, որ կը պնդէր, ինչպէս նաեւ ինք, թէ իրեն համար ստեղծուած է։

Սակայն, Իվ կը ջանայ հանդարտեցընել Փիէռը։ Անոնք կը վերյիշեն ափկնոջ ըրած իրենց խոստումը և ինչ որ մեռեալներէն ոմանք ըսած էին իրենց։ Վերահաստատուած՝ կ'երթան Փիէռի տունը, ուր Իվ կը ջանայ կարգի բերել սենեակը եւ Փիէռ կ'երթայ իր ընկերներուն հանդիպելու, որպէսզի զգուշացնէ զանոնք, թէ բռնապետը կը սեփականացնէ դրամը եւ վտանգաւոր է անոր սպաննելիքը։ Բայց իր ընկերները կը մերժեն զինք, որովհետեւ անոնք գիտեն իր՝ Իվի ամուսինին տունը այցելութեան մասին, անոր կնոջ հետ դուրս ելլելու մասին, եւ կ'ամբաստանեն զինք դաւաճանութեամբ։ Փիէռ, յուսահատ ու արխուր՝ կը ձգէ զանոնք, կ'երթայ իր ընկերոջ մօտ, որ կը մխիթարէ զինք, յիշեցնելով սիրոյ գոյութիւնը։ Աշխատաւորներէն մէկը կու գայ իրեն տեղեկացնելու բանուորներուն կողմէ Փիէռի կեանքին դէմ նիւթուած դաւի մը մասին։ Փիէռ կը յիշէ յեղափոխութիւնը, որ ինք սկսաւ եւ կը վախնայ, որ ձախողի։ Իվ կը յիշէ իր քոյրը, որ յանձնըւելու վրայ է այն մարդուն, որ միայն անոր դրամը կը սիրէ։ Կը վերադառնայ տուն եւ ամուսինին թեւերուն մէջ կը գտնէ իր քոյրը. ատրճանակը կը քաշէ ու կը հրահանգէ չչարժի՛լ, մինչ այդ, իր քրոջ կը պատմէ ամուսինին անհաւատարմութեան մասին եւ իբրեւ վկայութիւն կը խնդրէ, որ դարակին մէջէն հանէ անոր իրեն ուղղած սիրային նամակները։ Նոյն միջոցին, Փիէռ կ'երթայ ընկերներուն մօտ, որոնք կրկին կ'ուրանան զինք, բայց ինք կը փորձէ պաշտպանել ինքզինք եւ գրաւել անոնց վստահութիւնը։

Բայց իրենց ժամանակը լրացած էր։ Պէտք է վերադառնային մահուան։ Փիէռ կ'ուզէ հեռանալ իր ընկերոջ, մինչ այդ, զինուորները կու գան զինք սպաննելու։ Կը տեսնենք Փիէռը, որ կ'անցնի իր դիակին առջեւէն— երբ ոչ ոք կը լսէ կամ կը տեսնէ — եւ կը հանդիպի Իվին, երբ արդէն մեռած են, ու կը խօսակցին։

Կարծես թէ փորձարկութիւնը (experiment) ձախողեցաւ, որովհետեւ Փիէռ կեա՛նքը ուզեց միայն, որպէսզի փրկէ յեղափոխութիւնը եւ իր գաղափարի ընկերները, իսկ Իվ՝ որպէսզի միայն ազատէ իր քոյրը իր անհաւատարիմ ամուսինին ձեռքէն։

Երկուքն ալ ձախողեցան։ Փիէռ չկըրցաւ ազատել յեղափոխութիւնը եւ Իվ՝ իր քոյրը։

Մեռեալներէն մէկը կը հարցնէ իրենց.

— Չյաջողեցա՞ք, ինչ որ փորձեցիք։

Փիէռ կը պատասխանէ.

— Ո՛չ պարոն, վճիռը արձակուած է (Les Jeux Sont Faits)։

Սարթր այս պատմութեան ընթացքին կ'ուզէ նկարահանել այն գժուար, անխուսափելի կացութիւնը, որ ընկերային, տնտեսական եւ քաղաքական կարգը կը պարտադրէ, որուն բաժանումը ժողովուրդին մէջ անխուսափելի է, բայց կրնանք խուսափիլ, եթէ կարգը (order)

digitised by A.R.A.R.@

վերանորոգուած է, եւ տարբերութիւնները, որ կը հիմնեն զօրաւոր–տկար, կամ կարող–աղքատ մարդիկ, այսպիսով արգիլելով կեանքի հեռապնդումը բոլորին համար, վերցուի։ Մարդիկ որակ կը ստանան երբ մեռնին, եւ կ'աշխատին անդրադառնալ ատոր, եթէ իրենց առիթ տրուէր կրկին կեանքի գալու։ Բայց չեն կրնար իրականացնել այս, որովհետեւ միայն մէկ ձեռքը չի կրնար ծափ զարնել, եւ ընկերա–քաղաքական կարգուսարքը չի փոխուիր անհատին կամքով, այլ՝ աւելի ընդհանուր ընկերութեան կամքով, որ կը նուաճուի եղափոխութեան (evolution) եւ զարգացումի ճամբով։

Սարթր կ'ուզէ հաւասարութիւնը ինքնայայտ ճշմարտութիւն մը (truism) ընել բոլոր անոնց համար, որ կը սնուցանեն այդ, ո՛չ թէ իբրեւ առանձին անհատներ, այլ՝ իբրեւ հաւաքականութիւն։ Մարդոց միջեւ եղած այս տարբերութիւնները բնական չեն, արուեստական են։ Սարթր կ'ընդունի, որ մարդ կը խուսափի բոլոր այն սահմանումներէն, որ հիմնուած են նիւթական եւ ընկերային յատկանիշերու վրայ, եւ չի կրնար անոնց մէկ մասին կամ ամբողջութեան մէջ սահմանուիլ։

Մարդը տարբեր է իր եղածէն։ Անձ մը, որ իր կեանքը հիմնուած կը նկատէ իր բախտին կամ ասպարէզին վրայ, ռոպոթ մըն է եւ մարդ կոչուելու անարժան։ Ընդհանրապէս, սակայն, այս է պատմութիւնը բաղբեռի միլիոնատէրերին, պզտիկ աշխատաւորին, գեղջկական ընտանիքի մը գլխաւորին։ Ասոնցմէ ոեւէ մէկուն կեանքին մէջ բան մը չկայ, որ կու գայ իր ինքնութենէն։ Ամէն մէկը ունի պարապութիւն մը, զոր ուրիշ ոչ ոք կրնայ ունենալ։ Այս կրնայ ըլլալ նաեւ պարապան ճարտարարուեստի մը, երկրի մը, կամ եկեղեցիի մը գլխաւորին, որովհետեւ ինք արժանիք մը չունի, ինքնիրմով չի գոյատեւեր եւ ոչնչութիւն մըն է, եթէ մեկուսացուի այն յարգանքէն, հնազանդութենէն եւ վախէն, զորս ներշնչած է ուրիշներուն։

Ի՞նչ են սակայն այն կացութիւնները, զորս Սարթր կը ձգտի փոխել։

(Վերջը յաջորդով)

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

digitised by A.R.A.R.@

## ԴԱՐԵՐՈՒ ՀԱՅ ՄՇԱԿՆԵՐ



# ԳՐԱԳԷՏԸ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԷՋ

●

### Ջ — ԿՐՕՆԱՇՈՒՆՉ ԵՐԿՈՒ ՃԱՌԵՐԸ

*Խրիմեան քրիստոնէական հաւատքի եւ Աւետարանի հրաշքի մեկնաբանութիւնը տուած է երկու հոգեշունչ ճառերով, որոնք եթէ մեր օրերու ըմբռնումով «քարոզագիրքեր» կոչուին, իրողութեան մէջ՝ օծումով լեցուն պատկերացումներն են Աւետարանի ճշմարտութեանց։*

*Առաջինը,* «Մարգարիտ Արքայութեան Երկնից»*ը, Աւետարանի ուսուցումներուն բանաստեղծօրէն ներկայացումն է։ Նման է Թորգոմ պատրիարք Գուշակեանի* «Աւետարանի ճամբէն»*, կամ Բաբգէն Կաթողիկոսի* «Դասեր Աւետարանէն»*, կամ Գարեգին Կաթողիկոսի* «Դէպի Լոյս եւ Կեանք» *գիրքերուն, բայց անոնց բարոյախօսական եւ վերլուծական կերպերէն տարբեր՝ հոգեբուխ ներշնչումով տրուած։ Մարգարիտի պէս շարադասուած՝ պարզ խօսքեր են, բայց գեղեցիկ մարգարիտի հատիկներ՝ լոյսով ու ցօղով փայլուն։*

*Մեր եկեղեցականներէն քիչերը կրցած են այնքան լուսաւոր շարքի մը մէջ բիւրեղացնել Աւետարանի ուսուցումները։ Անոնց մէջ կը վերականգնի հոգին հին Հայոց Մանդակունեան ճառերու։ Խրիմեան Վարդապետ հաւա՛տք ունեցող վարդապետ է։ Կը հաւատայ, թէ աշխարհի մեծագոյն մարգարիտը Աւետարանն է։ «Փոքրիկ հրաշագործ մատեան» կը կոչէ զայն, որ եղաւ ամբողջ աշխարհի դաստիարակիչ գիրքը։ Յառաջաբանին մէջ կ'ըսէ.*

> *«Աւետարանը Յիսուսի շունչն է, որ աշխարհի մարդկութեան չորցած ոսկորները վերստին կեանքի բերաւ։ Ինչ որ Աւետարանը գործեց՝ կարող չեղան գործել ո՛չ իշխանութեանց զէնք, ո՛չ իմաստասիրաց գրքեր։ Աւետարան Աստուածորդւոյն երկնից արտափայլող լոյսն է։ Կեանքը մութ է՝ եթէ չլուսաւորուած անոր լոյսով»։*

digitised by A.R.A.R.@

*Եւ այդ հաւատքով, Ծրիմեան բանաստեղծական ոճով կ՚ընդլայնէ Քրիստոսի խօսքերը եւ իր յորդորները կը կնքէ սա հաստատումով, թէ «Առանց Աւետարանի առաջնորդութեան՝ ուղիղ ճանապարհ չկայ»։*

*Երկրորդը,* «Խաչին ճառը» *նոյն ոգիով գրուած, կրօնքը կը խորացնէ դէպի իմաստասիրութիւն։ Վշտաբեկ իր ազգին սփոփանք կու տայ ու կը հրաւիրէ տառապանքէն բարձրանալ տեսիլքի.—* «Մի՛ փախչիք խաչէն, որովհետեւ այդ ճամբով է որ կը հասնիք լոյսին, յարութեան»:

*Ամբողջ գործը նկարագրութիւնն է չարչարանաց շաբթուան, մինչեւ «ի գերեզման մահու»։ Բայց հոն կանգ չ՚առներ, այլ կը շարունակէ յարութեան հրաշափառ տեսարանով ու համբարձման խորհուրդով, ապա կը կշռէ քրիստոնէական սկզբունքները աշխարհի անկատարութեանց դէմ։*

*Խաչին ճառը Նարեկի նմանութեամբ ընդարձակ խօսք մըն է Աստուծոյ հետ, խռովեալ սրտի խորերէն ցայտող աղերսանքներով լի։ Ի՜նչ յուզումներ կ՚ալեկոծին Գեթսեմանիի պահին մէջ, երբ Քրիստոսի լոյսէն կը սպասէ աշխարհի վերազարթումի ու մարդկութեան վերածնունդի յոյսը.*

> *«Ծունր դիր, ո՛վ Տէր, ծունր դիր… Թող աչքէդ կայլակող կենսատու կաթիլները հոսին ու թափին այս մեռնող երկրին վրայ։ Աստուածակերպ կաւէ այս անօթը փշրած է, դուն զայն վերստին շաղէ քու արցունքով, նո՛ր կաւ շինէ եւ կերտէ նո՛ր մարդը, հին բեկեալ եւ մանրեալ անօթը»։*

*Իրմէ ետքը, Եղիա Տէմիրճիպաշեանն է միայն, որ պիտի գոչէ Աստուծոյ.*

> «Ո՜վ իմ Աստուած, արարչութիւնդ ա՜յ ինչ ցաւ…
> Իջի՛ր, Տէր իմ, մարմի՛ն, զգեստ ա՛ռ նորէն.
> Նոր աշխարհ մ՚ստեղծել եկուր, սէ՛ր բեր վերէն»:

*Ծրիմեանի* «Խաչին ճառը» *իր ազգին խաչելութեան մէկ խորհրդապատկերն է, որ կը բերէ երաշխիքը յարութեան։ Որովհետեւ Ծրիմեան կը հաւատայ, թէ խաչը վախճան չէ, այլ՝ պատուանդանը յարութեան.*

> *«Մարդիկ թերահաւատ են. կը հաւատան, թէ ցորենի հատիկները կը բուսնին, բայց մեռելոց մարմինները չեն բուսնիր։ Տո՛ւր մեզ այդ հաւատքը, ով Տէր, քու անմահ օրինակովդ։ Փարատէ՛ մեր մէջէն խաւարը, եւ հաւատանք, որ այս չարչարանի կեանքը ունի իր յարութիւնը»։*

*Ես կը խնդրեմ, որ լոկ «մատենագրական» տեսակէտէն չդիտուին այս գրուածքները, այլ՝ հասկցուին բարոյական արժէքներու եւ հոգեկան ճշմարտութեանց տեսակէտէն։ Ամէն ապրող սերունդ պէտք ունի հոգեկան ճանաչումի, եթէ նոյնիսկ նիւթի մէջ թաղուած ըլլայ այնքան, որ խեղդուի անոր մէջ ու չկարենայ տեսնել հոգեկան երկինքի պայծառութիւնը։ Ուստի, տա՛նք որ ամէն սերունդ կարդայ այս գրութիւնները, որպէսզի բարձրանայ կեանքի հոգեկան ճշմարտութեանց արքայութեան։*

digitised by A.R.A.R.@

## Է.— ԱԶԳԱՅԻՆ ՇՈՒՆՉՈՎ ԳՐՈՒԱԾՔՆԵՐ

*Խրիմեանի առաջին ազգայնաշունչ գրութիւնները երեւցած են պարբերաթերթերու մէջ։ Իր հրատարակած* «Արծուի Վասպուրականի» *եւ* «Արծուիկ Տարօնոյ» *մէջ է, որ հետզհետէ կ'աճի իր հակումը դէպի ազգային ազատագրական նիւթեր ու պատմական ոգեկոչումներ։ Այն առեններն էր, որ Վարագայ Վանքին մէջ ջերմ դպրանոց մը կազմակերպեց ու տպարան սկսաւ դարձնել, եւ իբրեւ մշակոյթի կեդրոնէ՝ այնտեղէն հնչեցուց ազգին արդար իրաւունքները։ Այդ* «Արծիւ»*ներու թեւերուն տակ հայրենի շունչով իրարու մօտ եկած են մէկ քանի խանդավառ դէմքեր, որոնք պիտի բանային գաւառական գրականութեան նոր ուղի մը։ Հայկ Աճէմեան, Խրիմեանի առուաբահաւոր կենսագրողը, այդ արծուաբոյնը կը կոչէ «Գաւառական գրամշակներու հաւաքարան», ուր կը մեծնան Սրուանձտեանց, Փիրղալէմեան, Տէփեանց, Թոխմախեան, Միրախորեան, Համբարձում Երամեան, Մարկոս Նաթանեան։ Այդ արծուաբոյնով, Վասպուրական կը դառնայ կեդրոն մշակութային ու կրթական շարժումի։ Հոն է ծնած ու գործած նաեւ* Արարատեան Ընկերութիւնը։ *Ուրեմն վերադարթնող միտքի լոյսը դէպի խոր գաւառ դարձնող առաջին փարոսներէն կ'ըլլայ Խրիմեան։*

*Սակայն Խրիմեանի հայրենասիրական առանձին երկու գիրքերը կուգան աւելի ուշ,* 1875-76*ին Օսմանեան Սահմանադրութեան հռչակման շրջանին։*

«Վանգոյժ» *եւ* «Հայգոյժ»

*Թուրք կառավարութեան կողմէ կազմակերպուած հայկական ջարդերու աղիողորմ արձագանգն են այս գիրքերը։ Պոլսոյ մէջ, Խրիմեան երբ կը լսէ իր հայրենի գաւառին աղէտը, ցաւէն մորմոքած սիրտը կծու բողոքներ կը բարձրացնէ, որոնք անդրադառնալով հայ ժողովուրդին՝ կը վերածուին յանդիմանութեան մը, թէ ինչո՞ւ ձեռնածալ նստի... Կարծէք յեղափոխական ոգիի առաջին շեփորումն է։ Բռնութեան դէմ ծառանալու մտքեր կը սերմանէ որդէն։ Վան քաղաքը հրդեհուած է.* ո՜վ գեղեցիկ Վան, Վասպուրական աշխարհի զարդն ու պսակը, երանի՜ կարենայի աւերակիդ մոխիրին վրայ նըստած քու ողբդ լալի որդիներուդ, սփոփէի ու նոր գործի կանչէի... *Ա՛յդ է իր ըսել ուզածը.*

> *«Մի՛ լաք, մի՛ կոծէք. շուտ կ'անցնին ձեր աղոյ գիշերն ու առաւօտու ուրախութիւն կ'ողջունէք։ Քու յաղթանակութեան քայլերդ հաստատուն ու զօրաւոր էին։ Ո՛վ տխրաւէր ու ծրաշան մշակներ, հայրենեաց ագարակին մէջ այդ ի՛նչ մխոմըրութեամբ կ'աշխատէիք, բեղմնաւոր հունձքերով երկիրը բարեշէն պահել ու տիրոջ շտեմարանը գանձով լեցնել։ Միթէ նա որ յափշտակեց ընկերին հաց, նա կո՞ւշտ պիտի ուտէ։ Ո՛չ, ո՛չ։ Չգիտեմ քու մեղքդ ի՛նչ էր, ո՛վ անգէն ու հլու ժողովուրդ։ Ո՞ւր եղաւ հառաչումն քու հաւատարիմ հպատակութեան։*
>
> *«Ողորմիմ քեզ, ժողովուրդ Հայոց, ողորմիմ. արդեօք լաւագոյն չէ՞ր քեզ, որ միանգամ մեռնէիր... քան թէ այսպէս ի գետին թաւալելով մեռնէիր։ Ո՛հ, մինչեւ ե՞րբ անսամ քեզ, որ ինքնազոհ մեռնիլ սորվիր։ Աշխարհ սորվեցաւ այդ դասը եւ մրցանակ առաւ. դու դեռ անուս մանուկ մնացիր...*
>
> *«Նախատի՛նք, նախատի՛նք, ով Թուրքիստան. գիտցիր, թէ ի՛նչ կը լինի այսուհետեւ։ Ով հաւատարիմ ժողովուրդ Հայոց, մարդիկ եւ ազգեր կան, որ քու այնչափ հաւատարմութիւնը կը ծաղրեն ու կը մեղադրեն զքեզ։ Միթէ գահհաց կոա՞ւ եա դու աշխարհի վրայ»։*

digitised by A.R.A.R.@

Կարծէք Աւետիս Ահարոնեանն է, որ կ'ըսէ. — Ա՛լ բաւական է. ոտքի՛, եւ զա՛րկ:

Վիլսէն խելայեղ, եկեղեցականը արդեօք անպատասխանատու ըմբոստութեա՞ն կը հրաւիրէ իր ժողովուրդը: Ուրիշ հպատակ ազգեր ըմբոստացան եւ ստացան իրենց վարձքը, անկախութիւնը... իսկ դուն դեռ մանուկ կը մնաս... Այսպէս ըսելով՝ Խրիմեան անշուշտ կ'ակնարկէ Պալքանեան ժողովուրդներու ազատագրութեան: Նոյնպէս, ուրիշներ մեր այսքան հլութիւնը կը ծաղրեն՝ ըսելով, կ'ակնարկէ եւրոպացի բարեկամներու, որոնք սկսած են հայ ականջներու փսփսալ, թէ երբ ըմբոստութեան շարժում մը չղթայագերծուի՝ իրենք միջոց կ'ունենան միջամտելու...

Ո՞վ պիտի նախատեսէր, թէ այդ «միջամտութիւնը» պիտի կատարուէր, ո՛չ թէ հայութիւնը ազատագրելու սիրոյն, այլ՝ իւրաքանչիւր «միջամտողի» իր սեփական շահերը ապահովելու ծրագրով... Խրիմեան լի յոյսով կը յորդորէ իր ժողովուրդը նոր աշխատանքի լծուելու.

> «Կոխեցէ՛ք եւ անցէք, ով աշխատաւոր եղբայր. մի՛ թափառիք ու հեռանաք ձեր աւերակ ագարակէն, փնչալով վարեցէք ու պատառեցէք այդ տառապանաց ակօսն: Ծիր մշակներ, լի յոյսով ցանեցէք ձեր վաստակաւէր քրտանց սերմն: Պահ մի եւս պաշտեցէք, զի ձմեռ է, ձիւն եւ սառնամանիք ծածկեր են մեր աշխարհ...
>
> «Գարուն մօտ է Հայո՛ց աշխարհ, եւ պիտի գայ ծիծեռնակ քեզ աւետիս տալ, թէ աշխարհի երկնից կ'անցնի եւ իւր վերածնութեան օրը հասած է: Եւ դու ա՛ն յանժամ, թէ ի՛նչպէս այդ մախաղևոյս ագարակն ամբողջն բողբոջելով կը կանաչի, եւ քո վերջինն բարգաւաճ կը լինի քան զառաջինն»:

Իսկ «Հայգոյժ»ին մէջ Խրիմեան աւելի անդին կ'անցնի. ո՛չ միայն կը յորդորէ ժողովուրդին ոտքի կանգնիլ եւ ինք վարել իր ճակատագիրը, այլեւ՝ յեղափոխութեան ճամբան ցոյց կու տայ իբրեւ միակ ելք տառապանքէն: Յեղափոխութիւնը կը պատկերէ իբրեւ Սեղովամի աւազանը, ուր իր բուժումը պիտի գտնէ ա՛ն՝ որ ամէնէն առաջ ինքզինք կը նետէ անոր մէջ.

> «Ո՛վ դուն մաշած եւ հիւծած հիւանդ, թէ յերկնուր բժշկութիւն կը ժաս, ո՛ն ուրեմն, փոքր ինչ խլրտի՛ր մահճիդ մէջէն, ինքնաշարժ եղիր: Ահաւասիկ Աստուծոյ մասն ու հրեշտակ աշխարհիս յեղափոխութեան աւազանին ջուրերը կը յուզէն: Ո՛վ որ զինքն վաղ ձգէ նորա մէջ, նա միայն իր ցաւերէն կ'ազատի»:

Արդեօք Խրիմեան ըսել կ'ուզէ, թէ «Միայն զէնքո՞վ կայ Հայոց փրկութիւն»: Ցանդուղն պայքարի՞ կը հրաւիրէ արդեօք, կամ քաղաքական միամտութի՞ւն կ'արտայայտէ:

Բայց Խրիմեանի ողբը մահուան գոյժ մը չէ, այլ ազգին ներքին ուժերուն վրայ հաւատք հրահրող եւ կորով ոգեւորող բոց է: Անկեղծ ու հոյակապ ժայթքումն է ան հայրենասէրի սիրտէն, խոհերով ծանրացած՝ իր ամէն մէկ նախադասութեան մէջ: Կիրք չկայ իր կոչերուն մէջ. անտեղի ու շինծու յորդորներ չկան: Իր ցաւերու սաստկութենէն պոռթկացող արդար բողոքն է իր խօսքը, եւ անձնկուն կենալու յորդոր.

> «Մի՛ վհատիր, հարուածեալ ժողովուրդ: Յոյս առ ու քաջալերուէ՛, ժողովուրդ Հայոց: Երկնագարմանալի է, որ մինչ կը ջախջախուիս ու չես մեռնիր: Բարբարոս ազգեր մինչ արշաւեցին ու քայքայեցին քո հայրենիք. բայց դու անմկանդ, անյուսահատ ու տոկացող ոգի ունիս: Հաւատք քո կեցուցին զքեզ»:

digitised by A.R.A.R.@

Խրախուսիչ նոյն ոգին կը շնչէ Խրիմեան իր միւս գործերուն մէջ ալ։ Պոլսոյ պատրիարքութեան կարճ շրջանին (1869–1873), ընդհանուր շրջաբերական կը ղրկէ Օսմանեան պետութեան մէջ բնակող բոլոր Հայերուն.

«Յուսացէ՛ք ու մի՛ վհատիք, Աւետարանի հեզ համբերող որդիք… Աստուած քու մէջն է։ Ամէն ազգերէ նուազեալ ես, որ երբեմն անթիւ անհամար բազմացեալ էիր։ Բայց մի՛ վախնար, թէ կը պատրաս կամ չորս հազար տարուան քու հինօրեայ յիշատակ պիտի բարձուի Մասեաց աշխարհէն։ Ո՛չ. դու պարթեւական հօր, այն Տրդատ մշակին անկած այգին ես։ Թէպէտ մեծամեծ որթերդ, ընտիր-ընտիր ողկոյզներդ քու գրտաց թշնամիներդ քանդեցին… այլ իբր հին մի՛ գեղ նախաճաճման ձեռք մը դեռ անարատ պահած է Արեւելեան Դրախտին մէջ… Նա դարձեալ պիտի պտղաբերէ դեռ, ու դուն կրկին քաղցրաբեր որթերովդ բարգաւաճիս»։

## Ը.— ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԳԻՐՔԵՐ

Խրիմեանի ամէնէն մնայուն եւ հետզհետէ աւելի աճող արժէքով պահպանուած գործերը պիտի ըլլան ապահովաբար հասուն տարիքի այն գրութիւնները, ուր ան կը սորվեցնէ հայ ժողովուրդի դարաւոր իմաստութիւնները, գիւղական կեանքի շրջանակին մէջ։ Այս գիրքերը պիտի ըլլան Խրիմեան վրադէտը ապրեցնող գործերը։

«Դրախտի ընտանիք», «Սիրաք եւ Սամուէլ», ու մանաւանդ «Պապիկ եւ թոռնիկ»։ Այս մէկ գործը պիտի բաւէր իր Հայրիկ տիտղոսը յաւերժացնելու։

«Պապիկ եւ թոռնիկ» մեծարժէք գաւառագիրքին մէջ Խրիմեանը կը տեսնենք իբրեւ նահապետ մը՝ նստած իր հօրենական օճախին գլուխը, շուրջը հաւաքած իր որդիներն ու թոռները, կեանքի զրոյց կ'ընէ անոնց հետ։ «Հայոց Հայրիկը» իր փառքէն իջած ժողովուրդին մէջ, իրեն հաճոյք կը գտնէ «շինական» պապիկ մը ձեւանալ, իբրեւ թէ Առջակ գիւղէն։ Համեստ ծնունդով, հեզ ու բարի բնաւորութեամբ մեծցած, շատ գործերով կեանքի փորձառութիւն հաւաքած, իմաստուն դարձած եւ աշխարհը ճանչցած պապիկը խրատներ կու տայ գալիք սերունդներուն, տեսութիւններ կը պարզէ կեանքի եւ ընտանիքի եւ ընկերութեան մասին։ Իմաստութիւնը դպրոցներէ չէ սորված ան, այլ կեանքէ քաղած է, աշխարհն ամբողջ դպրոց եղած.

«Ձըսն՛ս, Թոռնիկ, դպրոցէն ե՛ս կու գամ ու Վիրգիլիոսէն դա՛ս կը խօսիս։ Թոռնի՛կ, մի քանի տարի դպրոց մնալով՝ կը կարծես, որ Պապիկէն շատ բան գիտե՞ս։ Ես յիսուն տարի է, որ լսելով, տեսնելով ու փորձառութեամբ կը սորվիմ։ Ես քեզ պէս դպրոց չեմ տեսեր, բայց աշխարհի բաներ, աշխարհի մարդիկները ինծ համար դպրոց են եւ ես դեռ կը սորվիմ այս ծերութեան ժամանակ»։

Ու գիրքին էջերը կը լուսաւորուին ճշմարիտ սիրով մը իր ժողովուրդին ու հայրենիքին հանդէպ։ Ան կը սիրցնէ հայ ցեղին առաքինութիւնները, նախանձախնդրութեամբ կը գուրգուրայ հայրենի աւանդութեանց վրայ, կը սորվեցնէ աշխատանքի սէրը, կը յորդորէ անաղարտ պահել հայ ընտանիքը, ցոյց կու տայ աշխարհի ժողովուրդներուն անմահ եւ անկման պատճառները, կը վերլուծէ մարդկային կեանքը, կը փնտռէ արժէքները։

digitised by A.R.A.R.@

*Խրիմեանի մեծագոյն խրատն է՝ կապուիլ* հողին, *որ մայրն է բոլոր բարիքներուն։ Շինականի մաքուր ու պարզ կեանքի իմաստասիրութիւնը կայ իր* «Պապիկ եւ Թոռնիկ»*ին մէջ։ Խորհուրդով եւ իմաստով ծանրացած տեսարան մըն է, օրինակ, երբ պապիկը իր թոռը կը պսակէ «մահկանացու» Շուշանին եւ «անմահ» հողին հետ միաժամանակ։ — Չի բաւեր, Թոռնիկ, — կ'ըսէ, — որ քու կեանքդ կապես Շուշանին, աւելի կարեւոր է, կապուած մնաս հողին։ Եթէ հողը ձեռքէդ ելաւ, այն ատեն մենք ամէնքս կը մեռնինք, ու քու եւ Շուշանի օճախն ալ կը քանդուի։ Դուն թերեւս չես հասկնար այս զարմանալի պսակադրութեան իմաստը, քու պսակադրութիւնդ հողին հետ. բայց պիտի հասկնաս զայն անպայման օր մը։ Ուրեմն, ճիշդ ինչպէս Շուշանին ճակատը համբուրեցիր, ծռէ եւ համբուրէ՛ նաեւ եզներուդ ճակատը, ու ծունկի եկուր հողին վրայ՝ ընդունելու այս թարմ ոստէ պսակը պապիկի ձեռքէն...*

*Խրիմեանի համար մտքի սեւեռում է ՀՈՂԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ։ Ուրիշ ոչինչ կը ցնցէ իր հոգին այնքան խոր, որքան երբ կը խօսի հայրենի դաշտերու մասին։ Ամբողջ ցեղին կեանքը պայմանաւորուած է այդ հողով։ Այդ «հողը», սակայն, իրական վարուցանքի արտն է, եւ ո՛չ լոկ «հայրենիք» կոչուող ընդհանրութիւն մը։ Խրիմեան կ'ուզէ, որ ամէն շինական ճանչնայ, թէ մեծագոյն հարստութիւնը շինական մշակ ըլլալն է։ Իր կեանքի ամբողջ իմաստասիրութիւնը կ'ամփոփուի այդ հողի պաշտամունքին մէջ։ Մահուան մօտեցած ժամուն իսկ՝ իր միտքը հողին կը դառնայ, ու կը կտակէ որ թոռնիկը զինք թաղէ այն հողին մէջ, ուր ինք գործեց, քրտնեցաւ եւ արդիւնք բերաւ, կերպով մը՝ իր կենդանութիւնը խառնեց այդ հողին, ուստի՝ թող իր վերջին հանգիստն ալ գտնէ խառնուելով այդ հողին։ Թող իր գերեզմանն ալ, իբր արտի մաս, վար ու ցան ըլլայ եւ հոն բուսած ցորենէն ալիւր շինուի ու Ս. Խորանէն իբրեւ «մաս» բաշխուի ժողովուրդին։ Ու կ'ուզէ, որ իր գերեզմանի խաչքարին վրայ ալ այսպէս գրուի.*

«Այս է տապան Առջակեցի Պապկէն
Որ հող ու մած սիրեց,
Ու թոռնիկին
Հողագործութեան դասեր խօսեց»։

*Իր մահէն ետքն ալ ուրիշ շնորհի չի ցանկար, չի ցանկար հրեշտակներուն հետ նստիլ եւ Աստուծոյ փայլուն դէմքը դիտել, այլ կը ցանկայ փոքրիկ արտի շերտ մը, ուր Քրիստոսի անխափան արեւին տակ շարունակէ հող մշակել.— Արքայութեան դաշտէն միայն փոքրիկ արտիկ մը կ'ուզեմ, ուր վար ու ցան ընեմ...*

*Խրիմեան իր այս հողապաշտութեամբ կը խօսի ո՛չ թէ իր սերունդին, կամ Վասպուրականի գիւղացիին, այլ՝ բոլոր դարերու Հայ Ցեղին։ Ան իր այս կեցուածքով կը դատապարտէ դարերէ ի վեր հայ ժողովուրդին բռնած գաղթային քաղաքականութիւնը. լքել հողը եւ պանդուխտ թափառիլ։ Ուրիշ ոչ մէկ աղէտ այնքան մեծ կը տեսնէ, որքան հողը ուրանալով անկէ հեռանալը։ Ցեղային իմաստութիւն մըն է այդ հողասիրութիւնը, որ սակայն չէ ըմբռնուած հայութեան կողմէ։ Հայը միշտ եղած է* գաղթող ժողովուրդ

digitised by A.R.A.R.@

*մը։ Այդ է մեծագոյն մեղքը իրենց թափառումներուն եւ առանց հայրենիքի սպառելուն, դարերու հոսանքով։ Ու Երիմեան կ'ուզէ հողին վերադարձնել իր ժողովուրդին պանդուխտ զաւակները։*

«Հայրիկ կ'ողբայ՝ պանդխտութեան ցաւը ձմեռներին Պոլսոյ փողոցներուն մէջ հիւծող, մաշող գաւառացիները, որոնց ճակատէն քրտինքը ճող-ճող կը հոսի եւ որոնցմէ շատեր ի վերջոյ կ'երթան հանգչիլ Պալըգլըի գերեզմանատունը. իսկ տարիներ յետոյ իրենց հայրենի կտուրը վերադարձողներ՝ կը գտնեն, որ պանդխտութեան մէջ վաստակուած դրամը *խէր-պէրէքէթ* չունի իրապէս։

«Երիմեան այնպիսի ձեւ կու տայ իր գրչին, որ մարդ իրապէս դէմ յանդիման կը գտնէ ինքզինք առոյգ, կայտառ հայ շինականին, որուն շալվարն ու քոլոզը, արօրն ու խարազանը ընտանի կը դառնան իրեն եւ ինք կը բռնի անոր հետ քշել գութանին ու վար ու ցանքի հեշտանքը, եւ բաղձալով բաղձալ այն հալալ, անխարդախ վաստակը, զոր հողը կը պարգեւէ զինք մշակողին»։

(*Յովհաննէս Աւագեան*, «Գրական Դէմքեր», *էջ* 110–111)

*Այնքան տիրական է Երիմեանի մէջ այս հողային-հայրենիքի գաղափարը, որ այդ մասին գրած առեն երբեք մտահոգ իսկ չէ գրուածքի արուեստին մասին. կը գրէ ինչպէս որ իրեն կու գայ մտածումը՝ խառն զգացումով։ Յակոբ Օշական Երիմեանի գործին մէջ կ'ուզէ տեսնել «ձախողանք եւ ծանրածաւալ շատախօսութիւն, որ կը կազմէ Երիմեանի գործին 9/10 մասը»։ Բայց չի կրնար ինքն ալ ուրանալ այդ գործին ամբողջական արժէքը։ Երբ կը խօսի* «Պապկէ կտակ եւ մահ» *վերջին գլուխին մասին, կ'ըսէ.*

«Առանց գրական ծանր տարազներու օժանդին՝ դիւրին է մեզի համար այս էջին մէջ գրագէտէ աւելի հոգի մը, ներշունչ մը, մտայնութիւն մը, նոյնիսկ ժողովուրդ մը ճանչնալ։ Այս հատուածին մէջ ինքնաբերաբար կը հետեւին գրագէտի մեծութեան, քաղաքականութեան, հարազատութեան, հայեցիութեան հարցերը։ Ահա թէ ինչո՛ւ նոյնիսկ կանոնաւոր կաղապարը չիրագացած արեւմտահայ աշխարհաբարին (Երիմեանի լեզուն վիրաւոր է գրաբարով, գաւառաբարբառով, հասարակով), մէկու մը հետ ես կը տեսնեմ մեր մեծագոյն գրագէտներէն մէկը, հոգ չէ թէ փոքր էջերու վրայ ինքզինք իրագործած, դիւրին է մոռնալ ձախողանքը, ծանրածաւալ շատախօսութեանց (Երիմեանի գործին 9/10ը) եւ հիանալ սա սեղմ, բայց այնքան թելադրիչ գրքոյկին վրայ»։

(*Յ. Օշական*, «Հայ գրականութիւն», *Հին տպագրութիւն*, *էջ* 362, *նոր՝* 378)

*Բայց եթէ հաշուենք, թէ Երիմեան կը գրէր ո՛չ թէ «արուեստի» սիրոյն, այլ՝ իր բերած ճշմարտութեանց սիրոյն, ոեւէ գրագէտ պէտք լռէր անոր լեզուական անհոգութեանց մասին։ Ու թերեւս աւելի ետքը գան գրադատներ, որոնք կարենան համարձակ ըսել, թէ Երիմեանի գործին 9/10ը արժէք կը պարտադրէ իր ժողովուրդի հարազատ պատկերումներովը, հոգ չէ թէ «արուեստի» ի՛նչ չափանիշով տրուած։* Արուեստ բառածը ժամանակաւոր եւ անցաւոր տարրն է գրուածքի մը մէջ, *եւ ուստի՝ պէտք փոխուի անոր արժէքը եւ չափանիշը սերունդէ-սերունդ։ Իսկ անանց մասը, ա՛յն՝ որ բոլոր ժամանակներու կը պատկանի, գրուածքի ոգին է, ժամանակակից կեանքը եւ ըմբռնումները տալու յաջողուածքը։ Եւ պէտք սխալին բոլոր գրադատներ, որոնք գրուածքի մը կը նային միայն «արուեստի» — այս անբովանդակ դար-*

digitised by A.R.A.R.@

*ժած բառի — յաւակնութեամբ։ Եւ այս տեսակէտով, Խրիմեանի արժէքը չի կրնար չափուիլ անոր լեզուին «գրաբարախառն» եւ տողերուն «անխնամ քերականութեամբ» կառուցուած ըլլալովը, ճիշդ ինչպէս պիտի հաւկնայինք, որ այսօր Աբովեանի մը գործին արժէքը չի կրնար փնտռուիլ անոր աղճատախառնակ լեզուին կամ նիւթի անխնամ մշակումին մէջ, այլ՝ հայրենասիրական խորունկ հաղորդականութեան մէջ։*

*Աւելի արդար է համաձայնիլ Թորգոմ Պատրիարք Գուշակեանի դատումին հետ, որ արժէքաւոր ուսումնասիրութիւն մը ունի Խրիմեանի ամբողջ կեանքի մասին, ուր եւ ակնարկելով «Պապիկ եւ Թոռնիկ»ին՝ կ'ըսէ.*

> «Իրարմով ներդաշնակուած մտածումներու եւ զգացումներու անպաճոյճ հոսանք մըն է արդարեւ գործն ամբողջ, որ հեզասահ ու զուարթ ընթացքով կ'անցնի հայրենի երկրին բոլոր մարզերէն. հոս՝ արտն ու զութանը, անդին՝ հօտն ու նախիրը, քիչ մը հեռուն՝ իրարու ետեւ վազվզող հասկերուն ալիքները, աւելի անդին՝ բուխերիկներու ծուխը, ժամուն կոչնակը, գերեզմանատան խաչքարերը, ջաղացքն ու աղբիւրի վրայ հակած ուռենին» (էջ 150)։

*Իր այս մէկ գործով կը յայտնուի Խրիմեանի ինքնութիւնը եւ իմաստութիւնը։ Խորհուրդով լեցուն գմայլելի հայրենասիրութիւն ու ժողովրդավարութիւն կայ իր այս «կտակ»ին մէջ.*

*— Հայոց Թոռնիկներ, ձեր հողի՛ն կապուեցէք։*

*Դարերու իմաստութիւնը կը խօսի իրմով։*

## Թ.— ԱՇԽԱՐՀԸ ԽՐԻՄԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՄԷՋ

*Խրիմեանի վերջին գործերուն մէջ կը յայտնուի աշխարհի ու ազգերու կացութեան վրայ հայեացք մը, հեգնութեան յայտնի գիծով մը։*

*Օրինակ, «Թագաւորաց ժողով» գործը, դարձեալ գրաբարախառն բանաստեղծութիւն մը, կը ներկայացնէ մեծամեծ պետութիւնները ժողովի նստած՝ կը մտածեն աշխարհի խաղաղութիւնը պահպանելու յաւիտենական հարցի մասին։ Ամէնքն ալ կը յոխորտան իրենց սուիններով ու զէնքերով. ամէն մէկը իր ուժը կը ցուցադրէ — ծովերու հսկայ մը՝ իր դրահաւորները, ցամաքի հսկայ մը՝ իր «անպարտելի բանակը», երկու աշխարհներու միջեւ նստած մէկը՝ միւս պետութեանց անհամաձայնութենէն օգտուելու իր ճարպիկութիւնները... Իսկ վերջին խօսողն է փոքրիկ պետութիւն մը, որ կը հպարտանայ իր «հաւատարիմ ժողովուրդով»։ Ու կը հասնի եզրակացութեան, թէ պետութեան մը անխորտակելի ուժը իր ժողովուրդն է միակամ եւ համագործակից։*

*Ուրիշ ժողովի մէջ, երբ ազգեր նստած խաղաղութեան դաշնագրի մը ստորագրութեան մասին կը բանակցին, յանկարծ դուրսէն հրացէնի ձայներ կը լսեն, եւ ամէն մէկը դաշնագրի թուղթն ու գրիչը ձգած՝ կը փարի... իր հրացանին...։ Հայրիկը կ'ուզէ ծաղրել, ուրեմն, թէ ազգերու այս բոլոր ժողովները խօսքի սփոփանք են միայն... Երբ հնչէ վտանգի ժամը, յանկարծ բոլորն ալ պիտի վերադառնան իրենց թշնամութեանց։*

*Խրիմեանի վերջին գրուածքը՝ «Վերջալոյսի Ձայներ», պարզ եւ առանց իսկ տաղաչափական մտահոգութեան, խորհրդածութիւններ կը ձայնէ, մինչ, սակայն, աչքերը յառած «Օրհնեալ օրուան այն յարութեան», որ պի-*

digitised by A.R.A.R.@

տի ըլլայ իր ժողովուրդին ազատագրումը։ Փոքր-փոքր այս երգերը այլեւս մրմունջներ են, յիշատակի քանի մը փունջեր՝ քաղուած կեանքի ճամբաներէն ու եզերքներէն, զորս երկիւղածութեամբ կը զետեղէ հայ ազատութեան պայքարի մեծ մարտնչողներու շիրիմներուն՝ Վարդանանցի, Ղեւոնդեանցի, Խորենացիի։ Խորհրդաւոր պատկեր մըն է այս վերջիններին ընծայուած քերթուածը. Հայոց Պատմահայրը՝ Խորենացին, այլեւս յոգնած՝ աշխարհը շրջելէ, ազատութիւն գտնելու տենչով, գրիչը կը ձգէ, հիմա կը դառնայ ջաղացպան.

«Քերթողն եղեր է ջաղացպան,
Թողեր գրիչ, առեր կռան,
Ջաղցի քարերն է սրում...
«Արագ-արագ պտոյտ առէք,
Իմ ապաւէն ջաղցի քարեր,
Մանր աղօրէք, ալիւր ածէք,
Հաց պատրաստէք Հայոց ազգին...»

Իրաւունք ունի՞նք արդեօք ըսելու, թէ Խրիմեան ի վերջոյ դարձաւ լուսաւորութեան ու կրթութեա՛ն ճամբուն, հասնելու համար բաղձացուած ազատութեան, թէ՝ Հայութեան արդար ազատագրումը պիտի իրագործուէր՝ նախ Խորենացիի հացով կերակրուելով, նախ զայն զօրացնելով իր առհմադրոշմ մշակոյթով ու գիտութեամբ։ Նոյն ճամբան մատնանշած էին ազգին փոթորկալի օրերը ապրած իրեն ժամանակակից ուրիշ իմաստուններ եւս՝ Գրիգոր Օտեան, Գէորգ Դ. կրթասէր Կաթողիկոս, Մաղաքիա Պատրիարք Օրմանեան, Կիլիկիոյ Մկրտիչ Քէֆսիզեան Կաթողիկոս։ Ու թերեւս ա՛ն էր ամէնէն զգոյշ եւ ապահով ճամբան արեւմտահայոց ազատութեան, մինչեւ որ Հայը ներքնապէս զօրանար, կազմակերպուէր, միացեալ մէկ ժողովուրդ դառնար, եւ իր տնտեսութեան ու մշակոյթին ու երկրի գործերուն տէր դառնար. այնուհետեւ դիւրին պիտի ըլլար տէր դառնալ նաեւ իր քաղաքական ու վարչական կեանքին։

Խրիմեան կը հաւատայ ազգին ներքին ուժերու վերազարթնումին։

Զմայլելի է՝ պանդուխտ հայրենակարօտ Ալիշան Նահապետի հանդէպ իր ցոյց տուած սիմպոլիք ժեսթը։ Երբ կը լսէ, թէ Ալիշան հիւանդ է եւ հայրենի հողին կարօտը յայտնած իրեն՝ իր հեռաւոր ու մենաւոր կղզիէն, Խրիմեան կ'իջնէ իր Աթոռէն, Երասխէն կուժ մը ջուր կ'առնէ, ու Մասիսէն բուռ մը հող, ու զանոնք կը ղրկէ հայրենակարօտ քերթողին, թէեւ, աւա՜ղ, դեռ անոնք Ս. Ղազար կղզին չհասած՝ կը վախճանի Ալիշան, եւ ուստի ղրկուած այդ հողն ու ջուրը կը ծառայեն միայն թաղուելու մօտը անոր, որ առանց տեսնելու այնքան սիրեց հայրենի աշխարհը եւ հաւատաց անոր գարնանային վերածաղկումին։

## Ժ.— ԱՆԿՈՐՆՉԵԼԻՆ ԽՐԻՄԵԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Խրիմեանի գրականութեան մէջէն ապրող մասը պիտի ըլլայ ա՛յն՝ որ կ'ապրեցնէ նաեւ Սրուանձտեանցը կամ Թլկատինցին։ Սրուանձտեանցի մասին ակնարկեցինք, թէ իրմէ մնացող արժէքը գաւառի կեանքի պատկերն է։ Նոյնն է Խրիմեանի արժէքը, բայց աւելի քան Սրուանձտեանցի, որովհետեւ

digitised by A.R.A.R.@

*իր տուածը բեկոր-բեկոր պատկերներ չեն, այլ հիւսուած, իրարու ագուցուած եւ կենդանութիւն առած ապրումներ Հայրենի աշխարհէն։ Խրիմեան ուսուցի'չն ալ է Սրուանձտեանցի. ուստի՝ վստահ կրնանք ըսել, որ Խրիմեանով կը սկսի մեր գաւառական կեանքի մուտքը գրականութեան մէջ։*

*Խրիմեանի գրականութիւնը զանգուածային ալ չէ, ինչպէս Ալիշանինը, բայց կենսալից է ու կրթիչ՝ ուղղուած ժողովուրդին, երակ-երակ պարտէզներուն մէջ հոսող առուակներու նման։ Իր ժողովուրդի ցաւերուն ու ցանկութիւններուն հետ շաղուած ու ձեւ առած գրականութիւն մըն է իրենը, որ կը բխի ժողովուրդի անմիջական կացութենէն ու կը ձգտի այդ կացութեան բարելաւման։ Ժողովուրդէն հեռու կեցած, անոր անհաղորդ, կամ վերէն նայող գրականութիւն մը չէ անիկա։ Խրիմեան չունի Ալիշանի բանահաւաքութեան անխոնջ համբերութիւնը, բայց ունի ջերմութիւն մը, որ ուղղակի ժողովուրդի սիրտին հետ հաղորդակից ըլլալէն եւ հայրենի հողին վրայ քայլած ըլլալէն եւ անոր աղբիւրներէն ափ-ափ խմած ըլլալէն կուգայ։*

*Եւ ինչպէս իր «Նիւթը» շինական է, նոյնպէս շինական է Խրիմեանի* ոճը: *Պարզ, իրական, կեանքի առօրեայ թուալով պատկերաւոր, աշխոյժ հոսանքով գրականութիւն մը, յուզումը հաղորդական ու մտածումը դիւրահաս, եւ այդ պատճառով ալ՝ խանդավառիչ ու դաստիարակիչ։ Առանց ճիգի ու ճախարակուած արուեստի, բնութեան պէս պայծառ ու հնչուն, առանց սարքի ու դարձուածքի խօսքեր են իր շարադրածները։ Կը խօսի իր ժողովուրդին, ու գիտէ, որ ժողովուրդը մտիկ կ'ընէ ու կը հասկնայ զինք։*

*Նոյնպէս, ժողովրդական է Խրիմեանի իմաստասիրութիւնը։ Չի ձգտիր հեռանալ բանասիրութեան ու բնազանցութեան ճամբաներով, այլ իր պայծառ միտքը եւ բանաստեղծի հոգին կը հակէ իր տառապած, բայց ազնուական ժողովուրդի իրական խնդիրներուն։ Հայրենիք, ազատութիւն, աշխատանքի օրհնութիւն, հողի սէր, տնտեսական բարգաւաճում, կրթական լուսաւորութիւն, բարոյական ամրութիւն, զուարթ ու շէն կենցաղ. ասոնք են կորիզները, որոնց շուրջ կը դառնայ Հայրիկի գրականութիւնը։ Իրն է մեծ վկայողութիւնը հայ ժողովուրդի աշխատասիրութեան, աւանդապահութեան, հայրենապաշտութեան, բարութեան եւ արիական կեցուածքին մասին։ Ամէնէն մեծ ճշմարտութիւնները կը խօսի ամէնէն պարզ բառերով։ Կ'ըսէ.*

> *«Առանց մտաւոր ու նիւթական հարստութեան դու մի'թէ արժանի կը համարիս զքեզ ժողովրդոց նոր կեանքը վայելելու... Լուսով հաց գտէք, դաստիարակութեամբ բարի ընտանիք կազմեցէք, իմաստուն տնտեսութեամբ հոգացէք ձեր ներկան եւ ապագան... Ազգերու փրկութեան տախտակը ընտանեկան կրթութիւնն է»։*

*Գրականութեան մէջ գաւառի կեանքի մուտքին եւ յաղթանակին մէջ ուրեմն մեծ դեր ունի Խրիմեան։ Ու գրականութեան այսպէս դէպի ճշմարիտ աղբիւրը, դէպի ժողովուրդը եւ բնագաւառը դիմելը շատ յատկանշական կը դառնայ մա'նաւանդ, եթէ հաշուենք, որ ատիկա կը կատարուէր այնպիսի' ատեն մը, երբ գրականութեան կեդրոնը Պոլի'սն էր, կամ Թիֆլիսը, կամ Վենետիկ ու Փարիզ, եւ գրականութիւն ըսելով՝ մարդիկ կը հասկնային պոլսական կեանքի պատկերներ կամ եւրոպական կեանքի փոխադրումներ՝ դէպի Պոլիս։ Գաւառին դեռ կը նայէին իբրեւ «լուսաւորուելու» կարօտ «խաւար»*

digitised by A.R.A.R.@

անկիւնի եւ չէին ալ ակնկալեր, որ անկէ գար հարազատ գրականութիւն մը։ Գաւառի գրականութիւնը դեռ չարուած գործ մըն էր, դեռ գալիք մը։ Մինչեւ իսկ 1890ական թուականներուն, դեռ վէճ կար գրագէտներու միջեւ, թէ արդեօք գաւառը պիտի կարենա՞յ տեղ բռնել նորագարթ գրականութեան մէջ։ Դեռ ոչ ոք կը տեսնէր, թէ բուն հայեցի ու մնայուն գրականութիւնը գաւառի տուածն է, ա՛յն՝ որ կը բխի հողէն ու ժողովուրդի սիրտէն ուղղակի։

Խրիմեան հետեւող է, ուրեմն, Թորենացիէն ի վեր ա՛յն գրողներուն, որոնք ուզած են հայուն բնիկ ցեղային առաքինութիւնները լոյսի բարձրացնել, ցոյց տալ, թէ ի՛նչ մեծագործութիւններ կան կատարուած այդ փոքր ածուին մէջ։ Գրականութիւն մըն է իրենը, որ չի բաժնուիր իր ժամանակէն ու չ'ուրանար իր ժողովուրդին կացութիւնը, այլ՝ կ'արտացոլայ անոր յուզումներն ու յաղթանակները եւ այդ պատճառով ալ ճշմարիտ գրականութիւն է, հայրենաբոյր եւ յաւերժական։ Որովհետեւ այդ գրականութիւնը կու գայ ժողովուրդի սիրտէն ու կեանք կ'առնէ անոր արիւնովն ու շունչովը։

Խրիմեանի գրականութիւնը այնքան ողողուած է լոյսով, որ մէջէն բոլորովին կ'անհետին ոճի ու լեզուի ստուերները։ Մշակումի անփութութիւնները, որոնց կը հանդիպինք տեղ-տեղ, մա՛նաւանդ նոյնիմաստ բառերու կրկնութիւններ չեն թուլցներ մեր ուշադրութիւնը, որովհետեւ իր գրականութիւնը պիտի դատուի ո՛չ թէ գրագիտական չափանիշերով, այլ սրտի մօտիկութեամբ։ Իր գործերը չունին վիպողի կորովը Ահարոնեանի, կամ թափանցող սրամտութիւնը Րաֆֆիի, կամ հզօր թափը Վարուժանի. բայց ինչ որ ունի՝ իր գործերուն կու տայ ջերմութիւն ու սրտագրաւ նկարագիր։

Ընթերցողը չի հանդիպիր ստուերներու, այլ կը յառաջանայ իրեն հաճելի տեսարաններով, ու կ'անդրադառնայ յանկարծ, որ արդէն մտած է գրութեան խորը։ Հայր Սիմէոն Երեմեան, Հայկ Աճէմեանի գիրքին տուած յառաջաբանին մէջ իրաւունքով կը դատէ.

«Հայոց Հայրիկը ո՛չ թէ իր գրչով, այլ իր հայկական եւ հայրական սիրովը իշխեց հայ հայրենիքի սիրտին վրայ»։

Խրիմեանի բոլոր գործերուն մէջ կրօնական, ազգասիրական վսեմ շունչ կայ, եւ անուշ, հարազատ ձայն մը, որ բարձր եւ ջինջ կը հնչէ տակաւին, ինչպէս հնչած էր Վարագայ արծուեբոյն լեռներու գագաթէն եւ արձագանգած Այրարատեան դաշտէն մինչեւ Կիլիկիա բոլոր հայ սիրտերու մէջ։ Կեանքի փորձառութենէն քաղած իմաստութիւնները կը բերէ իր որդիներուն, պարզ բայց հաւատաւոր ձեւով։ Եւ այդ հաւատաւոր ոգիով է, որ այնքան միամտութեամբ լի է ան նոյնիսկ իր քաղաքական ըմբռնումներուն մէջ։ Իր ժողովուրդին արժանիքին եւ իրաւունքին վրայ ինք ա՛յնքան խոր եւ բնական հաւատք ունի, որ կը զարմանայ, երբ զայն չի տեսներ օտարներուն մէջ ալ։ Բանաստեղծը իր մէջ՝ յաճախ գրիչը կը յանձնէ մարգարէին, որ կը վերանայ իրականութեան գետնէն ու կը խօսի տեսիլքներու մէջէն։ Կ'ուզէ որ աշխարհ ըլլայ այնպէս՝ ինչպէս կը տեսնէ իր պայծառ հոգին, ու երբ չի հանդիպիր իտէալներու իրականացումին, վար կ'իջնէ, կը յուզուի, կը դառնանայ ու կ'ըլլայ ամեհի։ Իր գրականութիւնը արձանագրումն է իր բարոյական ըմբռնումներուն։ Բայց աւելին. ան ժամանակագրութիւնն է հայ կեանքին, որուն ամէնէն ծանր փոթորիկներուն վկան եղաւ ինք։ Սահմանադրութենէն մինչեւ Կիլիկեան աղէտը՝ հոն ամփոփուած են մեր յոյսերն ու հառաչները քով-քովի։

Եւ այդ հաւատքով, Խրիմեան չէ դադրած երգելէ մինչեւ մահ։ Անգամ

digitised by A.R.A.R.@

մը, Աւետիք Իսահակեան իրեն կ'այցելէ, Ս. Էջմիածին, կեանքի վերջին օրերուն, 1906, ու կը հարցնէ, թէ ինչո՞վ կը զբաղի Հայրիկ.

— Գիւղացիները մօտ կու գամ ու կ'երգեմ, ու երգելով կը գրեմ:

— Ի՞նչ ես երգում, Վեհափա՛ռ Հայրիկ:

— Շարականներ կ'երգեմ, «Սուրբ Հարց» երգերէն:

Ի՞նչ հարկ հարցնելու, թէ ի՛նչ կ'երգէ ու կը գրէ Հայրիկ: Ան ունի երգող հոգի ու պիտի երգէ: Կծկուած իր նահապետի բազմոցին, մինչեւ 86ամեայ խոր ծերութիւն, ան դեռ կը պրկէ իր քնարին լարերը ու կ'երգէ Սուրբ Հայրերու ոգիով՝ աշխատանքի եւ ազատութեան երգերը, անսասան հաւատքով, թէ պիտի ծագի իր ժողովուրդի յաղթութեան լոյսը, որուն առաջին կայծկլտումները տեսնել մարգարէանալով պիտի փակէր իր աչքերը 1907ին:

Եւ այսօր, անշուշտ, կը հրճուի իր հոգին ու կ'օրհնէ իր թոռները յաւիտենականութեան մէջէն, երբ կը տեսնէ, թէ իր ժողովուրդի 1915–1918ի տառապանքի մէջէն ծնած է ազատ հայրենիքը եւ կ'աճի հին-հին Հայրերուն արիական ոգիովը եւ անոնց երազներուն իրականացումի ճամբուն վրայ:

Ու դեռ սերունդներով պիտի հնչէ այդ մաքուր ձայնը: Պիտի ապրի իր գրականութիւնը. որովհետեւ հայ հոգիի հարազատ մէկ ցոլացումն է անիկա: Աւետիք Իսահակեան, վերեւ ակնարկուած վերջին տեսակցութեան մասին իր յիշումին մէջ կը վկայէ ներքին զգացումով, թէ Հայրիկը անմահ է հայութեան մէջ.

«Քանի հնանայ, այնքան աւելի պիտի պայծառանայ նրա յիշատակը: Նա դարերի միջից պիտի նայի հայ ժողովրդին եւ պիտի խօսի նրա հետ հարազատ լեզուով, նրա նուիրական իղձերից եւ անմահ նպատակներից: Ժողովուրդը նրան չի մոռանայ երբեք. որովհետեւ նրա սրտից էր ելել եւ դէպի նրա սիրտն էր գնում»:

Իր մտածումները հայրական փորձառութեանց եւ զգացումներու ներդաշնութենէն բխած իմաստութիւններ են, որոնք թանկագին են բոլոր սերունդներու համար, որովհետեւ կը պատկանին մեր անցեալին ու չեն կրնար անգամ մըն ալ ծնիլ, ոչ իսկ վերականգնիլ նոյն հարազատութեամբ: Ամերիկահայոց հրատարակած հաւաքածոյի յառաջաբանին մէջ, Եղիշէ Պատրիարք Դուրեանի ըսածը մեր ալ ըսելիքն է.

«Հայրիկի գրածները թէեւ գրական արուեստի հրապոյրը չունին, սակայն չեն կրնար ուրանալ, թէ անոնք իրենց պարզ բայց խորունկ արտայայտութիւններուն մէջ կը պահեն բնական ու արտառոց գեղեցկութիւն մը: Մա՛նաւանդ՝ որ մեր ամօթխած եւ հայրենաբաղձ բարքերուն նկարագիրը, զոր հայրական ջերմ զգացումներով ու կիրթ փորձառութեամբ կ'աւանդէ մեզի, դասեր են ասոնք, որոնք չեն դադրիր երբեք ղօղանջիւն բախելէ մեր ականջներուն. այնքան հնչուն է եւ թրթռուն Հայրիկի սրտին վրդովեցուցիչ զանգակին պղինձը: Մեր կեանքին գիրքը պիտի կարդանք իրմով, իր մէջ ծրարուած անցեալ մը վերյիշելու համար ի պատիւ մեր ցեղին»:

Ու պիտի չպակսին սերունդներ ջերմեռանդութեամբ մօտենալու հայրենական ճոխ այդ սեղանին, ըմպելու համար անոր անապակ գինիէն եւ մասնակցելու անոր կենսատու հացէն: Ամէն սերունդի մէջ պիտի վերակենդանա-

digitised by A.R.A.R.@

*նայ Հայրիկի յիշատակը, եւ իր միջոցով՝ ազգին մեծ անցեալը, որ անցեալ մ'ըլլալով հանդերձ՝ ներկայ մըն է շարունակ, ու շարունակութիւն մը՝ վերածաղկեալ հայրենիքով:*

*Հայրիկին միայն մէկ ուխտ կը սպասէ կատարումի: Վարագայ վանքէն վերջին մեկնումին — կը պատմէ կենսագրողը՝ Ա. Թէրզիպաշեան — Հայրիկը իր «հրաժեշտի քարոզին» մէջ, ըսելէ ետք, թէ ո՛րքան սրտով կապուած է Վասպուրական աշխարհին ու մա՛նաւանդ Վարագայ վանքին, ուր՝ կ'ըսէ՝ մեծագոյն մխիթարանքս այն բուռ մը սերմն է, զոր ես ցանեցի հայու ուսման այս անդաստանին մէջ, կ'աւելցնէ.*

> *«Եթէ դուք ալ փոխադարձ սէր ունեցաք ինծի հանդէպ, ուխտեցէք կատարել վերջին փափաքս... Ո՛ւր ալ հասնելու ըլլայ Հայրիկի վերջին շունչը՝ անոր աճիւնը փոխադրել Վարագ, ու թաղել Վարագի եօթը խորաններու շուքին, անոր ընկուզենիներէն մէկուն հովանւոյն ներքեւ»:*
>
> («Արծիւը բոյնին մէջ», էջ 202-3)

*Հայրիկին այդ փափաքը կը սպասէ կատարումի, Վասպուրականցիներ: Բայց այդ ընել կարենալու համար նախ դուք պէտք է վերադառնաք Վան ու Վարագ...*

*Մինչ այդ, Հայրիկ կը հանգչի — աճիւնը՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի գաւիթին, իսկ հոգին՝ հայ ժողովուրդի սրտին մէջ:*

*ԲԻՒԶԱՆԴ ԵՂԻԱՅԵԱՆ*

(Շար. 2 եւ վերջ)

digitised by A.R.A.R.@

ՊԵՏՐՈՍ ԱԼԱՀԱՅՏՈՅԵԱՆ

# ՊԵԹՀՈՎԷՆԻ «3 ՈՃ»ԵՐԸ

## Իր Գլխաւոր Յօրինումներուն Ընդմէջէն

⊙

*Եթէ գիրք մը գրելու ձեռնարկէի Պեթհովէնի ծննդեան 200ամեակի առիթով, հաւանաբար յարմարագոյն խորագիրը ընտրէի նախադասութիւն մը, զոր Պեթհովէն գրած է իր մէկ նամակին մէջ, գրուած՝ 1815ին, կոմսուհի ERDODYի.—*

Բերկրութիւնը տառապանքի ընդմէջէն
(La Joie par la souffrance)

*Ուրախութեան տիրանալ՝ տառապանքի գնով, տառապանքի բովէն անցնելէ ետք միայն:* «9րդ համանուագ»*ին տարերային, միաժամանակ համամարդկային ուրախութեան մը խտացած երաժըշտաւորումին բարձունքը նուաճել՝ աշխարհային բազմապիսի տուայտանքներու եւ բազմատեսակ տագնապներու յաղթահարելէ ետք, այդ յաղթահարումներուն իսկ ընդմէջէն, ազնիւին ու հասարակին տրամաթիկ բախումներուն իսկ շնորհիւ, եւ այդ բախումներէն հաւաքուած, քաղուած կայծերու եւ լոյսերու համադրումներու դրսեւորումով: Ահա, եթէ կ'ուզէք, խտացած տողերու մէջ, Պեթհովէնի հոգիին պատմութիւնը:*

*Սակայն երաժշտութեան* ստեղծագործութեան *պատմութիւնը, գաղտնի խոկումներու, առանձնութեան, լռութիւններու, թռիչքներու, խոյանքներու պատմութիւնը՝ պատմութիւն չի ճանչնար.* «ինչպէ՞ս»*ներու պատմութիւնը* «ինչո՞ւ»*ներու չի կրնար պատասխանել: Ճշմարիտ ստեղծագործող մը շարունակական, մշտատեւ, յարաճուն մտահոգեկան* յեղափոխութեան *մը մէջ կ'ապրի եւ նման պատուանդանի մը հասած կեանքը, հետզհետէ կը դարբնէ եւ կը բիւրեղացնէ այդ ստեղծագործողին իւրայատուկ ոճը, որ, իր կարգին, յարաճուն* ինքնաբարեշրջումի *փուլերէն կ'անցնի՝ հասնելու համար իր վերջնական կերպարանաւորումին: Այս ուժական* (dynamique) *տիալեկտիկան ստեղծագործողին ստացական եւ մեզի փոխանցածին միջեւ կայացած՝ սեփականութիւնն է բոլոր ստեղծագործ արուեստագէտներուն: Պեթհովէնի* «9րդ համանուագ»*ին պատմութիւնը թեմաներու եւ հեշտալուր ու միակերպարան ներդաշնակութիւններու պատմութիւնը չէ, ոչ ալ «ճակատագիրը կը բախէ դուռը» դրական պատկերի մը երաժշտական ձեւաւորումը, այլ՝ երկունքի մը յայտնութեան փայլատակումը:*

*Պեթհովէնի երաժշտութեան այս ընդերքային երեւոյթը իրեն համար ստեղծեց յատուկ եղանակ մը ունկնդրելու պեթհովէնեան ոճը: Կարելի չէ զայն ուն-*

digitised by A.R.A.R.@



կընդրել որեւէ ձեւով, որեւէ ատեն. կարելի չէ Պեթհովէնի երաժշտութիւնը «musique de fond»ի մը՝ հեռուէն հեշտահոս եւ ներդաշնակ ձայներու վերածել եւ, միաժամանակ, ճաշ եփել, գիրք կարդալ կամ նոյնիսկ զանազան նիւթերու մասին մտածել։ Հիմնական այն բանը, որ իւրայատուկ էր մինչեւ Մոցարդ (18րդ դարու վերջը) երաժշտական պատրաստութիւն եւ հասկացողութիւն ունեցողներուն համար, պարտաւորաբար սեփականութիւնը դարձաւ բոլոր մարդոց՝ Պեթհովէնի երկերու յայտնագործումով. այդ բանը նորգործական ունկնդրութիւնն է։ Ունկնդրութիւնը՝ լսել չէ, ինչպէս դիտելը՝ տեսնել չի նշանակեր. լսել, դիտել կրաւորական երեւոյթներ են. կտոր մը միա՛յն լսել՝ կը նշանակէ անոր ենթարկուիլ մեր ականջին խողովակով. մինչդեռ ունկնդրել՝ ըսել կ'ուզէ հաղորդուիլ, ապրիլ կտորին հետ, վերանալ շրջապատէն, ականջի հետ միատեղ գործածել իմացականութիւն, արթուն հետեւողութիւն. ան ճակատումն է երկու աշխարհներու, բախումը երկու բախուն իրողութիւններու՝ «ստեղծագործ» ունկնդիրը մէկ կողմէն եւ, միւս կողմէն՝ ստեղծագործուած ներդաշնակութիւնը, որ կ'ունկնդրուի։

18րդ դարուն, Պեթհովէնէն առաջ, լա՛ւ ունկնդրուած երաժշտութիւն մը իր ներգործութեան տակ կ'առնէր զարգացած, երաժշտական իմացողութեան հասած հազուագիւտ ունկնդիրները եւ,

digitised by A.R.A.R.@

այսպէս, ընդհանուր մտահոգեկան, իմացական–զգացական խորունկ, սակայն համեմատաբար վերացական ներաշխարհ մըն էր, որ կ'իրագործուէր միայն. ա՛յդ է պատճառը, որ Ժ. Ս. Պախ, բացի Լայպցիկի Սբ. Թովմաս եկեղեցիին մէջ հաւաքուող հաւատացեալներէ, պալատական ու թագաւորական անձնաւորութիւններէ՝ ունկնդիր չունեցաւ եւ անյայտ մնաց իր մահէն մինչեւ կէս դար ետք իսկ: Մոցարդ ընդհանրապէս երաժիշտներու աշխարհին մէջ եւ բարձր դասակարգի մէջ էր, որ ունկնդիր ունեցաւ։ Սակայն Պեթհովէն — առաջին անգամ ըլլալով երաժշտութեան պատմութեան մէջ — ուղղակի կերպով հրահրեց մարդուն ներաշխարհի ամենաանձնական տարրերը, ամենամտերիմ յուզումներն ու ուրախութիւնները, տառապանքները, փղձկումները, ապրումները, առանց անպայմանօրէն իմացականութենէն անցնելու: Պեթհովէնի երաժշտութիւնը, ինչպէս կախարդական հայելի, իր ընդերքէն մեզի վերացոլացուց «քանձրացեալ» կերպով մը՛ր իսկ ամենանուիրական՝ հոգիի աշխարհը, որովհետեւ կրցած էր լաւագոյնս խտացնել համամարդկային բազմածաւալ հոգի մը եւ զայն դրսեւորել ապշեցուցիչ հարազատութեամբ: Պեթհովէնէն ետք, ուշադիր ունկնդիրին համար, աւելի հեշտ եղաւ հասկնալ Պախի եւ Մոցարդի երաժշտութիւնը, որովհետեւ ունկնդիրը այլեւս կրնար մեկնիլ իր ներաշխարհէն՝ հասնելու համար երաժշտութեան արտայայտչականութեան մեզի ընձեռած պատգամին, փոխանակ, հակառակ ուղին բռնելով, դժուարանար երաժշտութիւնը հասցնելու իր հոգիի մտերմութեան. չէ՞ որ վերացականէն թանձրացեալին հասնիլը շատ աւելի դըժուար է, քան հակառակ ուղին բռնելը։

***

1824 Մայիս 7։ Վիեննա։ Տեղի կ'ունենայ «Ցրդ համանուագ»ի առաջին ունկնդրութիւնը. ժողովուրդին խանդավառութիւնը եւ ծափահարութիւններու յորձանքը փոթորիկի մը երեւոյթը առած է. քաղաքավարութեան մայրաքաղաքը հանդիսացող եւ Ռոսսինիի երաժշտութեամբ չփացած 19րդ դարու Վիեննան, խելայեղ եւ աննախընթաց ծափահարութեանց տարափով 5 անգամ ողջունած է անմահ այս «Ցրդ համանուագ»ը (մինչդեռ, ընդունուած սովորութեան համաձայն, կայսերական ընտանիքին երեւումը որեւէ հանդիսութեան մը ընթացքին, կ'ողջունուէր միայն 3 անգամ...). ոստիկանութիւնը միջամտած է՝ կարգ ու կանոնը վերահաստատելու համար: Սրահին կէսէն աւելին բարձրաձայն կը հեկեկայ: Օրուան հերոսը, Պեթհովէն, բեմին վրայ էր՝ ունկնդրութեան ամբողջ ժամանակամիջոցին, կռնակը տուած ժողովուրդին եւ աչալուրջ հետեւած ղեկավարին. եւ սակայն, ան չէր լսած ոչ իսկ մէկ նոթ իր այդ սքանչելի գլուխ–գործոցէն, տրուած ըլլալով, որ ամբողջովին խուլ էր ան արդէն, 14 տարիներէ ի վեր և «Ցրդ համանուագ»ը — ուրիշ գլուխ–գործոցներու կողքին — հեղինակած էր բացարձակապէս առանց ականջին օգնութեան: Երբ ունկնդիրները ալեկոծեցան սրահին մէջ, երգչախումբի երգիչներէն մէկը օգնեց իրեն, որ դառնայ դէպի սրահը: Պեթհովէն տեսնելով սրահի խելայեղ ու անզուսպելի բռնկումը, յուզումէն կը նուաղի բեմին վրայ: Զայն կը փոխադրեն բարեկամի մը տունը, ուր կը մնայ թմրած, գրեթէ ուշակորոյս վիճակի մէջ, տակաւին փառատօնի հագուստները վրան, առանց ուտելու, խըմելու, ամբողջ գիշերը, մինչեւ յաջորդ առաւօտ:

Թերեւս կարելի է ըսել, որ առաջին անգամ էր, որ արեւմտեան աշխարհին մէջ հաւաքականութիւն մը կը նախըզգար — Ցրդին ընդմէջէն — իր իսկ հոգեկան եւ մարդկային աշխարհին անծայրածիր կարելիութիւնները:

***

Սակայն, Պեթհովէն երաժշտական աշխարհ չմտաւ «Ցրդ համանուագ»ով: Ե-

digitised by A.R.A.R.@

թէ կարելի է մրմնջել «Թ. Համանուագ»ի բոլոր թեմաները, եթէ կարելի է ճամբան սուլելով քալել 9րդ համանուագի «Ուրախութեան տաղ»ի (Ode à la Joie) հանրածանօթ թեման (4րդ շարժ), անկարելիութեան կը մատնուինք իր մահուան նախօրեակին (1826) հեղինակած 14րդ քառեակի թեմաներէն որեւէ մէկը երգելու։ Առաջին համանուագի պարագային, մեղեդիները կամ ընդլայնուելիք թեմաները յօրդառատ են, իրենք իրենց համար նշանակալից եւ ինքնարար։ Երկրորդ պարագային, 9րդ նշանաւոր մօթիւը, ըլլալով հանդերձ թեմա մը, արդէն խորհրդանշան է, ուրախութեան leit-motiveն է եւ բարդ կառոյցի մը բաղկերակը, առանց որուն կառոյց գոյութիւն չունի. իսկ թեման առանձին առնուած, առանց իրեն ընկերացող փոլիփոնիին, երբեք չի կրնար հանդիսանալ ուրախութեան կամ ազատութեան երաժշտութեան խորհուրդը կամ հիւլէն, բջիջը։ Գալով երրորդ պարագային, եւ ընդհանրապէս Պեթհովէնի կեանքի վերջաւորութեան լուսարձակուող լարային 5 քառեակներուն՝ մեղեդի, հարմոնի, թէմպր, կշռոյթ, զարգացում եւ տեւողութիւն կապուած են իրարու անքակտելի կապերով. մէկը միւսով է, որ գոյութիւն կը ստանայ եւ երաժշտական մտքի բոլոր բջիջներն ու տարրերը իրարմով են պայմանաւորուած։

***

Ծնած 1770 Դեկտեմբեր 16ին կամ 17ին, Գերմանիոյ Պոնն քաղաքին մէջ, ան իր երաժշտական նախնական կրթութիւնը ստացած է իր ծննդավայրին մէջ։ Իր առաջին ուսուցիչը եղած է իր հայրը, որ կը ներկայանայ իբրեւ գինեմոլ մը՝ Ֆլաման ծագումով. ան տաժանակիր աշխատանքի կը մղէր տղան՝ դաշնակին առաջ գրկելով. «Ֆիտէլիօ»յի հեղինակը երաժշտութեան ձեռնարկած է այնպիսի՝ պայմաններու տակ, ուր որեւէ մէկը, Պեթհովէնէ զատ, վերջնականապէս պիտի խրտչած ըլլար երաժշտութենէ։

Պոնն եղած միջոցին, Պեթհովէն ունեցաւ 3 յաջորդական ուսուցիչներ, որոնցմէ VAN DER EDEN, պալատի երգեհոնահարը, անմիջապէս ըմբռնեց անոր բացառիկ տաղանդը եւ ո՛չ միայն ձրի դասեր սկսաւ տալ անոր, այլեւ՝ աշխատեցաւ սիրցնել տալ երաժշտութիւնը։

1787ին, Պեթհովէն կը կատարէ ճամբորդութիւն մը՝ դէպի Վիեննա, հանդիպելու համար այդ շրջանի երաժշտութեան աշխարհին տիրող տիտաններէն Մոցարդին, որուն հանդէպ ան կը տածէր արդէն խոր յարգանք։ Այդ ժամանակաշրջանին IMPROVISATIONի արուեստը՝ տրուած թեմայի մը վրայ, առանցքը կը կազմէր կատարողական եւ ստեղծագործական նուաճումներուն. Մոցարդ Պեթհովէնի կը հրամցնէ թեմա մը եւ ուղղակի կ՚ապշի այս վերջինին այդ թեմային վրայ կատարած Improvisationը լսելով դաշնամուրի վրայ, եւ այդ՝ առանց որեւէ նախապատրաստութեան. «Ուշադրութիւն ըրէք այս պատանիին, կը յայտարարէ Մոցարդ, օր մը պիտի խօսեցնէ իր մասին»։

1792ին, Պեթհովէն Պոնն քաղաքը կը ձգէ վերջնականապէս, հաստատուելու համար Վիեննա, ուր իբրեւ ուսուցիչ կ՚ունենայ ուրիշ տիտան մը՝ Ժ. Հայտն (1792–1794). միաժամանակ քոնթրփուանի դասեր կ՚առնէ այդ ժամանակաշրջանի թէական երաժշտութեան համաշխարհային հռչակ վայելող ALBRECHTBERGERէն եւ վերջապէս երգարուեստի եւ տրամաթիկ երաժշտութեան ուսումնասիրութեան կը ձեռնարկէ SALIERIի հետ, որ ճանչցուած էր իբրեւ Մոցարդի մրցակիցը՝ օփերայի կալուածին մէջ։

Այս բոլորը կը փաստեն, որ ան ունեցաւ երաժշտական շատ հիմնաւոր կրթութիւն մը։ Պեթհովէն ճանչցուած վիրթիւօզ դաշնակահար էր արդէն 1800 թուականին, երբ Վիեննայի հանրութեան կը ներկայանայ յաջողապէս մը, որ մեծ

մասամբ բաղկացած էր իր հեղինակութիւններէն՝ Մոցարդի եւ Հայտնի կողքին։

Մինչեւ 1801 կամ 1802, Պեթհովէնի հեղինակութիւնները կարելի է նկատել համադրումը, ամփոփումը Մոցարդի եւ Հայտնի դասական ոճին եւ նշանակալից են իրենց կուռ կառուցուածքով թէ՛ կերպարային (formel), թէ կոնթրափունթիկ ձեւերու մէջ։ Guillaume de LENZ իր «Beethoven et ses 3 manières» (1855) գրքին մէջ, Պեթհովէնի այս շրջանի երաժշտական հունձքը սահմանած է «Ա. շրջանի» կամ «Ա. ոճի» ստեղծագործութիւններ։ Այս շրջանի յօրինումներն են, ի միջի այլոց.

— Դաշնամուրի առաջին 15 սոնատները, գործ 2էն մինչեւ գործ 28 (որոնց կարգին նշանաւոր «փաթեթիք» սոնատը).

— Ա. եւ Բ. համանուագները, գործ 21 եւ գործ 36.

— Գործ 20 եօթնեակը (Septuor opus 20).

— Դաշնամուրի Ա. եւ Բ. կոնչերթոները, գործ 15 եւ գործ 19.

— Առաջին 4 լարային երեակները.

— Ջութակ-դաշնամուր առաջին 4 սոնատները.

— Առաջին 6 լարային քառեակները, ամփոփուած «գործ 18» պիտակին տակ։

Պեթհովէն իր երաժշտական սքոլաստիք գիտութիւնը ամփոփելով իր մեծ ուսուցիչներու շունչին տակ, անոնց շնորհած է, արդէն իսկ առաջին այս շըրջանէն, նշանակալից առանձնայատկութիւններ։ Եթէ Հայտն 100է աւելի համանուագներ գրեց եւ Մոցարդ 40է աւելի, Պեթհովէն միայն 9 հատ յօրինեց։ Պեթհովէնի համար ընդհանուր յատակագիծը լոկ յատակագծային միջոց է՝ վերարծարծելու համար իր մտքերը, հետզհետէ զանոնք աւելի խորացնելով. որքան ալ «Ա. համանուագ»ը Հայտն յիշեցնէ իր ընդհանուրին մէջ, մանրամասնութեանց մէջ անիկա արդէն Պեթհովէն է։ Պեթհովէն իւրայատուկ կերպով նըւագախմբած է զայն, լայն տեղ տալով փողաւոր գործիքներուն. այս ձեւով արտայայտչականութեան նոր տարածութիւն շնորհելով։ Իր առաջին կատարումին, (1800 Թուին) քննադատները «զինուորական երաժշտութիւն» անուանեցին զայն։ Յրդ շարժի աւանդական «menuet»ն — ընդհանրապէս հաճելի եւ ազնուապետական — Պեթհովէն կը փոխարինէ արագաշարժ եւ ուժեղ, գրեթէ մարտնչող «Scherzo»ով. ան արդէն կը պարտադրէ, որ զայն ունկնդրեն իբրեւ Պեթհովէնի նորարարութիւն։ Անկէ զատ, զարգացումը կը դրուի նոր յղացքի վրայ. թեմաները կը կարճնան եւ իրենց հաճելի եւ հաճոյալուր յատկանիշներէն կ'անցնին ստեղծագործումի — առակ — բջիջի յատկանիշին։ Շատ կարեւոր է մա՛նաւանդ արդէն իսկ Ա. համանուագէն նկատել նոր ոգիի մը ներկայութիւնը, որ հետզհետէ պիտի դառնայ ներգործական մըտայնութեան մը առանցքը։

Սակայն, այս առաջին շրջանի վաւերական անհատականութիւնը կ'արտացոլայ իր դաշնամուրի սոնատներուն մէջ. սոնատը Հայտնի մօտ երաժշտական ազնուապետական խաղ մը եղած է, թէեւ շատ նրբաճաշակ եւ կուռ երկրաչափութեամբ եղած. պահելով հանդերձ նոյն յատակագիծը, Պեթհովէն կը խզէ իր կապերը վերջնականապէս այս «esprit de divertissement»ի կրաւորապաշտութենէն. խաղը կը կերպարանափոխուի գոտեմարտութեան. եթէ կ'ուզէք, զաւեշտութենէն կ'անցնինք տրամին։

Սոնատներու ոգին կը վերածուի լեզուի իր առաջին 6 քառեակներու մէջ (գործ 18). այդ լեզուն արդէն իսկ իրենն է. բախումներու արուեստը եւ խորունկ մելամաղձոտութիւններու երաժշտաւորումը կը յայտնաբերուի անաչառօրէն խիստ այս քառեակներու կերպարին մէջ. այս 6 քառեակներէն չորրորդն է, որ ժողովրդականութիւն շահած է ընդհանրապէս. արդ, այս այն քառեակն է, որ տակաւին մօտէն կը հետեւի Հայտնի հիմնած աւանդութեանց՝ երկար կրկնութիւններ ամբողջական մասերու, ուղեկցական մեղեդի (mélodie accom-

digitised by A.R.A.R.@

pagnée), *առաջին ջութակի դիտումնաւոր կերպով ստացած գլխաւորութիւնը եւ միւս գործիքներու զուգորդութիւնը։ Պեթհովէն վեցերորդ քառեակին մէջ է մա՛նաւանդ՝ որ վերջնականապէս հրաժեշտ կ'առնէ այս բոլորէն. հոս մեղեդին թաքնուած է քառեակի խորունկ ցանցերուն մէջ, քառեակի չորս գործիքները առած իրբեւ միահամուռ երաժշտական գործիք. թաւջութակը կամ պասը կը դառնայ ինքնավար, դիմագիծ ունեցող գործիք եւ ոչ թէ հետեւող, պաշտօնային ընկերակցող, կիսախաւար ձայնակից։ Եւ վերջապէս այն՝ որ աւելի ուշ պիտի կոչուէր* «La variation amplificatrice», *կարելի է սաղմնային ձեւին տակ նկատել հոս, Երրորդ քառեակին մէջ։ Եւ վերջապէս, գործ* 10, *թիւ* 3 *դաշնակի սոնատի առաջին շարժը կը սկսի ներածականով մը, կարճ բայց վերակոչող ու միտքը մտրակող. առաջին շարժի թեման առինքնող է, բարախուռն, կայտառ եւ հաճակրելի, կարծէք ուրախութեան փնտռտուքին ձեռնարկուած ըլլայ արդէն, մինչդեռ, ներհուն մտքի մը բոլոր տուեալները կը գտնուին երկրորդ շարժին մէջ, որ ներաշխարհը մտածումի ենթարկելու յաջող փորձ մըն է։*

*
**

1800*ին, Վիեննայի մէջ իր ունեցած առաջին մեծ յաջողութենէն ետք, Պեթհովէնի ապագան կը թուի ըլլալ շողշողափայլ. բայց* 19*րդ դարու դուռը կը բանայ իր առջեւ անհատնում տառապանքներու այնպիսի յորձանք մը, որմէ միայն քառորդ դար ետք, պիտի ձերբազատուէր՝ իր մահկանացուն կնքելով։ Դեռ* 1796*ին, եւ ապա* 1798*ին ու* 1800*ին, Պեթհովէն ունեցած էր սուկումի վայրկեաններ. ան զգացած էր իր լսողական գործարանին հետզհետէ վատթարանալը. ականջները կը սուլէին անընդհատ եւ հետզհետէ աւելի ուժգին. ատկէ զատ, ան փորի անտանելի ցաւեր կ'ունենար. երկար տարիներ այս մասին չարտայայտուեցաւ ոչ մէկուն. չափազանց ազնիւ բարոյականի տէր՝ չէր ուզեր իր ընկերները վշտացնել այս կարգի լուրերով. ան իրե՛ն կը պահէր այդ սոսկալի գաղտնիքը։ Բայց* 1801*ին, ա՛լ չի կրնար լռել. յուսահատութեան եւ վախի իր այս գալարումներուն մէջ իր մինակութիւնը կը դառնայ անտանելի. ան իր գաղտնիքը կը խոստովանի բժիշկ* WEGELER*ին, որ պիտի ըլլար ամենազնիւը իր բարեկամներուն եւ հոգեւոր հովիւ* AMENDA*ին։ Այս վերջինին կը գրէ.*

«...Որքա՜ն յաճախ քու ներկայութիւնդ կը փափաքիմ իմ մօտ. քանզի քու Պեթհովէնդ դժբախտ է. քա՛ջ գիտցիր, որ իմ ամենաազնուական եւ ամենապիտանի մէկ անդամս՝ լսողական գործարանը վտանգուած է. բաւական ժամանակէ մը ի վեր զգացած եմ այս եւ սակայն քեզմէ գաղտնի պահած. բայց տես հետզհետէ կը ծանրանայ տկարութիւնս. կըրնա՞մ արդեօք բժշկուիլ. բնականաբար կը յուսամ, սակայն շատ չնչին է այս յոյսս. երեւակայէ, թէ որքան տխուր պիտի ապրիմ ասկէ ետք, պիտի խուսափիմ բոլորէն, պիտի զրկուիմ այն բոլորէն, զորս կը սիրեմ, եւ այս՝ այս ցաւագար եւ ինքնագոհ աշխարհին մէջ. ի՜նչ դժբախտ համակերպումի մէջ պիտի առանձնանամ... ինչպէ՞ս պիտի կարենամ դիմագրաւել այսքան դժբախտութիւն»։

*Իսկ* WEGELER*ին կը գրէր.*

«...Երկու տարիէ ի վեր կը խուսափիմ ընկերութենէ, որովհետեւ չեմ կրնար զրուցել մարդոց հետ. խլացած եմ։ Նախընտրելի պիտի չըլլա՞ր ուրիշ ասպարէզ մը ունենալ... Թատրոնի մէջ ստիպուած եմ նուագախումբին եւ դերասաններուն ուղղակի կողքին ըլլալ. գործիքներու եւ երգիչներու զիլ ձայները չեմ լսեր, եթէ քիչ մը հեռանամ, երբ հեռու ցած ձայնով խօսին՝ չեմ հասկնար, իսկ չեմ կրնար հանդուրժել, որ դիմս աղաղակեն... պիտի ջանամ դիմագրաւել այս դառն ճակատագիրը. համակերպի՛մ, ի՜նչ դժբախտ ապաստանարան, եւ սակայն միակն է, որ ստիպուած եմ որդեգրել»։ («Սոնադ փաթեթիք»ը *այս հոգեվիճակին արտացոլացումն է՝ իր*

digitised by A.R.A.R.@

յոյսի ու յուսահատութեան անվերջ բախումներով)։

Միւս կողմէ, իր հսկայածաւալ ու կրքոտ բնութեան մէջ՝ ան պահած էր մաքրամաքուր հոգի մը. բարոյալից սիրոյ մասին իր ըմբռնումները անխախտ էին. կ'ըսուի նոյնիսկ, որ ան չէր ներած Մոցարդի, որ «Տոն Ժուան»ի նիւթին վըրայ օփերա գրած ըլլալով խեղաթիւրած ըլլայ իր տաղանդը։ SCHINDLER կը վըկայէ, որ ան կոյսի մը մաքրութեամբ կ'ապրէր եւ որեւէ տկարութիւն չէր հանդուրժեր իր կեանքէն ներս։ Ահա այս տեսակ մարդ մը զոհը կը դառնար սիրոյ։ 1801ին, ան խենթի պէս կը սիրահարի Ճիուլիէթթա Կուիչիըարտիի, որուն կը ձօնէ իր համբաւաւոր «Clair de lune» սոնադը, բայց որուն երբեք չի կրնար տիրանալ. եւ երբ Ճիուլիէթթայի ամուսնութեան լուրը կ'առնէ, արդէն իսկ անձնատուր հոգեկան ա՛յն տըւայտանքներուն ու ցաւերուն, որոնք խլութենէն կը բխէին, Պեթհովէն կը յանձնուի յուսահատութեան ա՛յն աստիճան ահարկու նոպայի մը, ուրկէ ուրիշ մը պիտի չկարենար ողջ դուրս գալ։ Այս շրջանին (1802) է , որ ան կը գրէ իր HEILIGENSTADTի կտակը(1), ուղղըւած՝ իր եղբայրներուն եւ որուն համար կը թելադրէր «կարդալ եւ իրագործել մահէս ետք». դժուար չէ կռահել սոյն կտակին պարունակութիւնը։ Պեթհովէն վերջնականապէս անձնատուր եղած է իր եղերական առանձնութեան ու դուրսի աշխարհը առյաւէտ ջնջած իր հոգիէն։ Ահա այս մենակեացութիւնն է, կեանքի սիրահար մարդու մը այս առանձնութիւնը (եւ ո՛չ այնքան իր ցաւերը կամ խլութիւնը), որուն ընդերքին մէջ ան որոճաց, որոնեց, խոկաց ուղիղ քառորդ դար բաղձալով անյոյս, բայց եւ այնպէս այնքան պաշտած ու փայփայած ազատութիւնը եւ մա՛նաւանդ ճշմարիտ ուրախութիւնը։ Ի՛նչ յատկանշական են այս երկար կտակի վերջին երկու բառերը, երբ այլեւս մտովին հրաժեշտ առած է աշխարհէն՝ «Ուրա՛խ եղէք». ան՝ որ իր կամքով պիտի յայտնագործէր ի՛ր ուրախութիւնը ի՛ր մինակութեան խաւարին իբրեւ անմար ճրագ, ա՛ն միայն գիտէր, իրաւունք ունէր գիտնալու ուրախութեան բո՛ւն արժէքը, տարողութիւնը. բայց մարդիկ կ'անգիտանան իրենց ունեցածին արժէքը. շատ յաճախ զայն բնականաբար չունեցողին կամքն ու կորովն են, որ կը կերպարանաւորեն ու կը կենսագործեն իրենց զլացուածը՝ բարոյական կամ իմացական անձեռնմխելի գանձի մը պատւանդանին հասցնելով զայն։ Փա՛ստ. «9րդ հանգրուան»ը։

Ահա այս նոր միջոցին մէջ է, որ կը դարբնուի իր նոր ոճը. ան Պեթհովէնի երկրորդ շրջանի ոճն է՝ 1802էն 1814ի վրայ երկարաձգուող։

Այս շրջանը կը բացուի իր երրորդ համանուագով՝ «Eroica». ան կը պարունակէ (Բ. շարժ) հռչակաւոր «Մահւան քայլերգը», որով՝ Պեթհովէն կը տօնէ կարծէք եղերական քայլերգով մը իր աշխարհէն կորուած ըլլալու, աշխարհին համար մեռած ըլլալու հոգեհանգիստը։ Այս ոճին կը պատկանին նաեւ յաջորդող 5 համանուագները. մինչեւ 8րդը.

— 11 դաշնակի սոնատներ, գործ 31էն 81։
— Դաշնակի մնացեալ քոնչերթոները (թիւ 3, 4, 5)։
— Ջութակի քոնչերթոն, գործ 61։
— Ջութակ-դաշնակի մնացեալ 6 սոնատները։
— 5րդ (եւ վերջին) լարային երրեակը, գործ 97։
— Թաւջութակ-դաշնակ, գործ 102ի 2 սոնատները։
— Ֆիտէլիօ օփերան, գործ 138։

Եւ 5 նոր լարային քառեակներ, 1805էն 1810ի միջեւ գրուած՝

գործ 59ի 3 (քառեակները (թիւ 7, 8, 9),

(1) Վիեննայի արուարձաններէն, ուր ան կ'ապաստանէր առանձին՝ իբրեւ ինքնադարմանումի թաքստոց:

digitised by A.R.A.R.@

գործ 74 (թիւ 10) քառեակը,
գործ 95 (թիւ 11) քառեակը։

Եթէ առաջին շրջանի երաժշտութիւնը կարելի ըլլայ անուանել պեթհովէնեան ոճի դասականութեան շրջան, այս մէկը պէտք է կոչել պեթհովէնեան յատուկ վիպապաշտ ոճի շրջան։ Ան կը ջանայ նոյնանալ իր երաժշտութեան հետ. իր նոր կեանքէն ցոլացած բոլոր խոհերը կը ձգտին վերածուիլ պեթհովէնեան երաժըշտական բջիջներու։ Պէտք է, որ մարդ-Պեթհովէնի ֆիզիքական անկարողութիւնը կերպարանափոխեալ կերպով փայլատակէ ստեղծագործ, կրկնապրող Պեթհովէնի մը մէջ՝ վերայիշեալ երկերու բովով։ Պեթհովէն ա՛յն առաջին ուժեղ կամքն է, որ իր անհատական երաժշտութեամբ ճամբայ կը բանայ 19րդ դարու վիպապաշտներուն։ Իր պայքարողի, յաղթանակօրէն հնչող ու լոյս որոնող հոգիին մէջ՝ ան կը հասնի մտածումի խորունկ միութեան եւ հեղհեղէ երաժշտական պայմանադրական կերպարները եւ տարազները, զորս արդէն խախտած էր, կը ջախջախէ եւ կը ստեղծէ ազատ երաժըշտութիւն մը, ազատագրուած՝ երաժշտական մտածողութենէ ներս ընդունուած կաղապարներէն. ան իր ներքին աշխարհի ձեւաւորումովը միայն կու տայ յօրինուած կտորին նոր կերպար, նոր միջավայր, նոր միջոց, նոր մթնոլորտ։ Օրինակ, կարելի չէ բաղդատութեան եզր մը գտնել Մոցարդի ջութակի 5 քոնչերթօներէն որեւէ մէկուն երկրորդ շարժի եւ Պեթհովէնի միայնակ ջութակի քոնչերթօյին նոյն երկրորդ շարժին միջեւ։ Այս վերջինը կը կրէ անձնականի խորհուրդը. մեղեդի գոյութիւն չունի, այլ՝ անծայրածիր ծիրանի գօտիներ կան իրարու յաջորդող եւ ջութակի ու նուագախումբի կապը ընտանիքի մը անդամներուն սերտ կապն է. եթէ ջութակը կ'աղօթէ, նուագախումբի անդամները այդ աղօթքին անհաղորդ ներկաները չեն կամ հեռաւոր հետաքրքիրներու խումբը, այլ՝ ծունկի եկած հետեւորդները ջութակի հոգիի հեւքին։

Նայինք նշանաւոր «Appassionata»ին (գործ 57). առաջին շարժին (Allegro) բջիջը միածիր եւ միամակարդակ թեմա մը չէ. անիկա յայտնութիւն մըն է, պայթուցիկ ուժ մը, կեդրոնաձիգ ուժականութիւն մը, հիմնական ձգողական կեդրոն մը, որուն առանցքը կը տեղափոխուի յարաճուն կերպով, կը ստանայ բազմազան զուգաւորումներ բազմազան մասնիկային տարբաղադրութիւններով, տալով այդ «Allegro»ին կենսական, օրգանական միութիւն մը. միաժամանակ բիւր հորիզոններ ունեցող ձայնի անջրպետ մը կամ երանգաւորուած կարելիութիւններ ունեցող քալէյտոսքոփ մը։ Նկատենք ուժգնութեան տուած կարեւորութիւնը. Պախ երբեք «pp» կամ «ff» չէ նշանակած իր գործերուն մէջ. մինչդեռ հոս գրեթէ իւրաքանչիւր նօթ իր առանձնայատուկ ուժական դիմագիծը ունի եւ «piano» ու «forte» հակադրութիւնները կենսատու դերեր ստանձնած են։ Որքան ալ կշռոյթի անհամաչափութեան խարկանքը ունենանք, պիտի տեսնենք — կտորին մտերմութեան թափանցելէ ետք — որ այդ կշռոյթը մէ՛կ իրականութեան մը բազմերանգ տարբերակներն են, անհամար բջիջները, որով կենդանի մարմին մը իր գոյութիւնը կը ստանայ։

*
**

Պեթհովէն իր առանձնութեան մէջ լռութիւնը կը կենսագործէ երաժշտական ձայներով։ Ահիկա ի յայտ կու գայ գործ 102ի երկրորդ թաւջութակ-դաշնակ սոնաթին մէջ։ Այս սոնաթը կարելի է նկատել երրորդ ոճը կանխող՝ իր ֆիւկային մտածողութեան, պահելով երկու գործիքներու, միախոհ ու այլայլան, օրգանական համագործակցութիւնը։

Այս երկրորդ շրջանի քառեակներուն մէջ յաճախ կարելի է հանդիպիլ այնպիսի յատակ եւ թանձրացեալ ներհայեցողական հանճարի մը, որպիսին կը յայտնաբերուի երրորդ ոճով գրուած քառեակներու մէջ. անոնք խտացեալ մտածողի մը, հաւատացեալ պայքարողի մը,

digitised by A.R.A.R.@

ազատութեան տենչացողի մը խոկական գործերն են, մանրանկար–տիեզերք մը (microcosme) պեթհովէնեան առեղծուածին։ Գործ 59 թիւ 1 քառեակին մէջ նախադրեալ թեման չի կրկնուիր եղածին պէս, այլ՝ կը վերայայտնուի խորապէս կերպարանափոխուած․ այդ թեման, որ մեղեդիի մը նման կը յայտնուի նախ, կը տարբաղադրուի եւ կը բեղմնաւորէ լարային 4 գործիքներէն իւրաքանչիւրը, որոնց միջեւ կը ստեղծէ թէ՛ կրքոտ եւ թէ՛ փոլիֆոնիկ անքակտելի ցանց մը։ Առանց այս յայտնագործումին, Սթրավինսքիի մը ստիպուած պիտի ըլլար Պեթհովէնի գիւտերը ինքը կատարել, ըլլալու համար ա՛յն, ինչ որ է՛․ Նոյն քառեակի Allegro vivaceի մէջ (Բ․ շարժ․) իւրաքանչիւր գործիքին ձայնամակարդակը (registre) եւ թեմպը կը գծեն ունկընդրութեան տարբեր յատակագծեր․ ունկընդրողը կը «տեսնէ» ձայնական ծիրին ամբողջ խորութիւնը, ուր կը շրջագայի երաժշտական միտքը։ Ուրեմն, կարելի է երեւակայել ա՛յն զարգացումը, բազմամակարդակ ա՛յն ծաւալումը, որ կը հետեւի այս կարգաւորումին։ Թրեմոլօ թէ Փիցցիքաթօ այլեւս բաղկերակի զարկեր են կամ սրտի տրոփներ եւ ոչ թէ «ընկերակցութիւն» բառին պարզ հոմանիշները։

Նոյն գործ 59ի թիւ 3 քառեակը կ'ընդգրկէ իւրայատուկ յատակագիծ մը, միաձուլելով դասական աւանդութենէ եկող յղացքներ վիպապաշտ արտայայտչականութիւն պահանջող մտածումին հետ։

Այսպէս, սկզբնական Allegroն, որ դասական սոնատի կերպարի վիթխարի օրինակն է, իր զարգացումին մէջ կ'օգտագործէ երկու հիմնական եւ իրար հակադրող թեմաներու կողքին՝ բազմաթիւ նոր ընթերցներ։ Այս Allegroին կը նախորդէ դանդաղ մաս մը (փոխանակ յաջորդելու) եւ կապ չունի Allegroին հետ։ Անիկա կը պարունակէ խիզախ, յանդուգն modulationներ՝ իր ժամանակաշրջանին նկատմամբ։ 3րդ եւ 4րդ շարժերէն ետք, 5րդը ո՛չ ալեկրօ մըն է ոչ ալ րոնտօ մը, բայց հսկայական ֆիւկ մը, առաջինը, որ Պեթհովէն կը մտցնէ իր քառեակներուն մէջ եւ որ արդէն քառեակի մը գործիքական կարելիութիւններէն վեր կը թուի ըլլալ։

⁂

Պեթհովէնի կարողականութեան այս մակարդակին կարելի է գետեղել իր «9րդ համանուագ»ը եւ «2րդ պատարագ»ը՝ MISSA SOLEMNIS: Հեղինակ մը երբեք այնքան թիւով սեւագրութիւն, յուշեր, նոթագրութիւններ, նախագծեր, օգտագործումի տուող թեմաներու հսկայական կոյտեր չէ ձգած իր ետին, որքան Պեթհովէն։ Օրինակ մը տալու համար իր մշտանորոգ որոնող հոգիին ու մտքին, ահա ամբողջական պատկերը «9րդ համանուագ»ի երկունքին․

— Դեռ 1795ին, ան գտած է այն թեման, որ — շատ մօտ 9րդի հանրածանօթ թեմային — աւելի ուշ 1808ին, պիտի օգտագործէր իր գործ 80ի մէջ (Fantaisie pour piano, orchestre et chœurs) ինչպէս նաեւ գործ թիւ 3 Liedին մէջ (1810)․ 1804ին, իր մէկ տետրակին մէջ կարելի է գտնել յար եւ նման ուրիշ թեմա մը, որ երբեք չէ օգտագործած․ եւ վերջապէս, 1822 թուականը կրող տետրակը կը կրէ (այս անգամ Rè majeur) Ուրախութեան տաղի թեման։ Միւս կողմէ, երգչախումբով աւարտող յօրինումի մը գաղափարը կ'որոճայ 1818ին, իբրեւ 10րդ համանուագի մը հաւանական վերջաբան։ 1792ին, ծրագրած էր Շիլլէրի «Ուրախութեան տաղ» (Ode à la Joie) քերթուածը երաժշտաւորել․ 1807ին, կը մտածէ նուագախումբ եւ երգչախումբ միացնել համանուագի մը մէջ․ 1812ին, 8րդէն անմիջապէս ետք, կը մտադրէ յօրինել 9րդը․ 1817ին, նախաշաւիղը կը յղանայ 9րդի առաջին շարժին եւ կը լքէ․ 1818ին, կը յատակագծէ Շիլլէրի տաղին երաժշտութիւնը, սակայն անկախ 9րդէն, կը մտածէ զայն միացնել «10րդ համանը-

digitised by A.R.A.R.@

ւագ»ի մը· 1822ին, կ'օգտագործէ հանրածանօթ թեման՝ Շիլլէրի տաղին համար· 1822ի վերջաւորութեան, Պեթհովէն կ'որոշէ Շիլլէրի տաղի երաժշտութիւնը միացնել «10րդ համանուագ»ի մը, զոր կը ծրագրէ աւարտել երգչախումբով· 1822–23 ան հեղինակած է արդէն 9րդի առաջին 3 շարժերը եւ կը մտածէ զայն վերջացնել զուտ գործիքային բաժինով մը։ Վերջապէս Հոկտեմբեր 1823էն մինչեւ Փետրուար 1824, Շիլլէրի տաղը 4րդ մասը կը կազմէ, իր վերջնական ձեւին տակ, «9րդ համանուագ»ին։ Երկարատեւ երկունքի մը վերիվայրումնե՞րը, թէ ծովածաւալ հանճարի մը ալեկոծումները· թերեւս երկուքն ալ։

Իր հոգիի աղաղակներուն ի լուր եւ մարդկային ձայնին արդէն երկար տարիներէ ի վեր անհաղորդ՝ Պեթհովէն այս վերջինը «լսած» է իբրեւ գործիքներ, թաքախուն եւ արթուն, յուռաւոր ու ներգործող գործիքներ· մա'նաւանդ՝ երբ առնենք, իրենց «մարդկայնութեամբ» կը դիմագրաւեն նուագախումբի գործիքներու ամբոխը։

Նոյնը Missa Solemnisի մէջ, ուր խորունկ հաւատքի մը բոլոր տուեալները կարելի է գտնել զուտ երաժշտականօրէն մտածող, գործող, ստեղծագործող ուղեղի մը կողքին։ Gloriaի ձայն-գործիք համադրումը երկու տարբերու միաձուլման մեծ գպրոց կը հանդիսանայ։ Նոյն Gloriaի վերջաւորութեան, ֆիւկի զարգացումը տարերային մեծղիութիւն կը ստանայ։ Agnus Dei (miserere) հաւատացեալ հոգիի մը ճախրանքն է մարդկային ցաւերու վրայէն եւ տիեզերական համերաշխութեան մը պատգամը (երգչախմբային փոխասացութիւնը մեներգողներու տարընթէր)։ Այս Agnus Deiի ֆիւկին նախորդող մասը կը նախատեսէ Վերտիի Requiemի Dies Iraeն:

***

Պեթհովէնի հանճարի գագաթումը կը նկատուին 1822–1826 ժամանակամիջոցին ստեղծագործած իր վերջին 5 քառեակները, երրորդ ոճի արտասովոր հմայքները։ Ասոնք չեն պատկանիր որեւէ դպրոցի, շարժերը ո'չ մէկ պայմանադրութեան չեն հետեւիր, այլ՝ կատարեալ ազատութեամբ մէկզմէկու մէջ կ'ընդելուզուին, ընծայելով հարմոնիի եւ քոնթրափունկթիի անհամեմատ կարելիութիւններ։ Պեթհովէն գերազանցած է ինքզինք եւ մեզի կը ներկայանայ իբրեւ արդի ստեղծագործող մը։ Հո'ն է, որ ֆիւկը եւ «La grande variation»ը իրենց գագաթնակէտին հասած են՝ զուտ ստեղծագործական գործիքներ ըլլալէ դադրելով եւ ըլլալով մտածումի կենսաւորման մեքենաներ· երբեք երաժշտական խօսք մը կարելի չէ եղած ասկէ աւելի բարձր պատուանդանով մը իրագործել· կերպարը կ'անհետի՝ մնալով զուտ միտքը· այս միտքը ինքնին յուշելով որեւէ կապ դասական ըմբռնումով թեմաներու հետ, մենք կը գտնուինք բիւրեղացած երաժշտական իմացականութեան մը առջեւ, ըստ որում Պեթհովէն անցած է մարդու իր ցաւերու եւ ուրախութիւններու անջրպետները եւ խառնած է իբրեւ զուտ միտք։ Վերցնենք օրինակ մը միայն՝ 14րդ քառեակը, գործ 131· անիկա կը բաղկանայ 7 մասերէ՝ «հաւաքուած ասկէ-անկէ եւ միատեղուած», կը գրէ Պեթհովէն կատակելով, իր հրատարակիչին ուղղուած նամակի մը մէջ· հոն գործածուած կերպարներու այլազանութիւնը քիչ անգամ պատմութեան մէջ հասած է մտածումի այդքան հարազատ միութեան, որովհետեւ ո'չ միայն օրգանական խորունկ շղթաներ այդ 7 շարժերը իրարու կը կապեն առանց ընդմիջումի, այլեւ՝ հաղորդակցութիւն եւ մագնիսութիւն կը ստեղծեն իրարու մէջ։ Ա· շարժը շատ ազատ ոճով գրուած ֆիւկ մըն է՝ զուլալ ոգի մը ցոլացնող· 4րդ մասը, որ այս քառեակի կեդրոնական առանցքը կը կազմէ, մեծղի համադրողական մտքով մը բազմածիծան ձեւափոխութիւններու կ'ենթարկէ սկզբնական երաժշտական միտք մը, իւրաքանչիւր կերպարափոխում միաժամանակ ըլլալով յարաճուն վերարծարծումը variationի սկզբունքին։

digitised by A.R.A.R.@

Պեթհովէն ուզած է սոյն քառեակին կենսականութեան իմաստը տալ այս եւ վերջին շարժին ընդմէջէն. եթէ կեանքը կրկնութիւններու շարան է, երբե՛ք այդ կրկնութիւնները յար եւ նման չեն, այլ՝ նոյն կեանքին, նոյնիմաստ բարձրացումի մը զանազան կարելիութիւններու յարափոփոխ եւ բազմածիր շարժունութիւնը. մի՞թէ ծովուն մէկ ալիքը միւսին կը նմանի. արդեօք ծառին կանաչը երանգով մը չի՞ տարբերիր դրացի ծառի կանաչէն: Մարդու խոկումներն ալ բազմատեսակ են՝ մէկ նիւթի շուրջ շրջագայող կամ բոլորուած: Պեթհովէն, ճշմարիտ մտածողութեան պատմութիւն մը ընդգրկելով՝ հեռու եւ վեր կը մնայ պայմանադրական դոյզն իսկ փորմալիզէ եւ ոչ մէկ վայրկեան հոն չենք հանդիպիր մտքի պարապը նօթերով գոցելու երգահանային ճարպիկութեանց. ամէն ինչ հոն պայմանական է. բիւրեղ եւ աննիւթ աշխարհն է այս Պեթհովէնի, ուր փառութեան եւ չքացումի ենթարկուելիք ո՛չ մէկ տարր գոյութիւն ունի. հոն ամէն ինչ ջիղ է, բջիջ, բաղկերակ, շրջագայող միտք, արոփող սիրտ: Ահա՛ ուրեմն ոգին մարդուն, որ իր ցաւատանջ կեանքովը դարփնեց աննիւթեղէն ճշմարտութիւնը, որ իր տառապանքի խրոզութիւնը կերպարանափոխեց մաքի անմահութեան սրբապատկերի՝

«Բերկրութիւնը՝ տառապանքի ընդմէջէն»:

∴

Իր վերջին լարային 5 քառեակներով՝ Պեթհովէն կը հանդիսանայ արդի երաժշտութեան հիմնաքարը. մեկնած դասական դպրոցէն ու վիպապաշտ դըպրոցներու ընդմէջէն՝ ան յաջողած է ներիմանալ եւ յայտնատեսել նոր ժամանակներու վիթխարի եւ բազմածաւալ անջրպետը:

ՊԵՏՐՈՍ ԱԼԱՀԱՑՏՈՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԿԱՐԱՊԵՏ ՓՈԼԱՏԵԱՆ

ԶՐՈՅՑ

# ԲԵՆԻԱՄԻՆ ԹԱՇԵԱՆԻ ՀԵՏ

●

Բ.

— Չէիր կրնար, սիրելի Թաշեան, աւելի ճիշդ եւ աւելի գեղեցիկ օրինակ գտնել, քան Ցոլակ Կաթողիկոսի դիմանկարը, պարգեւելու համար մեր տեսակէտը, մեզ ամէնէն աւելի հետաքրքրող հարցին՝ Սփիւռքի հայ մտաւորականին, մասնաւորապէս հայ գրագէտին ստանձնելիք առաքելութեան մասին:

Կը նախընտրեմ տակաւին անդրադառնալ այս խնդրին աւելի ետք, երեքով:

Վահէ Օշականը երկար կը խօսի այս մասին, հետաքրքրական տեսակէտներ կը յայտնէ։ Լաւ կ'ըլլայ, որ լսենք նախ զինք։ Ապա մեր կարգին, կը յայտնենք մեր կարծիքը։

Միւս կողմէ, կը մտածեմ, թէ այս կենսական հարցին ուսումնասիրութիւնը պիտի կազմէ մեր ներկայ զրոյցին արտամարմանական եզրակացութիւնը։

Մինչ այդ, սիրելի Թաշեան, քանի մը ուրիշ հարցումներ ունիմ, ու կը փափաքիմ լսել եւ ընթերցողին համար արձանագրել այստեղ քու պատասխաններդ:

— Ձե՞ս կարծեր, որ չափը անցուցինք, դոնէ ես շատ խօսեցայ. պէտք չէ չարաչար գործածել ընթերցողներուն համբերութիւնը։

— Չեմ կարծեր, որ մեղանչեցինք այդ մարզին մէջ։ Յետո՛յ, ո՛չ ոք կը ստիպէ, որ կարդան մեր գրածները։ Ինծի համար անխառն հաճոյք է լսել քեզ, սիրելի Թաշեան. բոլոր ըսածներդ երկարօրէն մտածուած են եւ մի՛շտ ինքնատիպ։ Ուրեմն կը փափաքիմ, որ կրկին վերադառնանք գրականութեան։ Գիտեմ, որ մեզմէ տարբեր կը մտածես դուն, մա՛նաւանդ քննադատութեան մասին։ Ընդհանրապէս գրականութեան վրայ խօսելէ ետք, կ'ուզեմ որ կարծիքդ յայտնես մեր գրականութեան մասին, Հայաստան եւ Սփիւռք։ Ո՞ւր հասած ենք, ի՞նչ տուինք անցնող յիսնամեակին։ Ի՞նչպէս կը տեսնես մեր գրականութեան ապագան։

— Լա՛ւ, լա՛ւ, սիրելի Փոլատեան, մեղքը վզիդ.... Նախ, քանի մը խօսք Գրականութեան իմ ըմբռնումիս մասին, քանի որ ա՛յդ է փափաքդ։ Խորքի եւ ձեւի տեսութիւնը հիմա ալ քննելի հարց է եւ դեռ լուծումի մը չէ յանգած։ Ոմանք նախընտրութիւնը կու տան նիւթին կամ խորքին, ուրիշներ՝ ձեւին։ Անարժանաբար՝ ես ալ այս «ուրիշ»ներէն եմ։ Չկայ նիւթ մը, որուն մասին բան մը գրուած

digitised by A.R.A.R.@

հըլլայ արարչագործութեան առաջին գաբերէն սկսեալ։

Աստուածաշունչը տուած է Ադամ-Եւայի վէպը. ետքէն գրուածները նորութիւն չեն, նորութիւնը Աստուածաշունչինն է. միւսները յօրինում չեն, թերեւս յաւելում են կամ լրացում, բայց յօրինում չեն։ Շրջանակ են առանց պատկերի։

Ո՛վ որ կրցաւ Ադամ-Եւայի վէպը տալ նոր ձեւով մը, որ միաժամանակ լրացնէ գրականութեան «ութ մասունք բանի»ը, այդ մէկը անկասկած տաղանդաւոր մարդ մըն է։ Բայց ակունքը, բխումի կէտը, Աստուածաշունչն է միշտ։

Զգացումները, ինչպէս Գաղափարները, քարի կամ մարմարի վրայ փորագրուած քանդակներ են։ Բուն տրուեստագէտը ան է, որ քանդակը կու տայ ինքնատիպ ձեւով։ Եւ մի՛ մոռնար, ինքնատիպ գրողը ան չէ, որ ոչ ոքի կը նմանի, այլ ան, որուն ոչ ոք կը նմանի։ Ասոր մէջ է գրողին արժանիքը։

Սակայն, ինքնատպութիւնը ո՛չ պոռոտախօսութիւն է, ո՛չ արտառոցութիւն, ո՛չ ալ աժան հեռարութիւն։ Անհեթեթ բան մը ըսել ինքնատիպ եղած ըլլալու համար, ինծի կը յիշեցնէ «աստուածային» Ներոնը, որ Հռոմը այրել տուաւ, որպէսզի հրդեհ մը տեսնէ։

Ռեմի տը Կուրմոն տեղ մը գրած է, թէ եղած եւ ըլլալիք բոլոր գիւտերուն մէջ ամէնէն կարեւորը, ամէնէն հիմնականը, ամէնէն գերազանցը կրակի գիւտն է։ Անկէ ետքի գիւտերը լրացումներ են միայն։ Չենք գիտեր ե՞րբ գտնուեցաւ կրակը, բայց ստուգապէս գիտենք, թէ Հոմերոս իր «Իլիական»ն ու «Ոդիսական»ը գրեց երեք հազար տարի առաջ։ Իսկ միւսը — կրա՛կը — այսօր դարձած է հրթիռ....։

Գրականութեան մէջ ալ «գիւտ»ը արժէքաւոր ներդրում է։ Պզտիկ գիւտերն իսկ կը հիացնեն մեզ։ Մէկ հնչեակի մէջ երբեմն աւելի գեղեցկութիւն կայ, քան ստանաւորներու լայնափոր ժողովածուներուն մէջ։ Կարելի՞ է Առվէրի հնչեակը բաղդատելու ելլել, օրինակ, Սիմոն Ֆէլէկեանի ոտանաւորներուն հետ։

Աւելի՛ գեղեցկութիւն, ա՛յս է արուեստը։ Գեղեցկութիւն ո՛չ միայն խորքի մէջ, այլեւ՝ այլ մա՛նաւանդ ձեւի մէջ։

Ձեւը նորարարութիւն է, խորքը կըտաւն է։ Կտաւը գեղեցկացնողը նաշխերն են, գոյները, գիծերը, այսինքն արուեստը։

Ըսուած է, որ ոճը մարդն է։ Ըսուած չէ, որ ոճը նիւթն է։ Ձեւը կամ ոճն է, որ դրոշմ կու տայ գրողին։ Ինչի՛ մասին կ'ուզես գրէ, կը բաւէ, որ ոճ ունենաս։ Մարդիկ կան, որ Աստուծոյ մասին կը գրեն, ուրիշներ կը գրեն շատ սովորական ճանճի մը մասին։ Առաջինները յորանջել կու տան մեզի, երկրորդները կը հիացնեն մեզ։

Կը յուսամ՝ կը գոհանաս, սիրելի Փոլատեան, այս կարճ բացատրութեամբ։

— Կը գոհանամ, սիրելի Թաշեան, բայց ամբողջովին չեմ բաժներ տեսակէտդ։ Ոճի մասին ըսածներդ ճիշդ են, ընդհանրապէս։ Կան սակայն պարագաներ, ուր ստիպուած ենք նկատի չառնել այդ ընդհանուր կանոնը։ Ըսել կ'ուզեմ, որ երբեմն, գրողի մը մօտ աւելի կարեւորութիւն կը ներկայացնէ իր ըսածը, քան իր ըսելու ձեւը։

Նիւթը կամ խորքը ա՛յնքան մեծ է, ա՛յնքան ընդարձակ եւ ա՛յնքան ինքնատիպ, որ ոճի պակասը նկատի չենք առներ։ Համաշխարհային գրականութեան մէջ, ինչպէս եւ մեր մէջ, եղած են գրողներ, որոնք ա՛յնքան բան ունեցած են ըսելիք, որ ժամանակ եւ տրամադրութիւն չեն ունեցած իրենց ըսելու ձեւով զբաղելու։

Քանի մը օրինակներով բացատրեմ միտքս։ Անցեալ դարու Ֆրանսական գրականութեան մէջ կան Ֆլոպէր, Մոփասան, որոնք ինքնատիպ ոճ ունին։ Հրաշալի արձակագիրներ են, ոճաբաններ, եթէ այս բառը չի խրտչեցներ քեզ։ Նոյն ժամանակաշրջանին ստեղծագործեց հսկայ Պալզաքը, որ մասնաւոր ոճ մը չունի։ Առաջին երկուքին մէջ իրենց ոճն է դիրենք մեծ արուեստագէտ դարձնողը։

digitised by A.R.A.R.@

Գալզաքի մէջ, նիւթն է, խորքն է անոր մեծութիւնը կազմողը։

Արդ, ո՞վ պիտի համարձակի գերադասել Ֆլոպէրը կամ Մոփասանը՝ Պալզաքէն։ Նոյնը կրնանք ըսել Թոլստոյի, Տոստոյեւսկիի մասին։ Պարագան նոյնը չէ՞ մեր Գրականութեան «մե՛ծ տղային», ինչպէս կը կոչէս Յակոբ Օշականը։ Ստեղծագործական իր վերջին շրջանին մանաւանդ, ժամանակը ա՛յնքան Ենդգա., որ ան բոլորովին անտեսեց իր ըսելու ձեւը, կարենալ պարզելու համար իր մտքին ու հոգիին մէջ գիրար հրմըշտըկող մտածումները։

Դեռ կրնայի տարածուիլ այս մասին, օրինակ բերելով Վարուժանն ու Զարենցը՝ մէկ կողմէն, Մեծարենցը, Տէրեանը, Թէքէեանը՝ միւս կողմէն։ Սխալ չհասկցուիմ. չեմ ըսեր, թէ առաջինները ոճ ունին, երկրորդները չունին։ Կ'ըսեմ պարզապէս, որ Ֆլոպէրի, Մոփասանի մէջ ոճը գերադաս շնորհ մըն է, Պալզաքի, Թոլստոյի մէջ՝ գերադասը խորքն է, նիւթը։

Բնական է, իրապէս «մեծեր»ը, հաւասարապէս ունին տառուածային այդ երկու շնորհներն ալ, միաժամանակ։ Հանճարներ են անոնք, արեւներ։ Հոմերոս, Տանթէ, Շէյքսփիր, Նարեկացի։

Սիրելի Թաշեան, վստահ եմ, որ կրնաս, շատ դիւրութեամբ ջրել այս ըսածներս, գոնէ անոնցմէ մաս մը։ Բայց, թոյլ տուր, որ հոս ալ վերջացնենք այս հարցը, շատ չտարածուելու համար։ Զարաչար չգործածելու համար, ինչպէս կ'ըսէիր, ընթերցողին համբերութիւնը…

Եւ անցնինք մեր օրակարգի յաջորդ հարցին։

— Զվերջացա՞ւ, դեռ ուրիշ հարցե՞ր կան։ Եղբա՛յր, քու կազմած օրակարգդ, մեր կուսակցական ընդհանուր ժողովներու ունեցածն ալ անցաւ։ Լա՛ւ, չարունակէ. բայց գիտցիր, որ դրամագլուխս սպառելու վրայ է։

— Վախս քեզմէ չէ, այլ՝ ընթերցողէն։ Հարցումս հետեւեալն է. արուեստները ընդհանրապէս, գրականութիւնը մասնաւորապէս, քսաներորդ դարու մարդկութեան համար կը ներկայացնե՞ն նոյն կարեւորութիւնը, ինչպիսին էր մեզ նախորդող դարերուն։ Յստա՞կ է հարցումս եւ քեզի համար հաճելի՞ է պատասխանել անոր։

— Թէ՛ յստակ եւ թէ հաճելի։ Գաղտնիքը ունիս զրուցակիցներուդ սիրած նիւթերը արծարծելու։ Մէկ խօսքով, փրովոքաթէօր մըն ես։ Հիմա կը հասկնամ, թէ ինչո՛ւ այդքան հաճելի են «զըռոյց»ներդ։ Բայց, սիրելի զրուցագիր ընկեր, կը ցաւիմ, որ հաճելի բաներ պիտի չըսեմ ժամանակակից գրականութեան մասին։

Նախ, երկու խօսք ընդհանուր կրթական մակարդակի մասին։ Մեզ առաւելապէս կը հետաքրքրէ ընդհանուր կրթութեան ուղղութիւնը։ Լեւոն Շանթ կը գտնէր, որ կրթութեան նպատակն է ինտելիգենտ պատրաստել։ Ուրիշներու կարծիքով՝ ընդհանուր կրթութիւնը կ'ընթանայ գիտնական եւ թեքնիսիէն պատրաստելու ուղղութեամբ։

Գրականութեամբ հետաքրքրուող, գրական մակարդակով եւ մթնոլորտով մտահոգուող շատ մարդ չկայ։ Բոլոր ակնարկները ուղղուած են գիտութեան եւ թեքնիքին։ Բոլոր մտահոգութիւնները կեդրոնացած են այս երկուքին վրայ։

Գրականութիւնը կրնայի պէս կը քալէ, գիտութիւնը կը սաւառնի երբեւ արծիւ։ Միայն վերջին հարիւրամեակին ստեղծուեցան ելեկտրականութիւնը, ինքնաշարժը, սուզանաւը, ինքնաթիռը, հեռագիրը, հեռաձայնը, անթելը, ձայնասփիւռը, պատկերասփիւռը, վերջապէս հիւլէն, հրթիռը եւ արբանեակը։ Ու ահա՛, մարդիկ նուաճեցին լուսինը։ Կըրնա՞նք նախատեսել, թէ ի՛նչ նոր գիւտեր տեղի պիտի ունենան գալիք հարիւրամեակին։ Գոնէ մէկը ըսեմ — մարդիկ պիտի սկսին օդին մէջ թռչիլ իրենց սեփական թեւերով և ծովերուն վրայ քալել… Քրիստոսի պէս։

Ի՞նչ տուաւ գրականութիւնը այս հարիւրամեակին. ո՛չ Հոմերոս, ո՛չ Տանթէ, ո՛չ Շէյքսփիր, ո՛չ Կէօթէ։ Ո՛չ Նարեկացի, ո՛չ Քուչակ։ Մինչ գիտութիւնը

digitised by A.R.A.R.@

հրթիռ եւ հիւլէ ստեղծեց, գրականութիւնը ո՛չ «Աստուածային կատակերգութիւն» կրցաւ տալ, ո՛չ «Համլէթ», ո՛չ «Ֆաուստ»։

Երբ Շէյքսփիր «Համլէթ»ը կը գրէր, շոգեկառք չկար, շոգենաւ չկար։ Չկային նաեւ միւսները։ Երբ Միքէլ Անճելօ «Մովսէս»ը կը քանդակէր, մարդիկ եղնաւայլով եւ լապտերով կը ճամբորդէին։ Երբ Վինչին «Ճոգոնտա»ն կը նկարէր, մարդկութիւնը գաղափար անգամ չունէր հեռագրի ու հեռաձայնի մասին։

Երեք հարիւր յիսուն տարուան մէջ երկրորդ «Համլէթ» մը չգրուեցաւ։ Չորս հարիւր տարուան մէջ նոր «Մովսէս» մը չքանդակուեցաւ։ Չորս հարիւր յիսուն տարուան մէջ ուրիշ «Ճոգոնտա» մը չնկարուեցաւ։ Ինը հարիւր այսքան տարուան մէջ նոր «Նարեկ» մը գրող չեղաւ։

Մարդ նախ գեղեցիկը կը զգայ (արուեստ), ապա միայն կ'ըմբռնէ ճշմարտութիւնը (գիտութիւն)։ Ուրիշ խօսքով՝ նախ կը զգայ, ապա միայն կը մտածէ ու կը գտնէ։ Իրողութիւնն այն է, որ այս «նախ»ը հետզհետէ ետ գնաց, իսկ «ետքը» հետզհետէ առաջ գնաց։

Գիտութիւնը ուղենիշ մըն է հիմա, գրականութիւնը պարզ ուղեկից մըն է։

Թերեւս կը չափազանցեմ՝ հաստատելով ճշմարիտին գերազանցութիւնը գեղեցիկին վրայ կամ գիտութեան գերազանցութիւնը գրականութեան վրայ։ Բայց կը կարծեմ, թէ շատ չեմ սխալիր։

Քսաներորդ դարու նշանաբանն է աւելի գիտութիւն։ Տասնիններորդ դարու կարգախօսն էր աւելի գրականութիւն։ Հիները Նարեկացի էին, նորերը Մխիթար Հերացի են։ Այլ խօսքով՝ հին սերունդը Սաֆօ էր, նորը Այնշթայն է։ Երկուքին միջեւ քսանըհինգ դար կայ...

Վերջացնեմ. հին սերունդը աւելի գրականաշունչ էր, նորը աւելի գիտականաշունչ է (դպրոցին մէջ, մաթեմաթիքի դասին, ես բանաստեղծութիւն ու վէպ կը կարդայի)։ Ազգին — եւ ազգերուն — կրթական ու մտաւորական մակարդակը հիմա աւելի բարձր է անշուշտ, քան անկէ դար մը առաջ։ Բայց ստեղծուած ուղղութիւնը, ըսենք «ոճ»ը աւելի շատ կը հակի դէպի գիտութիւն, քան դէպի գրականութիւն։

Այս քանի մը բառերով թերեւս տրուած եղաւ հարցումիդ պատասխանը։ Ինչի՞ պիտի յանգի գրականութիւնը։ Ըսի արդէն, — գիտութեա՛ն։ Այս ըսել չէ, որ գրողներ ու գրագէտներ պիտի չհասնին։ Արուեստը եւ գրականութիւնը մեզմով չսկսան եւ մեզմով պիտի չվերջանան։ Կրցա՞յ գոհացնել քեզ, սիրելի Փոլատեան, եւ համաձա՞յն ես ինծի։

— Լիուլի գոհացուցիր զիս եւ ընդհանուր գիծերուն մէջ համաձայն եմ ըսածներուդ։ Գիտութեան դարուն մէջ կ'ապրինք եւ ո՛չ թէ գրականութեան։ Ո՛չ մէկ առարկութիւն այս մասին։ Ու դարձեալ ճիշդ է պատկերդ երբ կ'ըսես, թէ գրականութիւնը կը յառաջանայ կրիայի մը պէս, գիտութիւնը կը սուրանի իբրեւ արծիւ։

Բայց թոյլ տուր, սիրելի Թաշեան, դիտել տալու, թէ մարդկային ստեղծագործ մտքին այս երկու բնագաւառներուն մէջ ի յայտ եկող արժէքները գնահատելու աշխատանքին մէջ նոյն չափն ու նոյն կշիռը չենք գործածեր։ Ճշմարիտին (գիտութիւն) ըմբռնումը անմիջական եւ անառարկելի է, Գեղեցիկին (արուեստ) ըմբռնումը ո՛չ անմիջական է եւ ոչ ալ անառարկելի։ Իրենց էութեան մէջ իսկ տարբեր բաներ են անոնք։ Ճշմարտութիւնը մէկ է բոլորին համար, նիւթական, շօշափելի արժէք մը։ Արուեստը վերացական արժէք մըն է։ Անոր ըմբռնումը, անոր գնահատութիւնը կը տարբերի անհատէ անհատ, ժողովուրդէ ժողովուրդ, երկրէ երկիր, ժամանակաշրջանէ ժամանակաշրջան։ Այլ խօսքով՝ չենք վիճիր, չենք կրնար վիճիլ Արքիմեդեսի, Քիւրիի կամ Այնշթայնի «գիւտերուն» մասին, կրնանք, կը վիճինք սակայն արուեստագէտի ստեղծագործութեան մասին, նոյնիսկ սրբագործուած հանճարներու, ինչպիսին են Հոմերոսը, Տանթէն կամ Շէյքսփիրը եւ կամ ալ Նարեկացին։ Չես անգիտանար ի հարկէ, թէ

digitised by A.R.A.R.@

ինչե՛ր գրած է Թոլստոյ Շէյքսփիրի մասին, ո՛չ ալ Շահնուր՝ Նարեկացիին վըրայ։

Ցետոյ, ուրիշ հարց։ Հանձարները, գորս կը թուես, քանի մը տասնեակ դարերու վրայ կը տարածուին։ Բացառիկ երեւոյթներ են անոնք։ Իւրաքանչիւր գրականութիւն իր այդ հանճարին ժամանակակից, կամ անոր յաջորդող դարերուն ուրիշներ տուած է, մէկ հանճարեղ արուեստագէտի դիմաց՝ տասնեակ տաղանդներ։

Առնենք քեզի եւ ինծի ծանօթ ֆրանսական գրականութիւնը։

Այդ գրականութեան ոսկեդարը, ընդունուած դարը, տասնըեօթներորդը, մեզի տուած է Քորնէյլ, Ռասին, Մոլիէր եւ ուրիշներ։ Նոյն ֆրանսական գրականութիւնը մե՛ր դարուն, քսաներորդին, հինգ կամ տասը անգամ աւելի տաղանդաւոր գրագէտ ու բանաստեղծ տուած է։ Ցիշելու համար անոնցմէ միայն քանի մը հատը՝ ըսեմ, որ մեր դարուն կը պատկանին Անտրէ Ժիտը, Փոլ Վալէրին, Փոլ Քլոտէլը, Սէն-Ժոն Փերսը եւ դեռ որքա՜ն ուրիշներ։ Ինծի համար նոյնքան մեծ են այս վերջինները, եթէ ոչ աւելի, քան առաջինները։ Շարունակեմ։ Դուգակշիռը մեր «փոքր» ածուին մէջ, միջին դարու Նարեկացիին դիմաց, հայ գրականութիւնը, վերջին հարիւրամեակին, Մեծարենց տուած է, Տէրեան, Թումանեան, Վարուժան, Թէքէեան, Սիամանթօ, Ինտրա, Զօհրապ, Օշական, Շանթ, Զարեհ։ Շարունակե՞մ... Ին-չո՞ւ ըսի այս բոլորը. պարզապէս հաստատելու համար, որ կը շարունակուի ստեղծագործ ճիգը, արուեստագէտները կը յաջորդեն արուեստագէտներուն։ Չէ կասած գրականութիւնը։ Թերեւս նուազ արագ, նուազ տեսանելի, քան գիտութիւնը, բայց միշտ յառաջընթաց եւ միշտ նոր։

Գիտի ատարկես, թէ երէկն էր այդ, իսկ այսօ՞ր... Զենք կրնար դատել այսօրը, դեռ չէ վերջացած, ի լինելութիւն է։ Կրնա՞նք նախատեսել, թէ ինչե՛ր պիտի գրուին, ի՛նչ մեծ արուեստագէտներ պիտի ծնին, երբ շուտով սկսինք թռչիլ օդին մէջ մեր սեփական թեւերով, քալել ծովերուն վրայ... Քրիստոսի պէս, ինչպէս դո՛ւն կը նախատեսես։

Եւ այս կրնայ տեղի ունենալ թէ՛ օտար եւ թէ մեր գրականութեան մէջ։ Թերեւս անիկա, գրականութիւնը, արտայայտութեան ձեւ ու միջոց փոխէ, թերեւս բոլորովին տարբեր ըլլայ, մինչեւ հիմա եղածներէն։ Տե՛ս, չարժանկարը ի՛նչ գլուխ-գործոցներ արտադրեց։

Ներէ՛ ինծի, շատ սիրելի Թաշեան, իմ այս երկար միջամտութեանս համար։ Այժմ կը խնդրեմ, որ ինծի ըսես, թէ ո-րո՛նք են սիրած հեղինակներդ մեր նորագոյն գրականութեան մէջ։

— Եթէ հարցումը վերաբերէր ո՛չ թէ մեր, այլ միջազգային գրականութեան, կրնայի ըսել, թէ ինծի համար մեծերուն մէջ մեծագոյնն է Շէյքսփիրը (վերջին երեք դարերուն)։ Ութ անգամ կարդացած եմ «Համլէթ»ը եւ կրնամ ութ անգամ եւս կարդալ։ Անտրէ Ժիտ կ'ըսէր, թէ գրողի մը արժէքը անոր մէջ չէ, որ շատ կը կարդացուի, այլ անոր մէջ է մանաւանդ, որ վերստին կը կարդացուի։ Երկու անգամ կարդացուած գիրքը յաջողութիւն մըն է, ութ անգամ կարդացուածը յաղթանակ մըն է։

Այժմ քանի մը խօսք մեր արդի գրականութեան մասին, Սփիւռք եւ Հայաստան։

Սիրելի Փօլատեան, չեմ կարծեր, որ քեզի եւ ուրիշներու համար վիրաւորական ըլլայ սա՛ հաստատումը, թէ բացառիկ դէմքեր չկան մեր գրականութեան մէջ. եղածներն ալ մեր աշխարհին չեն պատկանիր այլեւս։ Անշո՛ւշտ, հիմա ալ ունինք բանաստեղծներ, վիպագիրներ, քննադատներ, հրապարակագիրներ, նոյնիսկ թատերագիրներ։ Բայց Թէքէեան չունինք, Օշական չունինք, Լեւոն Շանթ չունինք։ Կրնայ ըլլալ, որ օր մը ունենանք, բայց հիմա չունինք։ Մեր խօսքը «հիմակուան» մասին է արդէն։ Իմ նախասիրած գրագէտս է, ապրողներուն մէջ, Շահան Շահնուրը, ապա նաեւ Արամ Հայկազը։ Գիտի հարցնես՝ ինչո՞ւ.

բայց «ինչու»ին պատասխանը կրնայ շատ հեռուները տանիլ մեզ։ Գոհացիր այսքանով եւ «ինչու»ն մի՛ փնտռեր (ես հիմա նոր գիրք մը գրելու ժամանակ չունիմ)։

— Փնտռելու պէտք չունիմ, կը սիրես այդ երկուքը, որովհետեւ «ոճ» ունին... պարզ է խնդիրը։

— Չեմ կարծեր սակայն, որ իմ նախասիրածներէս այս երկուքը կարելի է բացառիկներու շարքին մէջ զետեղել։ Նորէն հերոսութիւն է, որ յաջողած ենք միջին մակարդակ մը ստեղծել։ Կը վախնամ, որ այսօրուան մակարդակն ալ պիտի չգտնենք վաղը։ Չյուսահատեցնեմ քեզ. պիտի ըսեմ միայն, որ գրականութիւնը ցորենի հաց էր մեզի համար, այսօր եգիպտացորենն ալ բաւ պիտի համարենք, եթէ գտնենք...

Լման յիսուն տարի է, մենք գրեթէ առաջ չենք երթար, ետ կ'երթանք։ Ո՞վ գիտէ, օր մըն ալ կը նայիս՝ կը սկսինք նորէն առաջ երթալ, եթէ սատանան մեր պոչէն չքաշէ։

— Մաղթե՛նք... այսքան ուրեմն Սփիւռքի մասին, իսկ Հայաստանի մասին ի՞նչ է կարծիքդ։

— Յակոբ Օշական առիթով մը կ'ըսէր ինծի, թէ արեւմտահայ քերթողութեան մէջ բանաստեղծութիւնը կայ, ոգին չկայ, իսկ արեւելահայ քերթողութեան մէջ ոգին կայ, բանաստեղծութիւնը չկայ։ Կը խոստովանիմ, որ այն ատեն ալ ես շատ համաձայն չէի վարպետիս այս յանդուգն վճիռին։ Եթէ բանաստեղծութիւն կայ, ուրեմն նաեւ ոգի կայ։ Ուրիշ խօսքով՝ ուր ոգի կայ, հոն նաեւ արուեստ կայ։ Եւ փոխադարձաբար։ Բանաստեղծութիւնը բոլոր արուեստներուն մէջ գերագոյնն է ու վերագոյնը։ Աւագ ու կրտսեր բոլոր արուեստներուն — նոյնիսկ հրապարակագրութեան մէջ — բանաստեղծութիւն կայ անպատճառ։

Արեւելահայերը Թումանեան ու Տէրեան ունէին, թէեւ ունէին նաեւ «բանաստեղծ» — հրապարակագիրներ, ինչպէս էր, օրինակ Գամառ-Քաթիպան։

Արեւմտահայերը, իրենց կարգին, Աղեքսանդր Փանոսեան եւ Մերուժան Պարսամեան ունէին, բայց նաեւ Թէքէեան, Մեծարենց, Վարուժան, Սիամանթօ։

Որո՞նց տանք առաւելութիւնը, — առաջիններո՞ւն թէ վերջիններուն։

Արեւելահայ արձակը ետ էր արեւմտահայ արձակէն։ Զօհրապի պատկերաւոր բացատրութեամբ՝ արեւելահայերը «բարի լոյս» ըսելու համար Յայսմաւուրք մը կը գրեն։ Այս աւանդութիւնը կը շարունակուի դեռ։

Զօհրապի նորավէպերը, որոնք խտացած վէպեր են, թերեւս աւելի կ'արժեն, քան արեւելահայ կարգ մը վիպագիրներու ստուարածաւալ եւ հաստափոր «վիպասանութիւն»ները։

Իսկ արեւելահայ քննադատութիւնը պարզապէս «բացատրական ընթերցանութիւն» է։ Օշական չկայ Հայաստանի մէջ։ Արսէն Տէրտէրեանը սուսերն իսկ չէ ալեւոր գրագէտին։ Նիկոլ Աղբալեանը ի վերջոյ բանաւէր դարձաւ։

Բայց ես ուտող-ուրացող չեմ. պիտի խոստովանիմ, որ գիտական, պատմագիտական, լեզուաբանական մարզին մէջ հիանալի վերելք արձանագրած է Հայրենի գրականութիւնը։ Իր կարգին՝ արձակը սկսած է պայծառանալ. բանաստեղծութիւնը դարձած է սաւառնող դրօշ։ Յովհ. Շիրազ ունինք, Պարոյր Սեւակ ունինք, Սիլվա Կապուտիկեան ունինք, միւսները ունինք։ Չեմ ուզեր անձնանուններու բառարան կազմել եւ մէկ-մէկ թուել լաւերը, լաւագոյնները, միջակները։

— Մահարի՛, Արմէ՛ն, Բակունց...

— Այո՛, ի հարկէ, ուրիշներ ալ, տաղանդաւո՛ր...։ Իմ կարծիքով՝ հիմա գրականութեան կեդրոնը փոխադրուած է յայնկոյս Արարատի։ Արեւելահայերը վերջին յիսնամեակին, թուածներէդ զատ, թուածներէդ մեծ, Եղիշէ Չարենց տուին, իսկ ի՞նչ տուինք մենք, յայսկոյս Արարատի։ Չեմ կարծեր, որ ասկէ ետք «Ես իմ անուշ...» մը գրուի, ինչպէս հա-

digitised by A.R.A.R.@

զար տարիէ ի վեր նոր «Նարեկ» մը չգըրւեցաւ։

Ըսածէս աւելի՝ ըսել ուզածս հասկցար անշուշտ, սիրելի Փոլատեան։ Երեւակայէ, որ Օշական, «անբանաստեղծ» կը կոչէր Զարենցը։ Աւելցնելիք բան մընա՞ց...

— Ո՛չ, սիրելի Թաշեան, աւելցնելիք բան չկայ։ Առիթն է սակայն անգամ մը եւս շեշտելու ի՛նչ որ կ՚ըսէի քիչ մը առաջ։ Գիտութեան եւ արուեստի գործերուն ըմբռնումը, անոնց գնահատումը կը հպատակի բոլորովին տարբեր օրէնքներու։ Օշականի մը նման մէկը ; որ «անբանաստեղծ» կը կոչէ Զարենցի նման մէկը... Ի՛նչեւիցէ, չտարածուինք զարմելալ։

Մէկ կամ երկու հարցում մնաց, կը խնդրեմ, որ պատասխանես անոնց ալ եւ ազատ կը կացուցանեմ քեզ ա՛յս... տառապալից աշխատանքէն։

Ի՞նչ կը մտածես մեր գրականութեան ապագայի մասին, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ։

— Գրականութեան եւ արուեստի զարգացման պայմաններէն մէկն ալ «ժողովուրդ» տարրն է։ Սփիւռքի մէջ հայեր կան, բայց հայութիւն չկայ։ Գրեթէ չկայ։ Ըսել կ՚ուզեմ՝ հայեր կ՚ապրին աստ եւ անդ, սակայն հայութիւնը, բուն ժողովուրդը, հո՛ն է՝ Հայաստանի մէջ։ Ուստի՝ մեր գրականութեան ապագան պէտք է փնտռել ո՛չ թէ Սփիւռքի, այլ՝ Հայաստան Աշխարհի մէջ, ուր կ՚ապրի եւ կը ստեղծագործէ մեր ժողովուրդը, համախումբ, համախոհ ու համակամ։

Սփիւռքը հայրենիք չէ, գաղութ է, իսկ գրականութիւնը գաղութային երեւոյթ չէ։ Կրնայ ըլլալ, որ գաղութներու մէջ տաղանդաւոր գրողներ ունենանք ակէ ետքն ալ, ինչպէս ունեցած ենք անկէ առաջ։ Երեք-չորս հազարնոց գաղութներու մէջ գրականութիւն «չի բուսնիր» ու չ՚աճիր։ Վիեննան եւ Վենետիկը գաղութ չեն, վանք են, միաբանութիւն են։ «Ի հնումն» վանքերը միայն աղօթարան չէին, այլ նաեւ — այլ մանաւանդ — մշակութային կեդրոններ էին։ Նոյնն է պարագան հիմա Վիեննայի եւ Վենետիկի համար։

Դիտած ես անշուշտ, որ մեր օրերուն գաղութները հետզհետէ կը նօսրանան ու կը տարրալուծին։ Կը դառնան ցրօնք։ Այսօր որոշ չափով համախումբ հայութիւն կայ, օրինակ, Լիբանանի, Ամերիկայի, Ֆրանսայի եւ Պարսկաստանի մէջ։ Ամերիկայէն եւ Ֆրանսայէն շատ բան չեմ ակընկալեր (մեծ բան է, եթէ կարենան գէթ եղածը պահել), իսկ Պարսկաստանի եւ Լիբանանի մէջ մենք հիմա սկսած ենք սնանիլ Հայաստանի գրականութեամբ։ Մեր թերթերն ու հանդէսները կարծես Երկրին մէջ կը հրատարակուին։ Ասիկա թերեւս բացարձակ չէ այսօր, վաղը կըրնայ բացարձակ ըլլալ։

— Համաձայն չեմ այս յոռետեսութեանդ՝ Սփիւռքի նկատմամբ։ Այս մասին ըսելիքներ ունիմ։ Բայց, դուն շարունակէ, խնդրեմ։

— Ուրեմն՝ կեդրոնը հայրենիքն է, գաղութները կոտորակ են միայն։ Եւ պարզ է, որ գրականութեան ապագան Հայաստանի մէջ է, ուր ո՛չ միայն գիտութիւն կը մշակեն, այլեւ՝ գրականութիւն կը ստեղծեն։ 1915էն առաջ, Թուրքիա կերպով մը Հայաստան էր, իբրեւ կեդրոն ունենալով Պոլիսը։ Հիմա Պոլիս չկայ, Թիֆլիզ չկայ, Բագու չկայ, Փարիզ չկայ։ Քանի մը հարիւր հազարնոց ամերիկահայ գաղութը Ուիլեըմ Սարոյեան տուաւ, հարիւր հազարնոց ֆրանսահայ գաղութը Շահան Շահնուր տուաւ (Նորը, ո՛չ հինը)· քառասուն հազարնոց արժանթինահայ գաղութը Ալիսիա Կիրակոսեան տուաւ։ Ասոնք ազգութեամբ հայ են, բայց գրականութեամբ օտար են, բան չեն աւելցներ հայ գրականութեան վրայ (չմոռնալ, որ Համաստեղ եւ միւսները «տեղական բերք» չեն)։ Իսկ ի՞նչ տուաւ հարիւր յիսուն հազարնոց պարսկահայ գաղութը։

Ներկան այս է, ի՞նչ կը կարծես, որ կրնայ ըլլալ ապագան...

— Վերջին հարցում մը, սիրելի Թաշեան։ Ի՞նչ կը մտածես Սփիւռքի եւ Հայաստանի յարաբերութեանց մասին։

digitised by A.R.A.R.@

— Եթէ իմ «մտածելս» բան մը կ'արժէ, կը մտածեմ ուրեմն, որ տասը-տասնըհինգ տարիէ ի վեր բարելաւում մը կայ Սփիւռք – Հայաստան յարաբերութեանց մէջ: Ատեն մը, «մենք ամենայն Հայոց կառավարութիւն չենք» կ'ըսէին երկրի վարիչները եւ «զանցառելի» կը նկատէին հայկական Սփիւռքը թէ՛ իբրեւ քանակ, թէ իբրեւ որակ:

Հիմա փոխուած են պայմանները: Փոխուած են նաեւ մտայնութիւնները, անշուշտ դէպի լաւը, անշուշտ դէպի հայավայելը:

Հայութեան երկու հատուածներուն միջեւ կայ ցեղին ձայնը, արիւնին ձայնը, պատմութեան ձայնը, աւանդութիւններուն ձայնը: Սոցիալիզմ կառուցանենք, թէ հետամուտ ըլլանք նոր մարդ ու նոր կարգեր ստեղծելու, այս ձայները չեն լռած: Չեն կրնար լռել:

Ձեռք բերուած արդիւնքին մէջ դեր մը ունին անկասկած փոխադարձ չփումները, Հայրենիքէն Սփիւռք եւ Սփիւռքէն Հայրենիք երթուդարձերը, մտքի ու հոգիի հաղորդակցութիւնները եւ ուրիշ բաներ:

Բայց քարացած մտայնութիւններ կան, որոնք պէտք է դադրին ճարպացած ըլլալէ եւ դառնան... հեղուկ: Պէտք է ստեղծուի «սիրալիր մթնոլորտ» ո՛չ թէ արուեստական, այլ՝ բնական ու արենակցական ճամբով:

Երբ կողմերէն մէկը միւս կողմին մէջ կը տեսնէ իմպերիալիզմի գործակալներ եւ հայ ժողովուրդի ոխերիմ թշնամիներ, այս կը նշանակէ դաւաճանել ցեղի ձայնին, արիւնի ձայնին դէմ, պատմութեան ձայնին եւ բոլոր լսելի եւ անլսելի ձայներուն դէմ: Դաշնակցական ըլլալուս եւ նուազ հայ չեմ, քան Երկրի եւ Արտերկրի կոմունիստ հայը: Ես Լենինի աշակերտ չեմ, Մեսրոպ Մաշտոցի աշակերտ եմ: Հասկնալի՞ է:

Վե՛րջ այս տխուր մտայնութեան եւ վե՛րջ նաեւ մեր... հոգեմաշ զրոյցին, որ իմ կարծածէս եւ ենթադրածէս աւելի երկարեցաւ:

— Գիտեմ, որ յոգնեցուցի քեզ, սիրելի Թաշեան, ներէ ինծի: Ներէ, որ փոխեմ նաեւ վերջին պարբերութեանդ մէջ բառ մը:

— Ո՞ր մէկը...

— Հոգեմաշը փոխեմ հոգեշահի...

(Շար. 2 եւ վերջ)

Կ. Փ.

digitised by A.R.A.R.@



# ԷՕԺԷՆ ԻՈՆԵՍՔՕ

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ՀԱԿԱ-ԹԱՏՐՈՆ

ԳՐԵՑ՝ ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ

«Նոր վարձակալը» (Le Nouveau Locataire) սարսափազդու պարզութիւնը ներկայացնող տեսարան մըն է։ Երկախօսութիւնը (վարձակալին եւ կռուազան ու ագահ դռնապան– տնտեսին (concierge), վարձակալին եւ շարժող մարդոց միջեւ, վերածուած է երկրորդական կարեւորութիւն ստացող տեսարանի մը։ Իր նախկին ձեւին մէջ, ասիկա թատերգութիւնն է շարժող առարկաներու, որոնք կը խըճողեն մարդը եւ զայն կը խեղդեն անշարժ նիւթի ծովու մը մէջ։ Բանաստեղծական եզակի պատկեր մը կը կերտուի մեր աչքերուն դիմաց, նախ՝ որոշ զարմանք մը պատճառելով, աւելի ուշ՝ տեղի տալով վանողական անխուսափելիութեան։ Այս բոլորը ցուցադրութիւնն են անխառն թատրոնի բոլոր կարելիութեանց. ընդլայնուած են տիպարի, բախումի եւ նիւթի պատկերացումին ըմբռնումները, բայց տակաւին «Նոր վարձակալը» կը մնայ աճող սրսփինքով տըրամա մը, յագեցած՝ սքանչացումով եւ բանաստեղծական ուժով։ Ի՞նչ կը նշանակէ ասիկա։ Սկիզբը դանդաղօրէն, ապա աճող արագութեամբ առարկաներով լեցուող սենեակը պատկե՞րն է մարդկային կեանքին, որ սկիզբը անշահեկան ու պարապ կ'ըլլայ, բայց աստիճանաբար կը զարգանայ փորձառութիւններու և յիշատակներու ճամբով։ Կամ՝ թատերգութիւնը պարզապէս տեսարանային դարձուածքներու վերածո՞ւմն է — ծանր եւ տափակ նիւթին ճնշիչ գոյութեան — յուսալքող, կապարային տրամադրութեան, որմէ Իոնեսքօ տառապած է միշտ։

«Նոր վարձակալը» առաջին անգամ ներկայացուած է շուէտերէն խօսող թատերախումբի մը կողմէ, Ֆինլանտիոյ մէջ, 1955ին։ 1956ի Նոյեմբերին, անիկա կը ներկայացուի Լոնտոնի «Արուեստներու Թատրոն»ին մէջ եւ Փարիզ կը հաս–

digitised by A.R.A.R.@

նի միայն 1957ի Սեպտեմբերին։ Բայց հակառակ թատերգութեան մը առաջին բեմադրութեան պատճառած դժուարութիւններուն եւ նիւթական կորուստներուն՝ Իոնեսքոյի համբաւը կը տարածուի տակաւ առ տակաւ։

1954ի վերջերը, անոր «Թատրոն»ին առաջին հատորը կը տպուի Փրանսացի առաջնակարգ հրատարակիչներէն Կալիմարի կողմէ, որուն առած այս որոշումին մէջ վճռական դեր կատարած է բանաստեղծ եւ վիպագիր Րէյմոն Քընօ, որ խորապէս ազդուած էր Իոնեսքոյի թատերական առաջին փորձերէն եւ որուն խօսքը մեծ կշիռ ունէր Կալիմարի մօտ։

Առաջին հատորին մէջ երեւցող վեց թատերգութիւններէն միայն մէկը՝ «Ժազ կամ Համակերպութիւնը» բեմադրուած չէր տպագրութենէն առաջ։ Այս թերացումը կը դարմանուի 1955ի Հոկտեմբերին, երբ Րոպէր Փոսթէք Հիւշէթ թատրոնին մէջ կը բեմադրէ «Ժազ»ը եւ Իոնեսքոյէն ուրիշ թատերգութիւն մը՝ «Նկարը»։

«Ժազ»ը կը գտնէ մեծ յաջողութիւն, մինչ «Նկարը» կ'ըլլայ ձախողութիւն մը եւ ճիշդ այդ պատճառով Իոնեսքօ դուրս կը ձգէ այս վերջինը իր երկերու երկրորդ հատորէն։

Աւելի ետք,«Նկարը» կը հրատարակուի Փաթաֆիզիք գոլէճի «Dossiers Acénonètes»ի մէջ, որուն հովանաւորողներէն ոմանց՝ ինչպէս Րընէ Քլէրի, Րէյմոն Գընոյի, Ժագ Փրէվէրի եւ քանի մը ուրիշ հռչակաւոր pataphysicienներու համարումը կը վայելէր Իոնեսքօ։ Անիկա, Տոնալտ Ուաթսոնի թարգմանութեամբ, 11 եւ 15 Մարտ 1957ին ձայնասփռուեցաւ B.B.C.էն եւ այժմ տեղ կը գրաւէ Իոնեսքոյի թատերական երկերու չորրորդ հատորին մէջ։

«Նկարը» հեղաքրքրական թատերգութիւն մըն է։ Անոր մէջ, առաջին անգամ կ'երեւայ գէր, փարթամ և հարուստ ազնուական մը, որ կ'ուզէ նկարիչէ մը նկար մը գնել։ Անոնք կը սակարկեն գինին շուրջ. Նկարիչը գնորդէն կը խնդրէ աչք մը նետել նկարին վրայ՝ անոր գին մը նշանակելէ առաջ, բայց գէր ազնուականը առաջին վայրկեաններուն կ'ուզէ զանց առնել այդ մանրամասնութիւնը։ Սկիզբը նկարիչը պահանջած էր 500 հազար Փրանք, բայց արագօրէն կը սկսի նուազեցնել իր պահանջը եւ վերջաւորութեան արդէն պատրաստ է համաձայնելու միայն 400 Փրանքի շուրջ։ Այն ատեն միայն ուշիմ վաճառականը կը զիջի նայուածք մը նետել նկարին վրայ, որ կը ներկայացնէր թագուհի մը. յետոյ կտրուկ ձեւով կը սկսի քննադատել զայն ա՛յնքան վայրագօրէն, որ նկարիչը ի վերջոյ կ'աղաչէ անոր առնել նկարը առանց որեւէ վճարումի։ Իրականութեան մէջ, նկարիչը նոյնիսկ կ'ընդունէր որոշ գումար մը վճարել գէր ազնուականին, որ ուզած էր պահել իր նկարը։

Յաջորդ տեսարաններու ընթացքին՝ մուտք կը գործէ գէր ազնուականին պառաւ եւ տգեղ քոյրը, որ կը բախի իր եղբօր կոպիտ վարմունքին։ Սակայն, հազիւ նկարիչը մեկնած՝ կացութիւնը յանկարծօրէն կը յեղաշրջուի։ Քոյրը՝ Ալիս կը դառնայ բռնակալ մը եւ գէր ազնուականը կը վերածուի դպրոցական երկչոտ տղու մը։ Առանձնութեան մէջ՝ գէր ազնուականը, որ զուրկ է գեղեցկութեան ճաշակէն, նկարին դիմաց կ'ունենայ ջղայնութեան նոպաներ։ Ինչպէս Իոնեսքօ կ'ըսէ իր նօթերուն մէջ. «Նկարիչին դերը խաղցող դերասանը պէտք է ըլլայ ա՛յնքան էրոթիք, որքան գրաքննութիւնը կը թոյլատրէ, կամ հանդիսատեսը ի վիճակի է ընկալելու»։ Երբ քոյրը վերստին կ'երեւայ, գէր ազնուականը արդէն վերստացած է տիրական իր նախկին անհատականութիւնը։ Ան իր քրոջ կը սպառնայ զէնքով մը եւ ի վերջոյ կը սպաննէ զայն։ Բայց փոխանակ մեռնելու՝ աղջիկը կը վերափոխուի, դառնալով նկարին չափ գեղեցիկ։ Դրացի տգեղ կին մը կը փափաքի նոյն ձեւով այլափոխուիլ եւ ատրճանակի հարուածներ ստանալով կը յաջողի դառնալ գեղեցիկ իշխանուհի մը։ Նկարիչը կը վերադառ-

digitised by A.R.A.R.@

նայ եւ կը զմայլի վայրագութեամբ գեղեցկութիւն ստեղծելու իր վարպետին կարողութեան վրայ եւ, իր կարգին, հրացանազարկ կ'ըլլայ եւ կը դառնայ գեղեցիկ իշխան մը: Օդին մէջ պարպուած գնդակները սենեակը կը վերածեն պարիկային պալատի մը: Գէր ազնուականը, որ սատանձինն մնացած է ու առաջուան չափ գէր ու տգեղ է դարձեալ, կը հրաւիրէ հանդիսատեսները կրակելու իր վրայ:

Իոնեսքօ «Նկարը» կ'անուանէ «Խամաճիկներու ներկայացում մը», Փանչ եւ Ճիւտի խաղարկութիւն մը: 1955ին տեղի ունեցած այդ փիէսին առաջին բեմադրութեան ձախողութիւնը հեղինակը կը վերագրէ նկարիչը անձնաւորող դերասանին տկար խաղարկութեան: Իր խաղարկութեամբ՝ ան եղած է չափազանց իրապաշտ, արուեստագէտի մը գրամատիքական խօսքերը մերկապարանոց բառերով խարանող քննադատի մը պէս: «Իրականութեան մէջ այդ Փանչ եւ Ճիւտի թատերգութիւնը պէտք է խաղցուի սիրքի տպաւորութիւնը ձգող կարելի միջոցներով, մանկունակ եւ չափազանցեալ արարքներով... Դէպքերու յաջորդականութիւնը պէտք է ըլլայ յանկարծօրէն, բրտօրէն, վայրագօրէն եւ առանց նախապատրաստութեան... Միայն չափազանց պարզացումով կարելի է ըմբռնելի դարձնել այս փարսը, զայն դուրս բերելով իր պղտոր եւ անհասկնալի վիճակէն:

«Ըստ Իոնեսքոյի մատնանշումին, «այլատեսութիւնն (Metamorphosis) է, որ ներկայացուած է... զաւեշտականօրէն՝ քողածածկելու համար լրջութիւնը ծայրայեղ ամչկոտութեան մէջ»:

Դժուար պիտի ըլլար խորանալ այս «խենթուկ» տեսարանի ուսումնասիրութեան մէջ: Ըստ Իոնեսքոյի, այդ թատերգութիւնը կը հարուածէ մէկ կողմէ փղշտացի մարդուն անտաշ վաճառականութիւնը, միախառնուած անոր կծծիութեան եւ զգայնոտութեան եւ, միւս կողմէ՝ իր անթիթեղով կը հարուածէ կարծեցեալ վերադանցութիւնը այս տգեղ աշխարհին՝ «գեղեցկութեան» աշխարհ մը, փրկուած՝ շնորհիւ «արուեստին», ուր կծծիները բանտարկուած են իրենց կծծիութեան մէջ, սպաննելով տգեղութիւնները իրենք իրենց մէջ, փոխարինելով զայն, այդ աշխարհը իրենց կողմէ դաւանուած հակադիր բանով մը: Անոնք պարզապէս կը մտնեն Kitschի աժան աշխարհ մը, կամ օփերէթի աշխարհ մը, որ ունի իշխանուհիներ եւ հմայիչ իշխաններ եւ լի է էրոթիք չափազանցեալ զարդարանքներով: Եթէ խաղի աւարտին, գէր ազնուականը կը խնդրէ հանդիսատեսներէն, որ հրացանազարկ ընեն զինք, ապա ատիկա պարզապէս մէկ տարբեր արտայայտութիւնն է ա՛յն վայրագ վերջաւորութեան, որ ունի «Ճաղատ երգչուհին» անուն թատերգութիւնը, ուր փղշտացի հանդիսատեսը հրացանազարկ ըլլալով՝ դուրս կը դրուի բեմէն: Այստեղ, սակայն, բեմին վրայ եղող փղշտացին կը փափաքի հրացանազարկ ըլլալ ոչ-փղշտացի հանդիսատեսներու կողմէ եւ, ահաւասիկ, թատերգութիւնը ի՛նքը կը մատնանշէ որեւէ նման բանի չնչինութիւնը (futilité): Սպանութիւնն ու վայրագութիւնը ոչ մէկ ատեն առիթ կու տան իրաւ կերպարանափոխութեան մը. աշխարհը կամ մարդոց զգայնութիւնները վայրագութեամբ փոխելու յոյսը բոլորովին անիմաստ է եւ անհեթեթ. փոփոխութիւնները ա՛յնքան յիմարական են, որքան բացառիկ կացութիւնները:

Նոյն ատեն, թատերգութիւնը՝ թատերական կարելիութիւններու ակօսով՝ մեծ փորձառութիւն մըն է. Իոնեսքօ ըսած է հեզ մը.

«Ես անձնապէս պիտի ուզէի բեմ հանել կրիայ մը, զայն վերածել ձիարշաւի մասնակցող ձիու մը, յետոյ գլխարկի մը, երգի մը, վիշապի մը եւ, ի վերջոյ, ջրվէժի մը... Թատրոնին մէջ, մարդ կրնայ յանդգնիլ ընելու որեւէ բան եւ սակայն թատրոնը ցարդ եղած է այն բնագաւառը, ուր փաստօրէն ի գործ դրուած են նուազագոյն յանդգնութիւնները: Ես չեմ հանդուրժեր որեւէ սահ-

digitised by A.R.A.R.@

ման, բացի բնական թէքնիք արգելքներէն: Մարդիկ պիտի ըսեն, որ իմ թատերգութիւններս կրկէսային խաղեր են կամ երաժշտական սրահներու յատուկ բաներ: Ատիկա աւելի լաւ է, սակայն, թո՛ղ կրկէսը ներմուծուի թատրոնին մէջ: Թո՛ղ թատերագիրը մեղադրուի կամայականութեան համար: Այո՛, թատրոնը տեղ մըն է, ուր մարդ կրնայ քմահաճ ըլլալ: Իրականութեան մէջ, կարելի չէ երեւակայութիւնը քմահաճ համարել: Անիկա յայտնակերպող ուժ է... Որոշած եմ չճանչնալ ոչ մէկ ուժ՝ բացի իմ ստեղծագործ երեւակայութենէս, եւ որովհետեւ երեւակայութիւնը կ'ենթարկուի իր սեփական օրէնքներուն, նովին բանիւ փաստ մը եւս կ'ընծայուի մեզի, թէ՝ անիկա ի վերջոյ քմահաճ ոչի՛նչ ունի իր մէջ»:

«Նկարը» *անուն թատերգութեան մասին եղած այս երկու մեկնաբանութիւնները, մէկը՝ փղշտացիներու զգայնութեան վերաբերեալ, միւսը՝ թատրոնը կրկէսային տեսարանի վերածելու արարքին՝ ո՛չ մէկ ձեւով կը համապատասխանեն իրարու: Իոնեսքոյի ամբողջ թատրոնը կը պարունակէ կողք կողքի դրուած երկու չափանիշներ — իր երեւակայական աշխարհի թեւածումներուն մէջ ամբողջական ազատութիւն, եւ, զօրաւոր նիւթ՝ հակաճառութեան: Անոր առաջին թատերգութիւնը՝* «Ճաղատ երգչուհին» *հակաթատերգութիւն մըն էր եւ այդ ձեւով ալ քննադատութիւն մը, ուղղուած՝ ե՛ւ գոյութիւն ունեցող թատրոնին, ե՛ւ մեռած ընկերութեան հասցէին: Նոյն զօրաւոր եւ կռուազան ոգին կը ղեկավարէ Իոնեսքոյի բոլոր իրականութիւնը եւ հետեւաբար մեծ սխալ մը պիտի ըլլար Իոնեսքոն նկատել միայն զուարճացնող միմոս մը:*

*Իոնեսքոյի թատերգութիւնները բարդ միախառնում մըն են բանաստեղծութեան, առասպելի, զառանցանքի եւ մըշակութային ու ընկերային քննադատութեան: Հակառակ անոր, որ Իոնեսքօ կը մերժէ որեւէ բացորոշ ոստիկանական թատերգութիւն* («Ես չեմ ուսուցաներ, վկայութիւն կու տամ: Չեմ նկարագրեր, այլ կը ջանամ բացատրել ինքզինքս»). *ան համոզուած է, որ որեւէ նոր եւ փորձառական* (expérimental) *գրութիւն սահմանուած է պարունակելու հակաճառութեան նիւթ մը...* «Առաջապահ մարդը հակադրուած է գոյութիւն ունեցող դըրութեան մը... Արուեստի ստեղծագործութիւն մը իր շատ նորութիւններով յարձակողական է, անմիջականօրէն յարձակողական. անիկա ուղղուած է հանրութեան, զանգուածին. անիկա զայրոյթ կը պատճառէ իր անսովորութեամբ, որ ինքնին զայրոյթ մըն է արդէն»:

(Նար. 4)

digitised by A.R.A.R.@

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

- ՐԱՖՖԻ ՏԱՐԵԳԻՐՔ, խմբագիր Տաճատ Պօղոսեան, 1970, Թեհրան:
- ԹԱՓԱՌՈՂ ՀՈԳԻՆԵՐ (արձակ էջեր), Լիսի Միւլահեան, 1970, Հալէպ:
- ԼՈՒՍՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ (քերթուածներ), Յակոբ Մանուկեան, 1971, Պէյրութ:


ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԼՈՒՍՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

(Բանաստեղծութիւն)

ԳԻՆ

Լիբանան 3 Լ. ոսկի

Արտասահման 1·5 տոլար

ՀԱՍՑԷ.—

HAGOP MANOUGIAN
Nor - Marash, № 991
Bourj - Hammoud
Lebanon



باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

Յ. ՊԵՂԱՐԴ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ

Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ

† ԵԴ. ՊՕՅԱՃԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

ՏԳ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ



digitised by A.R.A.R.@

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

| | |
|---|---|
| ԼԻԲԱՆԱՆ | 22 Լ. ՈՍԿԻ |
| ԱՐՏԱՍԱՀՄԱՆ | 8 ՏՈԼԱՐ |
| ՀԱՏԱՎԱՃԱՌ | 2 Լ. ՈՍԿԻ |

Վարչութեան հասցէ.—
G. SASSOUNI
Rue Sélim Boustani
Beyrouth - Liban

digitised by A.R.A.R.@